

ԱԶԴԱԳԻՐ

ՏԻՏՂՈՍԱԹԵՐԹ

«ԱՐՑԱՆ ՀԷԿ» ԲԲԸ

թողարկողի ֆիրմային անվանումը

Բաց բաժնետիրական ընկերություն

կազմակերպական-իրավական ձևը

Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն, ք. Ստեփանակերտ, Ա. Սոաբեյանի փող., թիվ 10 հեռ.

(0479) 4-28-58, ֆաքս. (0479) 7-42-14, էլ. փոստ. artsakhhek@mail.ru

գտնվելու վայրը, կապի միջոցները (հեռախոս, ֆաքս, էլեկտրոնային փոստ և այլն)

արժեթղթերի դասը՝

արժեթղթերի ձևը՝

արժեթղթերի քանակը՝

արժեթղթերի անվանական արժեքը (արժույթը)՝

արժեթղթերի ընդհանուր անվանական արժեքը՝

հասարակ (սովորական) անվանական

բաժնետոմս

ոչ փաստաթղթային

3,285,715 հատ

1,000 դրամ

3,285,715,000 դրամ


ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԸ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՉԻ ԿՐՈՒՄ ՍՈՒՅՆ ԱԶԴԱԳՐՈՒՄ ՁԵՏԵՂՎԱԾ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՍԿՈՒԹՅԱՆ ԵՎ ՃՇՏՈՒԹՅԱՆ ՀԱՍԱՐ: ԳՐԱՆՑՄԱՆ ՓԱՍՏԸ ՉԻ ՀԱՎԱՍՏՈՒՄ ՆԵՐԳՐՄԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅՈՒՆԸ:

Մենք՝ ստորագրող անձինք, հավաստիացնում ենք, որ ազդագրում ներառված տեղեկությունները ճշգրիտ և ստույգ են, չեն պարունակում բացթողումներ, որոնք կարող են խեղաթյուրել ազդագրի ամբողջականությունը:

ստորագրող անձինք՝

Վահրամ Բեգլարյան


գլխավոր տնօրեն, տնօրենների խորհրդի նախագահ


(ստորագրություն)

16.04.2009թ.
(ամսաթիվ)

Արթուր Պետրոսյան


տնօրենների խորհրդի անդամ


(ստորագրություն)

16.04.2009թ.
(ամսաթիվ)

Հայկ Ավետիսյան


տնօրենների խորհրդի անդամ


(ստորագրություն)

16.04.2009թ.
(ամսաթիվ)

Արայիկ Դավթյան

գլխավոր հաշվապահ



(ստորագրություն)

16.04.2009թ.
(ամսաթիվ)

Ստորագրությունները հավաստում են.

Վահրամ Բեգլարյան

գլխավոր տնօրեն, տնօրենների խորհրդի նախագահ


(ստորագրություն)

Ազդագրում ներառվող տեղեկությունների ցանկը՝ ամփոփաթեթք, թողարկվող բաժնետոմսերի վերաբերյալ տեղեկություններ, թողարկողի վերաբերյալ տեղեկություններ



ԱԶԴԱԳՐՈՒՄ ՆԵՐԱՈՎՈՂ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿԸ

| | |
|---|-----|
| 1. ԱՄՓՈՓԱԹԵՐԹ | 5 |
| 1.1. Ընդհանուր տեղեկություններ | 5 |
| 1.2. Ապագային վերաբերող արտահայտություններ | 6 |
| 1.3. Թողարկվող բաժնետոմսերի վերաբերյալ տեղեկություններ..... | 6 |
| 1.4. Թողարկողի վերաբերյալ տեղեկություններ..... | 8 |
| 2. ԹՈՂԱՐԿՎՈՂ ԲԱԺՆԵՏՈՄՍԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ | 15 |
| 2.1. Ընդհանուր տեղեկություններ | 15 |
| 2.2. Բաժնետոմսերի գնի վերաբերյալ տեղեկություններ..... | 16 |
| 2.3. Շահութաբաժինների վերաբերյալ տեղեկություններ | 17 |
| 2.4. Տվյալ դասի և ձևի բաժնետոմսերի սեփականատերերի հիմնական իրավունքներն ու պարտականությունները | 18 |
| 2.5. Սահմանափակումների վերաբերյալ տեղեկություններ | 19 |
| 2.6. Տեղեկություններ բաժնետոմսերի տեղաբաշխմանը մասնակցող անձանց և նրանց մասնակցության չափի վերաբերյալ | 19 |
| 2.7. Բաժանորդագրությունների վերաբերյալ տեղեկություններ..... | 21 |
| 2.8. Տեղաբաշխված (տեղաբաշխվող) բաժնետոմսերից ստացվող բաժնետոմսերի սեփականատերերի եկամուտների հարկման կարգի ամբողջական և մանրամասն նկարագիրը | 23 |
| 2.9. Ֆոնդային բորսայում առևտրի թույլտվության վերաբերյալ տեղեկություններ | 24 |
| 2.10. Բաժնետոմսերի նկատմամբ իրավունքների և պարտավորությունների հաշվառումը և (կամ) գրանցումն իրականացնող կազմակերպությունների վերաբերյալ տեղեկություններ | 25 |
| 2.11. Թողարկման նպատակը | 25 |
| 2.12. Նոր թողարկման իրականացման կանխատեսվող ժամանակահատվածը | 25 |
| 3. ԹՈՂԱՐԿՈՂԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ | 26 |
| 3.1. Ընդհանուր տեղեկություններ | 26 |
| 3.2. Թողարկողի գործունեության վերաբերյալ տեղեկություններ..... | 29 |
| 3.3. Թողարկողի ֆինանսական վիճակի և գործունեության արդյունքների վերաբերյալ տեղեկություններ | 54 |
| 3.4. Թողարկողի կառավարման մարմինների և կառավարմանը մասնակցող անձանց վերաբերյալ տեղեկություններ..... | 63 |
| 3.5. Թողարկողի հետ փոխկապակցված անձանց, թողարկողի նշանակալից մասնակիցների վերաբերյալ տեղեկություններ | 71 |
| 4. ՀԵՏԱԳԱՐՁ ԿԱՊ..... | 76 |
| 5. ԿԻՑ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ..... | 77 |
| 5.1. Բաժանորդագրության Հայտի օրինակ | 78 |
| 5.2. ԼՂՀ Մարտակերտի շրջանի քարտեզը և նախատեսվող ՀԷԿ-երի տեղակայումը | 80 |
| 5.3. ԼՂՀ տնտեսության համառոտ նկարագիրը..... | 81 |
| 5.4. Ընկերության կանոնադրությունը..... | 84 |
| 5.5. Ընկերության Ֆինանսական հաշվետվությունների աուդիտի եզրակացության պատճեն | 109 |
| 5.6. Ներդրումային ծառայություններ մատուցող անձանց հետ կնքած պայմանագրերը | 111 |
| 5.7. Ընկերության Ֆինանսական Հաշվետվությունները..... | 131 |

ԱԶԳԱԳՐՈՒՄ ՆԵՐԱՌՎՈՂ ԱՂՅՈՒՍԱԿՆԵՐԻ ՑԱՆԿԸ

| | |
|--|----|
| Աղյուսակ 1. Ընկերության կողմից վճարվելիք դիվիդենդի կանխատեսումները | 17 |
| Աղյուսակ 2. ԼՂՀ-ում արտասահմանյան ներդրումների համար հարկերից ազատվելու դեպքերը..... | 23 |
| Աղյուսակ 3. Ընկերության կողմից արտադրված էլեկտրաէներգիայի ծավալները և վաճառքի սակագներն ըստ ամիսների..... | 34 |
| Աղյուսակ 4. ԼՂՀ Էլեկտրաէներգիայի հաշվեկշիռը, մլն կվտ/ժամ | 38 |
| Աղյուսակ 5. Գործող սակագները և դրանց կանխատեսումները, դրամ կվտ/ժամ..... | 43 |
| Աղյուսակ 6. Ընկերության հիմնական մատակարարները և մատակարարման արժեքները 01.01.2008թ.-31.10.2008թ..... | 43 |
| Աղյուսակ 7. Ընկերության այն պայմանագրերը, որոնք գերազանցում են ակտիվների հաշվեկշռային արժեքի 5 տոկոսը..... | 44 |
| Աղյուսակ 8. Ընկերության գործունեության մեջ ներգրավված հիմնական գույքի նկարագիրը | 46 |
| Աղյուսակ 9. Ընկերության գույքի կազմը և կառուցվածքը 30.09.2008թ. դրությամբ..... | 47 |
| Աղյուսակ 10. Ընկերության կողմից կատարված ներդրումները, 01.01.2008-30.09.2008թթ. | 47 |
| Աղյուսակ 11. Էլեկտրաէներգիայի արտադրության կանխատեսումներ, մլն. կվտ/ժամ | 50 |
| Աղյուսակ 12. Նախատեսվող ՀԷԿ-երի հիմնական տեխնիկական ցուցանիշները..... | 52 |
| Աղյուսակ 13. Մատաղիս 1 ՀԷԿ-ի կառուցման նախահաշիվը, հազ. դրամ..... | 53 |
| Աղյուսակ 14. Մատաղիս 2 ՀԷԿ-ի կառուցման նախահաշիվը, հազ. դրամ..... | 53 |
| Աղյուսակ 15. Թրդի 1 ՀԷԿ-ի կառուցման նախահաշիվը, հազ. դրամ | 54 |
| Աղյուսակ 16. Երեք ՀԷԿ-երի կառուցման նախահաշիվների ամփոփումը, հազ. դրամ..... | 54 |
| Աղյուսակ 17. Ընկերության գործունեության արդյունքների հիմնական ցուցանիշները, հազ. դրամ..... | 55 |
| Աղյուսակ 18. Ընկերության եկամտաբերության գործակիցները..... | 55 |
| Աղյուսակ 19. Ընկերության պարտավորությունների կազմը և կառուցվածքը..... | 56 |
| Աղյուսակ 20. Սեփական կապիտալի կազմը, հազ. դրամ..... | 57 |
| Աղյուսակ 21. Նշված ժամանակահատվածների համար էլեկտրաէներգիայի արտադրման կանխատեսումներ, մլն. կվտ/ժամ..... | 58 |
| Աղյուսակ 22. Ընկերության հասույթի կանխատեսվող մեծությունները..... | 59 |
| Աղյուսակ 23. Ընկերության արտադրանքի ինքնարժեքի կանխատեսումները..... | 60 |
| Աղյուսակ 24. Ընկերության վարչական ծախսումների կանխատեսումները | 61 |
| Աղյուսակ 25. Ընկերության գործառնական ծախսերի կանխատեսումները..... | 61 |
| Աղյուսակ 26. Ընկերության կանխատեսվող եկամուտների մասին հաշվետվությունը | 62 |
| Աղյուսակ 27. ԼՂՀ հիմնական մակրոտնտեսական ցուցանիշները..... | 81 |

ԱԶԴԱԳՐՈՒՄ ՆԵՐԱՌՎՈՂ ԳԾԱՆԿԱՐՆԵՐԻ ՑԱՆԿԸ

| | |
|--|----|
| Գծանկար 1. Հայաստանի կապիտալի շուկայի հիմնական ցուցանիշները..... | 24 |
| Գծանկար 2. Սարսանգի ՀԷԿ-ի գործունեության հիմնական ցուցանիշները 1994-2007թթ. | 33 |
| Գծանկար 3. Սարսանգ ՀԷԿ-ի հիմնական ցուցանիշները | 38 |
| Գծանկար 4. 2006 թ. զարգացող և անցումային երկրների էլեկտրաէներգիայի օգտագործումը | 39 |
| Գծանկար 5. Էլեկտրաէներգիայի սպառման կառուցվածքը, %..... | 40 |
| Գծանկար 6. Ընկերության կառավարման մարմինների սխեմատիկ կառուցվածքը | 68 |
| Գծանկար 7. ԼՂՀ արդյունաբերության կառուցվածքը..... | 82 |

1. ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

1.1. Ընդհանուր տեղեկություններ

- 1.1.1. Ամփոփաթերթում հակիրճ ներկայացված է Ազդագրում ներառված ամենաառաջնային տեղեկատվությունը:
- 1.1.2. Ամփոփաթերթը դիտվում է որպես Ազդագրի ներածական համառոտ նկարագրություն:
- 1.1.3. Ներդրողը առաջարկվող բաժնետոմսերում ներդրում անելու որոշումը կայացնելիս պետք է ընթերցի ամբողջ Ազդագիրը՝ ներդրողի որոշումը պետք է հիմնված լինի ամբողջական Ազդագրի վրա:
- 1.1.4. Ամփոփաթերթի կազմման համար պատասխանատու անձն ամփոփաթերթում պարունակվող տեղեկատվության ոչ ամբողջական կամ ապակողմնորոշիչ լինելու համար (այդ թվում՝ թարգմանությանը վերաբերող մասով) կրում է քաղաքացիական պատասխանատվություն, եթե այն ոչ ամբողջական կամ ապակողմնորոշիչ է Ազդագրի մյուս մասերի հետ դիտարկելու դեպքում:
- 1.1.5. Ներդրողը կարող է ձեռք բերել Ազդագրին կից ներկայացվող փաստաթղթերը փաստաթղթային տարբերակով «ԱՐՑԱԽ ՀԷԿ» ԲԲԸ (այսուհետ՝ Ընկերություն) գտնվելու վայրում, իսկ էլեկտրոնային տարբերակով՝ Ընկերության, ինչպես նաև Տեղաբաշխողի ինտերնետի տնային էջերում՝ www.artsakhhpp.com, www.armenbrok.com:
- 1.1.6. Ընկերությունը լիովին պատասխանատվություն է կրում սույն Ազդագրում ներառված տեղեկությունների համար և կատարել է բոլոր անհրաժեշտ միջոցառումները հավաստիացնելու համար, որ Ազդագրում ներառված տեղեկությունները, ըստ Ընկերության տվյալների, համապատասխանում են փաստերին և չեն պարունակում ոչ մի բացթողում, որը կարող է ազդել Ընկերության գործունեության վրա:
- 1.1.7. Ընկերության կողմից թողարկվող արժեթղթերի տեղաբաշխումն իրականացվում է «ԱՐՄԵՆԲՐՈԿ» ԲԲԸ (այսուհետ՝ Տեղաբաշխող) կողմից, որը ձևավորել է տեղաբաշխման խումբ: Ընկերությունից և Տեղաբաշխողից, ինչպես նաև տեղաբաշխման խմբի անդամներից բացի ոչ մի անձ լիազորված չի տալ որևէ տեղեկատվություն կամ ներկայացնել արժեթղթերի այս առաջարկը որևէ տեղ: Բացի այդ ոչ մի անձ լիազորված չէ նաև սույն Ազդագրում ներառված տեղեկություններից բացի այլ տեղեկություններ տրամադրել որևէ մեկին և եթե տեղեկությունները տրամադրվել են կամ առաջարկը ներկայացվել է, ապա այդ տեղեկատվությունը և/կամ այդ ներկայացումը չպետք է դիտարկվի ներդրողի կողմից:
- 1.1.8. Սույն Ազդագիրը չի հանդիսանում արժեթղթերի վաճառքի առաջարկ կամ արժեթղթերի գնման միջնորդություն այն տարածաշրջաններում, որտեղ այդպիսի առաջարկ անելը կամ միջնորդություն ներկայացնելը անօրինական կհամարվեր, կամ անձի, ում նման առաջարկ անելը կամ միջնորդություն ներկայացնելը անօրինական կհամարվեր տվյալ տարածքի օրենսդրությանը համապատասխան:

1.2. Ապագային վերաբերող արտահայտություններ

- 1.2.1. Սույն Ազդագիրը պարունակում է որոշակի արտահայտություններ, գնահատականներ և կանխատեսումներ Ընկերության ապագա գործունեության վերաբերյալ: Այնպիսի արտահայտությունները, ինչպիսիք են «կարող է», «պետք է», «սպասվում է», «գնահատվում է», «կանխատեսվում է», «ենթադրվում է» կարող են որակվել, որպես ապագային վերաբերվող: Դրանք չեն կարող դիտարկվել որպես փաստեր, քանի որ չեն հանդիսանում պատմական կամ ընթացիկ իրադարձություններ: Այս արտահայտությունները, գնահատականները և արտացոլումները վերաբերում են Ընկերության գործունեության հնարավոր զարգացման տարբեր մոտեցումներին, որոնք ներառվել են բացատրական և նկարագրողական նպատակներով:
- 1.2.2. Ապագային վերաբերող արտահայտությունները իրենց բնույթով պարունակում են որոշակի ռիսկեր և անճշտություններ, ինչպես ընդհանուր բնույթի, այնպես էլ յուրահատուկ, և բացի այդ գոյություն ունեն ռիսկեր, որ Ազդագրում տեղ գտած կանխատեսումները, ենթադրությունները և դատողությունները կարող են չիրականանալ: Այս ռիսկերը, անորոշությունները և այլ գործոնները ընդգրկված են «Ռիսկային գործոններ» բաժնում և Ազդագրի այլ բաժիններում: Ներդրողները պետք է լիովին գիտակցեն, որ մի շարք կարևոր գործոններ կարող են հանգեցնել նրան, որ Ընկերության փաստացի գործունեության արդյունքները էականորեն տարբերվեն ապագային վերաբերող արտահայտություններում նշված պլաններից, գնահատականներից և կանխատեսումներից:
- 1.2.3. Ազդագրում ներառված ցանկացած կանխատեսում կամ ապագայի վերաբերող արտահայտություն ներդրողները չպետք է դիտարկեն որպես իրավական, բիզնես կամ հարկային խորհրդատվություն: Նախքան առաջարկվող արժեթղթերի գնման վերաբերյալ որոշում կայացնելը, ներդրողները պետք է մանրամասն ուսումնասիրեն սույն Ազդագիրը, և առաջարկին վերաբերող հարցերի մասին խորհրդակցեն իրենց իրավաբանների, բիզնես և հարկային խորհրդատուների հետ:

1.3. Թողարկվող բաժնետոմսերի վերաբերյալ տեղեկություններ

- 1.3.1. Ընկերության կողմից թողարկվող բաժնետոմսերը հասարակ (սովորական), անվանական, ոչ փաստաթղթային բաժնետոմսեր են:
- 1.3.2. Թողարկման (առաջարկի) ընդհանուր ծավալը կազմում է 3,285,715,000 (երեք միլիարդ երկու հարյուր ութսունհինգ միլիոն յոթ հարյուր տասնհինգ հազար) ՀՀ դրամ (այսուհետ՝ դրամ)՝ հաշվարկված անվանական արժեքով կամ 3,450,000,750 (երեք միլիարդ չորս հարյուր հիսուն միլիոն յոթ հարյուր հիսուն) դրամ՝ հաշվարկված տեղաբաշխման գնով: Տեղաբաշխվող (վաճառվող) բաժնետոմսերի քանակն է 3,285,715 (երեք միլիոն երկու հարյուր ութսունհինգ հազար յոթ հարյուր տասնհինգ) հատ:
- 1.3.3. Մեկ բաժնետոմսի անվանական արժեքը կազմում է 1,000 (մեկ հազար) դրամ:
- 1.3.4. Մեկ բաժնետոմսի տեղաբաշխման գինը՝ 1,050 (մեկ հազար հիսուն) դրամ:

- 1.3.5. Բաժնետոմսերի տեղաբաշխումը կսկսվի ՀՀ Կենտրոնական Բանկի կողմից սույն Ազդագրի գրանցմանը հաջորդող 3-րդ աշխատանքային օրը և կտևի 4 (չորս) ամիս: Տեղաբաշխման ժամկետում թողարկված բաժնետոմսերը ամբողջությամբ վաճառվելու (տեղաբաշխվելու) դեպքում արժեթղթերի տեղաբաշխման գործընթացը համարվում է ավարտված այդ պահից:
- 1.3.6. Բաժնետոմսերի տեղաբաշխումը պայմանագրի հիման վրա կազմակերպվում է մասնագիտացված կազմակերպության՝ «ԱՐՄԵՆԲՐՈԿ» բաց բաժնետիրական ընկերության կողմից (գրանցված է Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի կողմից 04.11.2008 թ., գրանցման համար՝ 10, գրանցման վկայական՝ թիվ 10, Ներդրումային ծառայությունների մատուցման լիցենզիա ՆԸ թիվ 0010, գտնվելու վայրը՝ ՀՀ, ք. Երևան, Տիգրան Մեծի պողոտա, 32/1 շենք, թիվ 8 տարածք): Տեղաբաշխողը թողարկողի կողմից իրեն տրված իրավասությունների շրջանակներում ձևավորել է տեղաբաշխման խումբ: Տեղաբաշխման խմբի անդամներն են «ԱՐՄԵՆԲՐՈԿ» ԲԲԸ-ն՝ որպես գլխավոր տեղաբաշխող և «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ն (գրանցված է ՀՀ Կենտրոնական Բանկի կողմից 07.10.2008թ., գրանցման համար՝ 84, գրանցման վկայական թիվ 0476, բանկային գործունեության լիցենզիա N84, գտնվելու վայրը՝ ՀՀ, ք. Երևան 0010, Խանջյան 13/2, հեռ. 52-95-93)՝ որպես տեղաբաշխման խմբի անդամ:
- 1.3.7. Տեղաբաշխումն իրականացվում է բաց բաժանորդագրության միջոցով, չերաշխավորված եղանակով:
- 1.3.8. Բաժնետոմսերի դիմաց վճարումները կատարվում են մինչև բաժանորդագրման պահը՝ միանվագ կարգով և ամբողջությամբ՝ ցանկացած բանկում, և կուտակվում են «Արդշինինվեստբանկ» ՓԲԸ-ում և «Արցախբանկ» ՓԲԸ-ում Տեղաբաշխողի կողմից այդ նպատակով բացված հետևյալ բանկային հաշիվներին. «Արդշինինվեստբանկ»՝ 2472300356740040; «Արցախբանկ»՝ 223005000169:
- 1.3.9. Բաժանորդագրվող բաժնետոմսերի դիմաց վճարումները կատարվում են միայն ՀՀ դրամով: Այն ներդրողները, որոնց ակտիվները գնանշված են այլ արժույթով, կարող են կատարել փոխանցումներ «Արդշինինվեստբանկ» ՓԲԸ-ում Տեղաբաշխողի կողմից այդ նպատակով բացված հետևյալ արտարժույթային հաշիվներին:
- ԱՄՆ Դոլար (USD) - 2472300356740050
Եվրո (EUR) - 2472300356740060
Փոխանցված արտարժույթը կփոխարկվի ՀՀ դրամի «Արդշինինվեստբանկ» ՓԲԸ կողմից սահմանած փոխարժեքով:
- 1.3.10. Բաժանորդագրությանը կարող են մասնակցել Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը, ինչպես նաև ԼՂՀ ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ, ինչպես իրավաբանական, այնպես էլ ֆիզիկական անձինք:
- 1.3.11. Ընկերության բաժնետոմսերի նկատմամբ իրավունքների և պարտավորությունների գրանցումը և հաշվառումն իրականացնում է «Հայաստանի Կենտրոնական Դեպոզիտարիա» ԲԲԸ-ն, ՀՀ, ք. Երևան, Մ. Սկրտչյան 5բ, հեռ. (010) 56-64-46:

1.3.12. Ընկերությունը նախատեսում է բաժնետոմսերի առաջնային հրապարակային տեղաբաշխումից հավաքագրած զուտ միջոցներն ուղել երեք հիդրոէլեկտրակայանների՝ Մատաղիս 1, Մատաղիս 2, Թրդի 1, կառուցմանը: Այդ ՀԷԿ-երը՝ կառուցվելու են Թարթառ գետի և Թարթառ գետից Թրդի գետը թափվող ջրատարի վրա:

1.4. Թողարկողի վերաբերյալ տեղեկություններ

1.4.1. Ընդհանուր տեղեկություններ.

1.4.2. Ընկերությունը հիմնադրվել է ԼՂՀ կառավարության 2007թ. նոյեմբերի 1-ի No 484 որոշմամբ (պետական գրանցում է ստացել 2007թ.-ի դեկտեմբերի 12-ին «ԱՐՑԱԽ ՀԷԿ» անվանումով և «փակ բաժնետիրական ընկերություն» կազմակերպական-իրավական ձևով), որի համաձայն ընկերության 100% բաժնետոմսերի սեփականատեր է ԼՂՀ-ը ի դեմս կառավարության:

«ԱՐՑԱԽ ՀԷԿ» փակ բաժնետիրական ընկերությունը ստեղծվել է «ԱՐՑԱԽԷՆԵՐԳՈ» փակ բաժնետիրական ընկերության (գրանցված Լեռնային Ղարաբաղի Հանրապետության արդարադատության նախարարության ռեգիստրի բաժնի կողմից 28.02.2005 թ., գրանցման թիվ՝ 443.120.20892, վկայական՝ 001350) առանձնացման միջոցով վերակազմակերպման արդյունքում և հանդիսանում է նրա իրավահաջորդը՝ բաժանիչ (առանձնացման) հաշվեկշիռն համապատասխան: «ԱՐՑԱԽԷՆԵՐԳՈ» ՓԲԸ բացի էլեկտրաէներգիայի շուկայի օպերատոր լինելուց, նաև հանդիսանում էր ԼՂՀ-ում միակ ՀԷԿ-ի՝ «Սարսանգ ՀԷԿ» սեփականատերը: Այսպիսով, «Արցախ ՀԷԿ» ՓԲԸ-ն դարձավ «ԱՐՑԱԽԷՆԵՐԳՈ»-ի իրավահաջորդը՝ էլեկտրաէներգիայի արտադրության մասով:

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2008 թ. մայիսի 13-ի «ԱՐՑԱԽ ՀԷԿ» փակ բաժնետիրական ընկերությունը վերակազմակերպելու մասին» թիվ 360 որոշման համաձայն «ԱՐՑԱԽ ՀԷԿ» փակ բաժնետիրական ընկերությունը (գրանցված Լեռնային Ղարաբաղի Հանրապետության արդարադատության նախարարության ռեգիստրի բաժնի կողմից 12.12.2007 թ., գրանցման թիվ՝ 443.120.11328, վկայական՝ 02 Ա 001980) վերակազմակերպվել է վերակազմավորման միջոցով:

2008 թ.-ի հունիսի 9-ից ընկերությունը կրում է «ԱՐՑԱԽ ՀԷԿ» բաց բաժնետիրական ընկերություն» ֆիրմային անվանումը և կազմակերպական-իրավական ձևը:

1.4.3. Ընկերության գտնվելու վայրը և իրավաբանական (փոստային) հասցեն է՝ ԼՂՀ, ք. Ստեփանակերտ, Ա. Առաքելյան փող., թիվ 10:

1.4.4. Ընկերության կանոնադրական կապիտալը 5,100,000,000 (հինգ միլիարդ հարյուր միլիոն) դրամ է, որը կազմված է 5,100,000 (հինգ միլիոն հարյուր հազար) հատ հասարակ (տվորական) անվանական ոչ փաստաթղթային բաժնետոմսից: Մեկ բաժնետոմսի անվանական արժեքը կազմում է 1,000 (մեկ հազար) դրամ:

- 1.4.4.1. Ընկերության կողմից թողարկված բոլոր 5,100,000 (հինգ միլիոն հարյուր հազար) բաժնետոմսերը տեղաբաշխված են, սեփականության իրավունքով պատկանում են Լեռնային Ղարաբաղի Հանրապետությանը և լրիվ (100 %) վճարված են նրա կողմից:
- 1.4.4.2. Ընկերությունը չունի տեղաբաշխված արտոնյալ բաժնետոմսեր:

1.4.5. Թողարկողի գործունեության վերաբերյալ տեղեկություններ

- 1.4.5.1. Ընկերությունը ունի Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության լիցենզիա (թիվ 0001): Լիցենզիան տրված է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի կողմից 2008 թ. մարտի 20-ին: Լիցենզիան տրված է 15 տարի ժամկետով:
- 1.4.5.2. Ընկերության գործունեության հիմնական ուղղությունը էլեկտրաէներգիայի արտադրությունն ու վաճառքն է, որն էլ հանդիսանում է շահույթի ստացման միակ աղբյուրը: Էլեկտրաէներգիայի արտադրությունն Ընկերությունն իրականացնում է Սարսանգի հիդրոէլեկտրակայանի միջոցով: Արտադրված էլեկտրաէներգիան Ընկերությունը ֆիքսված սակագնով վաճառում է ԼՂՀ Էլեկտրաէներգիայի շուկայի միակ օպերատոր՝ «Արցախէներգո» ՓԲԸ-ին, որն ունի ԼՂՀ տարածքում էլեկտրաէներգիայի փոխանցման և բաշխման լիցենզիա: Վաճառքը իրականացվում է համաձայն առավաճառքի պայմանագրի, որը գրանցված է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի կողմից (այսուհետ՝ Հանձնաժողով): Վաճառքի սակագները սահմանվում են Հանձնաժողովի կողմից:
- 1.4.5.3. Ընկերության հիմնական ակտիվը Սարսանգի հիդրոէլեկտրակայանն է, որը կառուցվել է 1976թ. ԼՂՀ հիմնական գետի՝ Թարթառի վրա, և համարվում է նախկին Սովետական Միության լավագույն և սարքավորումներով առավելագույնս հագեցած ՀԷԿ-երից մեկը: Սարսանգի ՀԷԿ-ը ԼՂՀ էներգիայի աղբյուրներից ամենախոշորն է:
- 1.4.5.4. Չնայած Ընկերությունը, ստեղծվելով 2007թ. նոյեմբերի 1-ին, ունի գործունեության բավականին սահմանափակ պատմություն, Սարսանգ ՀԷԿ-ը ունի էլեկտրաէներգիայի արտադրության ավելի քան երեսունամյա փորձ:
- 1.4.5.5. Սարսանգ ՀԷԿ-ը ԼՂՀ տարածքում էլեկտրաէներգիա արտադրող միակ միավորն է: Այն արտադրում է միջինում տարեկան 90-140 մլն կվտ/ժամ էլեկտրաէներգիա, որը կազմում է ԼՂՀ էլեկտրաէներգիայի նկատմամբ ներկայիս պահանջարկի մոտ 40-60%-ը (2007թ. տվյալներով ԼՂՀ էլեկտրաէներգիայի սպառումը կազմել է 225 մլն կվտ/ժամ): Պահանջարկի մնացած մասը բավարարվում է Հայաստանից ներմուծած էլեկտրաէներգիայի հաշվին:

1.4.5.6. Ստորև բերված աղյուսակն ամփոփում է Ընկերության կողմից արտադրված էլեկտրաէներգիայի հիմնական բնութագրիչներն ըստ ամիսների:

Ընկերության կողմից արտադրված էլեկտրաէներգիայի ծավալները և վաճառքի սակագներն ըստ ամիսների

| Տարին | Ամիսը | Գինը (դրամ/կվտժ, առանց ԱԱՀ) | Ծավալը (կվտ/ժ) |
|-------|----------------------|-----------------------------|-------------------|
| 2007 | Նոյեմբեր | 3 | 12,727,600 |
| | Դեկտեմբեր | 3 | 11,932,000 |
| | Ընդամենը 2007 | | 24,659,600 |
| 2008 | Հունվար | 3 | 10,836,400 |
| | Փետրվար | 3 | 11,212,400 |
| | Մարտ | 3 | 10,202,800 |
| | Ապրիլ | 3 | 1,400,400 |
| | Ապրիլ | 3.5 | 1,447,200 |
| | Մայիս | 3.5 | 5,339,200 |
| | Հունիս | 3.5 | 5,886,971 |
| | Հուլիս | 3.5 | 3,000,000 |
| | Օգոստոս | 3.5 | 5,300,000 |
| | Սեպտեմբեր | 3.5 | 3,500,000 |
| | Հոկտեմբեր | 3.5 | 6,000,000 |
| | Նոյեմբեր | 9 | 14,000,000 |
| | Դեկտեմբեր * | 9 | 13,000,000 |
| | Ընդամենը 2008 | - | 91,125,371 |

Աղբյուրը՝ «Արցախ ՀԷԿ» ԲԲԸ

* «Արցախ ՀԷԿ» ԲԲԸ գնահատականներ

Ընկերության ստեղծման պահից մինչև ապրիլ ընկած ժամանակահատվածը արտադրված էլեկտրաէներգիան վաճառվում էր Արցախէներգո ընկերությանը 3 դրամ/կվտ/ժամ (առանց ԱԱՀ) ֆիքսված սակագնով: Համաձայն ԼԳՀ հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի 2008թ. Ապրիլի 20-ի որոշման Արցախ ՀԷԿ-ի համար սահմանվել 3.5 դրամ կվտ/ժամ սակագինը: Սակայն ելնելով Ընկերության հետագա գործունեության իրականացման ռազմավարությունից և մրցունակության բարելավման նպատակներից Հանձնաժողովը, Ընկերության դիմումի համաձայն վերանայել է գործող սակագները և 2008թ. հոկտեմբերի 1-ի թիվ 51Ա Որոշմամբ սահմանել է նոր սակագին՝ 9 դրամ կվտ/ժամ, որը սկսել է գործել 2008թ. Նոյեմբերի 1-ից:

1.4.6. Թողարկողի ֆինանսական վիճակը և գործունեության արդյունքները

1.4.6.1. Ընկերության ստեղծման պահից Ընկերության ֆինանսական վիճակի և գործունեության արդյունքների ցուցանիշները ներկայացված են ստորև բերված աղյուսակում:

- 1.4.6.2. Տվյալ աղյուսակում և Ազդագրի այլ բաժիններում բերված Ընկերության ֆինանսական գործունեության ցուցանիշների վերլուծության ժամանակ անհրաժեշտ է հաշվի առնել, որ 2007թ. տարեկան տվյալներն ամփոփում են միայն Ընկերության գործունեության արդյունքները 2007թ. նոյեմբեր և դեկտեմբեր ամիսներին, քանի որ Ընկերությունը սկսել է իր գործունեությունը 2007թ. նոյեմբեր ամսից:

Ընկերության գործունեության արդյունքների հիմնական ցուցանիշները, հազ. դրամ

| | 31.12.2007թ. | 30.09.2008թ. |
|-----------------------------------|---------------|----------------|
| Հասույթ | 36,989 | 188,511 |
| Համախառն շահույթ | 6,835 | 18,745 |
| Համախառն շահույթի մարժա | 18.48% | 9.94% |
| Գործառնական շահույթ | 3,465 | -18,984 |
| Գործառնական շահույթի մարժա | 9.37% | -10.07% |
| Չուտ շահույթ | 3,230 | -22,586 |
| Չուտ շահույթի մարժա | 8.73% | -11.98% |

Աղբյուրը՝ «Արցախ ՀԷԿ» ԲԲԸ

- 1.4.6.3. Ընկերության գործունեության եկամտաբերության գործակիցները ներկայացված են ստորև բերված աղյուսակում: Սույն գործակիցների վերլուծության ժամանակ պետք է հաշվի առնել, որ 2007թ. տարեկան շահութաբերության գործակիցների հաշվարկի հիմքում ընկած է միայն նոյեմբեր և դեկտեմբեր ամսվա գործունեությունից ստացված զուտ շահույթի մեծությունը, իսկ 2008թ. երրորդ եռամսյակի գործակիցների հիմքում՝ ինն ամսվա շահույթի մեծությունը:

Ընկերության եկամտաբերության գործակիցները

| | 31.12.2007թ. | 30.09.2008թ. |
|--|--------------|--------------|
| Ակտիվների եկամտաբերության գործակից, % | 6.41% | -0.40% |
| Մեփական կապիտալի եկամտաբերության գործակից, % | 8.22% | -0.44% |

Աղբյուրը՝ «Արցախ ՀԷԿ» ԲԲԸ

- 1.4.6.4. Ընկերության ընթացիկ պարտավորությունները 2008թ. երրորդ եռամսյակի վերջին օրվա դրությամբ կազմել են 500,253 հազ. դրամ: Ընկերությունը չունի ոչ ընթացիկ պարտավորություններ: Ստորև բերված աղյուսակում ներկայացված է Ընկերության պարտավորությունների կազմը և կառուցվածքը:

Ընկերության պարտավորությունների կազմը և կառուցվածքը


| | 30.12.2007թ. | | 30.09.2008թ. | |
|---|---------------|---------------|----------------|---------------|
| | հազ. դրամ | % | հազ. դրամ | % |
| Ընթացիկ պարտավորություններ | | | | |
| Կարճաժամկետ բանկային վարկեր | 0 | 0.0% | 413,281 | 82.6% |
| Կրեդիտորական պարտքեր գնումների գծով | 2,623 | 23.7% | 6,981 | 1.4% |
| Ստացված ընթացիկ կանխավճարներ | 0 | 0.0% | 70,000 | 14.0% |
| Կրեդիտորական պարտքեր բյուջեին | 6,363 | 57.6% | 1,333 | 0.3% |
| Կրեդիտորական պարտքեր պարտադիր սոցիալական ապահովագրության գծով | 944 | 8.5% | 1,845 | 0.4% |
| Կրեդիտորական պարտքեր աշխատավարձի և աշխատակիցների այլ կարճաժամկետ հատուցումների գծով | 1,117 | 10.1% | 6,661 | 1.3% |
| Այլ կրեդիտորական պարտքեր | 0 | 0.0% | 152 | 0.0% |
| Ընդամենը ընթացիկ պարտավորություններ | 11,047 | 100.0% | 500,253 | 100.0% |
| Ոչ ընթացիկ պարտավորություններ | | | | |
| Երկարաժամկետ բանկային վարկեր | 0.0 | 0.00 | 0.0 | 0.00 |
| Հետաձգված հարկային պարտավորություններ | 0.0 | 0.00 | 0.0 | 0.00 |
| Այլ ոչ ընթացիկ պարտավորություններ | 0.0 | 0.00 | 0.0 | 0.00 |
| Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ | 0.0 | 0.00 | 0.0 | 0.00 |
| Ընդամենը պարտավորություններ | 11,047 | 100.0% | 500,253 | 100.0% |

Աղբյուրը՝ «Արցախ ՀԷԿ» ԲԲԸ

1.4.7. Թողարկողի կառավարման մարմինները և կառավարմանը մասնակցող անձինք

- 1.4.7.1. Ընկերության կառավարման մարմիններ են Բաժնետերերի Ընդհանուր Ժողովը (այսուհետ՝ ԲԸԺ), Տնօրենների Խորհուրդը (այսուհետ՝ Խորհուրդ), Գլխավոր Տնօրենը և Վերստուգողը:
- 1.4.7.2. Ընկերության կառավարման մարմինների կառուցվածքը ներկայացված է ստորև.

Ընկերության կառավարման մարմինների սխեմատիկ կառուցվածքը



- 1.4.7.3. Ընկերության տնօրենների խորհրդի կազմն է.
- | | | |
|------------------|---|--|
| Վահրամ Բեգլարյան | - | տնօրենների խորհրդի նախագահ, գլխավոր տնօրեն |
| Արթուր Պետրոսյան | - | տնօրենների խորհրդի անդամ |
| Հայկ Ավետիսյան | - | տնօրենների խորհրդի անդամ |

1.4.7.4. Ընկերության վերստուգողն է Վաղարշակ Մանուկյանը:

1.4.8. Թողարկողի հետ փոխկապակցված անձինք, նշանակալից մասնակիցները

- 1.4.8.1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետությանը ի դեմս ԼՂՀ կառավարությանն առընթեր արտադրական ենթակառուցվածքների վարչության պետ Վալերի Բալայանի, պատկանում է թողարկողի բաժնային արժեթղթերի 100 %-ը:
- 1.4.8.2. Զանի որ ԼՂՀ-ը ի դեմս ԼՂՀ կառավարությանն առընթեր արտադրական ենթակառուցվածքների վարչության պետ Վալերի Բալայանի հանդիսանում է Ընկերության բաժնետոմսերի 100%-ի սեփականատեր, վերջինս Ընկերության որոշումների վրա էականորեն ազդելու փաստացի հնարավորություն ունի՝ Ընկերության ԲԸԺ բոլոր իրավասությունների շրջանակներում:
- 1.4.8.3. Վալերի Բալայանը վերջին 3 տարիներին թողարկողի կառավարման մարմիններում որևէ պաշտոն չի զբաղեցրել:
- 1.4.8.4. Ընկերության հետ փոխկապակցված իրավաբանական անձ է հանդիսանում «ԱՐՑԱԽԷՆԵՐԳ-Ո» փակ բաժնետիրական ընկերությունը, քանի որ երկու ընկերություններում էլ բաժնետոմսերի կառավարման լիազորությունները վերապահված են Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր արտադրական ենթակառուցվածքների վարչությանը: «ԱՐՑԱԽԷՆԵՐԳ-Ո» ՓԲԸ գտնվելու վայրն է՝ ԼՂՀ, ք. Ստեփանակերտ, Սասունցի Դավթի փող., թիվ 64: Այն իրականացնում է էլեկտրաէներգիայի փոխանցում և բաշխում (գնում է էլեկտրաէներգիան արտադրողներից և վաճառում վերջնական սպառողին): «ԱՐՑԱԽԷՆԵՐԳ-Ո» ՓԲԸ-ն «ԱՐՑԱԽ ՀԷԿ» ԲԲԸ բաժնային արժեթղթեր չունի, ուստի այն «ԱՐՑԱԽ ՀԷԿ» ԲԲԸ որոշումները կանխորոշելու փաստացի հնարավորություն ևս չունի: Ընկերությունները չունեն ընդհանուր տնտեսական շահեր:

1.4.9. Թողարկողի թողարկված արժեթղթերի վերաբերյալ տեղեկություններ

- 1.4.9.1. Ընկերության կողմից թողարկված արժեթղթերն են բաժնետոմսերը: Տեղեկություններ դրանց մասին.
- ✓ Բաժնետոմսերը հասարակ (սովորական) անվանական են, ոչ փաստաթղթային:
 - ✓ Ընկերության թողարկված բաժնետոմսերը կարգավորվող շուկայում առևտրին թույլատրված չեն:

- ✓ Ընկերության թողարկած և տեղաբաշխած բաժնետոմսերի ընդհանուր ծավալը՝ 5,100,000,000 դրամ է, քանակը՝ 5,100,000 հատ:
 - ✓ Ընկերության բաժնետոմսերը մարման ժամկետ չունեն:
- 1.4.9.2. Ընկերության ստեղծման պահից Ընկերության արժեթղթերի վաճառք ֆոնդային բորսայում չի իրականացվել:

2. ԹՈՂԱՐԿՎՈՂ ԲԱԺՆԵՏՈՍՄԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

2.1. Ընդհանուր տեղեկություններ

- 2.1.1. Ընկերության կողմից թողարկվող բաժնետոմսերը հասարակ (սովորական), անվանական, ոչ փաստաթղթային բաժնետոմսեր են:
- 2.1.2. Թողարկման (առաջարկի) ընդհանուր ծավալը կազմում է 3,285,715,000 (երեք միլիարդ երկու հարյուր ութսունհինգ միլիոն յոթ հարյուր տասնհինգ հազար) ՀՀ դրամ (այսուհետ՝ դրամ)՝ հաշվարկված անվանական արժեքով կամ 3,450,000,750 (երեք միլիարդ չորս հարյուր հիսուն միլիոն յոթ հարյուր հիսուն) դրամ՝ հաշվարկված տեղաբաշխման գնով: Տեղաբաշխվող (վաճառվող) բաժնետոմսերի քանակն է 3,285,715 (երեք միլիոն երկու հարյուր ութսունհինգ հազար յոթ հարյուր տասնհինգ) հատ:
- 2.1.3. Մեկ բաժնետոմսի անվանական արժեքը կազմում է 1,000 (մեկ հազար) դրամ:
- 2.1.4. Տեղաբաշխվող բաժնետոմսերը փոխարկելի չեն:
- 2.1.5. Բաժնետոմսերի տեղաբաշխումը կսկսվի ՀՀ Կենտրոնական Բանկի կողմից սույն Ազդագրի գրանցմանը հաջորդող 3-րդ աշխատանքային օրը և կտևի 4 (չորս) ամիս: Տեղաբաշխման ժամկետում թողարկված բաժնետոմսերը ամբողջությամբ վաճառվելու (տեղաբաշխվելու) դեպքում արժեթղթերի տեղաբաշխման գործընթացը համարվում է ավարտված այդ պահից:
- 2.1.6. Ընկերությունը չի նախատեսում բաժնետոմսերի առաջարկի, ինչպես նաև տեղաբաշխման չեղյալ հայտարարելու կամ հետաձգվելու հանգամանքներ: Այնուամենայնիվ եթե «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 21-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված դեպքում տեղաբաշխողի նախաձեռնությամբ տեղաբաշխման ընթացքը կասեցվի և կասեցման ժամկետը ավարտվելու պահից՝ մեկ աշխատանքային օրվա ընթացքում, տեղաբաշխումը չարունակվի, ապա տեղաբաշխողը պարտավոր է դադարեցնել տեղաբաշխումը և վերադարձնել տեղաբաշխման ընթացքում ստացված միջոցները արժեթղթերը ձեռք բերած անձանց: Տեղաբաշխումը դադարեցվելու կամ չեղյալ համարվելու դեպքում ներդրողներին գումարները վերադարձվելու են հետևյալ կարգով.
- 2.1.6.1. Թողարկողը և/կամ տեղաբաշխողը տեղաբաշխումը չեղյալ համարվելու պահից 10 (տաս) աշխատանքային օրվա ընթացքում ներդրողներին ծանուցում է տեղաբաշխումը չեղյալ համարվելու հանգամանքի և պատճառի մասին:
- 2.1.6.2. Ներդրողները ծանուցումը ստանալու պահից 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնում են իրենց ներդրած գումարները վերադարձնելու դիմում, որի մեջ նշվում է.
- ✓ ներդրողի լրիվ ֆիրմային անվանումը (ֆիզիկական անձի համար՝ անունը, ազգանունը), պետական գրանցման տվյալները (անձնագրային տվյալները), գտնվելու (բնակության) վայրը,
 - ✓ ներդրված գումարի չափը,

- ✓ գումարի վերադարձման նախընտրելի եղանակը՝ կանխիկ կամ անկանխիկ: Անկանխիկի դեպքում նշվում է նաև բանկի անվանումն ու հաշվի համարը:
- 2.1.6.3. Դիմումները բավարարվում են դիմումը ստանալու պահից 3 (երեք) աշխատանքային օրվա ընթացքում:
- 2.1.6.4. Եթե ներդրողներին ծանուցման պահից 6 (վեց) ամսվա ընթացքում որևէ ներդրող դիմում չի ներկայացնում կամ դիմում ներկայացնում է, բայց հետո չի ներկայանում գումարը կանխիկ ստանալու համար (գումարի կանխիկ վերադարձման դեպքում), ապա այդ ներդրողի գումարը մուծվում է նոտարի դեպոզիտ:
- 2.1.7. Բաժնետոմսերի դիմաց վճարումները կատարվում են մինչև բաժանորդագրման պահը՝ միանվագ կարգով և ամբողջությամբ՝ ցանկացած բանկում, և կուտակվում են «Արդշինհիմվեստբանկ» ՓԲԸ-ում և «Արցախբանկ» ՓԲԸ-ում Տեղաբաշխողի կողմից այդ նպատակով բացված հետևյալ բանկային հաշիվներին. «Արդշինհիմվեստբանկ»՝ 2472300356740040; «Արցախբանկ»՝ 223005000169:
- 2.1.8. Բաժանորդագրվող բաժնետոմսերի դիմաց վճարումները կատարվում են միայն ՀՀ դրամով: Այն ներդրողները, որոնց ակտիվները գնանշված են այլ արժույթով, կարող են կատարել փոխանցումներ «Արդշինհիմվեստբանկ» ՓԲԸ-ում Տեղաբաշխողի կողմից այդ նպատակով բացված հետևյալ արտարժույթային հաշիվներին:

| | | |
|-----------------|---|------------------|
| ԱՄՆ Դոլար (USD) | - | 2472300356740050 |
| Եվրո (EUR) | - | 2472300356740060 |

Փոխանցված արտարժույթը կփոխարկվի ՀՀ դրամի «Արդշինհիմվեստբանկ» ՓԲԸ կողմից սահմանած փոխարժեքով:
- 2.1.9. Բաժնետոմսերի թողարկման և տեղաբաշխման մասին որոշումն ընդունել է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը 24 Նոյեմբերի 2008 թ. թիվ 781 որոշմամբ և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր արտադրական ենթակառուցվածքների վարչության պետի 25.11.2008 թ. թիվ 19Վ հրամանով:

2.2. Բաժնետոմսերի գնի վերաբերյալ տեղեկություններ

- 2.2.1. «ԱՐՑԱԽ ՀԷԿ» բաց բաժնետիրական ընկերության տնօրենների խորհրդի 10.06.2008 թ. թիվ 2 որոշմամբ բաժնետոմսերի շուկայական արժեքը սահմանվել է 1,050 (մեկ հազար հիսուն) դրամ, իսկ տեղաբաշխման գինը Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 24.11.2008 թ. թիվ 781 որոշմամբ նույնպես սահմանվել է 1,050 (մեկ հազար հիսուն) դրամ:

2.2.2. Ընկերության բաժնետերը բաժնետոմսերի գնման նախապատվության իրավունք չունեն, քանի որ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր արտադրական ենթակառուցվածքների վարչության պետի 25.11.2008 թ. թիվ 19Վ հրամանով որոշվել է քվեարկող բաժնետոմսերի սեփականատերերի նախապատվության իրավունքը չկիրառել, որպեսզի հավասար պայմաններ ապահովվի ներդրողների համար: Նշված որոշման գործողության ժամկետը սահմանվել է մեկ տարի: Նախապատվության իրավունքի չկիրառման հետևանքով ընկերության բաժնետերը հայտնվում է այլ ներդրողների հետ հավասար պայմաններում:

2.3. Շահութաբաժինների վերաբերյալ տեղեկություններ

2.3.1. Ընկերությունը կարող է վճարել ինչպես տարեկան, այնպես էլ միջանկյալ (կիսամյակային, եռամսյակային) շահութաբաժիններ: Միջանկյալ շահութաբաժինների վճարման մասին որոշման ընդունումը և շահութաբաժինների չափի հաստատումը իրականացնում է Ընկերության տնօրենների խորհուրդը: Տարեկան շահութաբաժինների վճարման մասին որոշման ընդունումը և շահութաբաժինների չափի հաստատումը իրականացնում է Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովը:

2.3.2. Շահութաբաժինների չափ կամ դրա որոշման կարգ Ընկերությունը չունի: Մինչ այժմ Ընկերությունը շահութաբաժին չի վճարել:

2.3.3. Շահութաբաժինների վճարումները կարող են իրականացվել ինչպես կանխիկ, այնպես էլ անկանխիկ: Կանխիկ վճարման դեպքում բաժնետոմսերի սեփականատերերը կարող են ստանալ իրենց շահութաբաժինները ընկերության գտնվելու վայրում: Անկանխիկ վճարման դեպքում բաժնետոմսերի սեփականատերերը իրենց շահութաբաժինները ստանում են իրենց նշած բանկի համապատասխան համարի հաշվին փոխանցման իրականացման ձևով:

2.3.4. Շահութաբաժնի ստացման իրավունքի սահմանափակումներ, ինչպես նաև ոչ ռեզիդենտներին տրվող շահութաբաժինների վճարման հատուկ ընթացակարգ Ընկերությունը չունի: Ոչ ռեզիդենտներին տրվող շահութաբաժինների վճարումը իրականացվում է Մույն Ազդագրի 2.3.3. կետով սահմանված ընթացակարգով:

2.3.5. Ընկերությունը նախատեսում է վճարել շահութաբաժիններ կախված իր գործունեության արդյունքներից: Առաջիկա յոթ տարիների համար Ընկերությունը նախատեսում է վճարել շահութաբաժիններ՝ համաձայն ստորև բերված աղյուսակի:

Աղյուսակ 1. Ընկերության կողմից վճարվելիք դիվիդենդի կանխատեսումները

| | 2009 | 2010 | 2011 | 2012 | 2013 | 2014 | 2015 |
|--------------------------------------|-----------|------------|------------|------------|------------|------------|------------|
| Զուտ շահույթ, հազ. դրամ | 565,766 | 659,086 | 1,270,533 | 1,250,165 | 1,193,134 | 1,417,583 | 1,428,822 |
| Բաժնետոմսերի քանակ | 8,385,714 | 10,027,619 | 10,027,619 | 10,027,619 | 10,027,619 | 10,027,619 | 10,027,619 |
| Դիվիդենդի վճարման գործակից, % | 0% | 10% | 10% | 10% | 10% | 12% | 12% |
| Ընդամենը դիվիդենդ, հազ. դրամ | 0 | 1,002,762 | 1,002,762 | 1,002,762 | 1,002,762 | 1,203,314 | 1,203,314 |
| Դիվիդենդ մեկ բաժնետոմսի հաշվով, դրամ | | 100 | 100 | 100 | 100 | 120 | 120 |

Աղբյուրը՝ Ընկերության կանխատեսումներ

- 2.3.6. Դիվիդենդի՝ վերը բերված արժեքները հանդիսանում են Ընկերության կանխատեսումները՝ որոնք հիմնված են իր ապագա գործունեության վերաբերյալ որոշակի դատողությունների, գնահատականների և ենթադրությունների վրա: Ներդրողները պետք է գիտակցեն, որ այդ դատողությունները, ենթադրությունները և գնահատականները կարող են պարունակել որոշակի ռիսկեր և/կամ անճշտություններ և բացի այդ կան ռիսկեր, որ վերը բերված կանխատեսումները կարող են չիրականանալ:

2.4. Տվյալ դասի և ձևի բաժնետոմսերի սեփականատերերի հիմնական իրավունքներն ու պարտականությունները

- 2.4.1. Ընկերության հասարակ (սովորական) բաժնետոմսի սեփականատերը, համաձայն Ընկերության կանոնադրության, իրավունք ունի.
- ✓ մասնակցել Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովին՝ վերջինիս իրավասությանը պատկանող բոլոր հարցերի նկատմամբ ձայնի իրավունքով,
 - ✓ ֆինանսական տարվա ավարտից հետո 60 օրվա ընթացքում ներկայացնել երկուսից ոչ ավելի առաջարկություններ բաժնետերերի ընդհանուր ժողովի օրակարգի վերաբերյալ, ինչպես նաև առաջարկել Ընկերության տնօրենների խորհրդի և վերստուգողի անդամության թեկնածուներ, եթե նա հանդիսանում է ձայնի իրավունք ունեցող բաժնետոմսերի առնվազն 2 տոկոսի սեփականատեր,
 - ✓ մասնակցել Ընկերության կառավարմանը,
 - ✓ ստանալ շահութաբաժիններ Ընկերության գործունեությունից առաջացած շահույթից,
 - ✓ առաջնահերթ կարգով ձեռք բերել Ընկերության կողմից տեղաբաշխվող բաժնետոմսերը, եթե «Բաժնետիրական ընկերությունների մասին» ԼՂՀ օրենքով և Ընկերության կանոնադրությամբ այլ բան չի նախատեսված,
 - ✓ ստանալ Ընկերության գործունեության վերաբերյալ ցանկացած տեղեկատվություն՝ գաղտնի փաստաթղթերից բացի, այդ թվում՝ կանոնադրությամբ սահմանված կարգով ծանոթանալ հաշվապահական հաշվեկշիռին, հաշվետվություններին, հաշվապահական գրքերին, Ընկերության արտադրատնտեսական գործունեությանը,
 - ✓ Ընկերության կանոնադրական կապիտալի առնվազն 5% կազմող ձայնի իրավունք տվող բաժնետոմսերին տիրող բաժնետերերը կարող են պահանջել փորձագետ կամ փորձագետների խումբ՝ Ընկերության գործունեությանը վերաբերող հաշվետվությունները և գաղտնիք ներկայացնող փաստաթղթերը ստուգելու նպատակով: Ստուգման հետ կապված ծախսերը փոխհատուցում են ստուգումը պահանջող բաժնետերերը,
 - ✓ Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովում իր իրավունքները ներկայացնելու համար լիազորել երրորդ անձի,
 - ✓ հանդես գալ առաջարկություններով Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովում,

- ✓ Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովում քվեարկել իրեն պատկանող բաժնետոմսերի ձայների չափով,
 - ✓ հայցով դիմել դատարան՝ Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի կողմից ընդունված և գործող օրենքներին և այլ իրավական ակտերին հակասող որոշումների բողոքարկման նպատակով,
 - ✓ Ընկերության լուծարման դեպքում ստանալ պարտատերերի հետ կատարված հաշվարկներից հետո մնացած Ընկերության գույքի իր հասանելիք մասը կամ դրա արժեքը,
 - ✓ օտարել կամ այլ ձևով այլ անձանց փոխանցել իր սեփականությունը հանդիսացող բաժնետոմսը,
 - ✓ պահանջել բաժնետոմսերի հետգնում «Բաժնետիրական ընկերությունների մասին» ԼԳՀ օրենքով նախատեսված դեպքերում,
 - ✓ օգտվել Ընկերության կանոնադրությամբ նախատեսված այլ իրավունքներից:
- 2.4.2. Բաժնետերերը պարտավոր են չհրապարակել Ընկերության գործունեության վերաբերյալ գաղտնիք ներկայացնող տեղեկությունները:

2.5. Սահմանափակումների վերաբերյալ տեղեկություններ

- 2.5.1. Ընկերության կանոնադրությամբ հայտարարված բաժնետոմսերի քանակը սահմանված է 10,000,000 (տաս միլիոն) հատ, որը սահմանափակում է թողարկվող բաժնետոմսերի առավելագույն մեծությունը: Բաժնետոմսերի թողարկման, ինչպես նաև բաժնետոմսերում ներդրումներ կատարողների նկատմամբ այլ սահմանափակումներ սահմանված չեն:

2.6. Տեղեկություններ բաժնետոմսերի տեղաբաշխմանը մասնակցող անձանց և նրանց մասնակցության չափի վերաբերյալ

- 2.6.1. Բաժնետոմսերի տեղաբաշխումը պայմանագրի հիման վրա կազմակերպվում է մասնագիտացված կազմակերպության՝ «ԱՐՄԵՆԲՐՈՎ» բաց բաժնետիրական ընկերության կողմից (գրանցված է Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի կողմից 04.11.2008 թ., գրանցման համար՝ 10, գրանցման վկայական՝ թիվ 10, Ներդրումային ծառայությունների մատուցման լիցենզիա ՆԸ թիվ 0010, գտնվելու վայրը՝ ՀՀ, ք. Երևան, Տիգրան Մեծի պողոտա, 32/1 շենք, թիվ 8 տարածք):
- 2.6.2. Տեղաբաշխումն իրականացվում է բաց բաժանորդագրության միջոցով, չերաշխավորված եղանակով:

- 2.6.3. Համաձայն կնքված պայմանագրի՝ «ԱՐՄԵՆԲՐՈԿ» ԲԲԸ-ն պարտավորվել է լավագույն ջանքերի գործադրմամբ, սակայն չերաշխավորված եղանակով տեղաբաշխել Թողարկողի կողմից թողարկվող բաժնետոմսերը: Համաձայն վերոնշյալ պայմանագրի՝ Թողարկողը պարտավորվել է Տեղաբաշխողին վճարել տեղաբաշխման ենթակա բաժնետոմսերի տեղաբաշխման գնով հաշվարկված ընդհանուր ծավալի 2%-ի (երկու տոկոս) չափով ծառայության վճար:
- 2.6.4. Տեղաբաշխողը թողարկողի կողմից իրեն տրված իրավասությունների շրջանակներում ձևավորել է տեղաբաշխման խումբ: Տեղաբաշխման խմբի անդամներն են «ԱՐՄԵՆԲՐՈԿ» ԲԲԸ-ն՝ որպես գլխավոր տեղաբաշխող և «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ն (գրանցված է Հայաստանի Հանրապետության Կենտրոնական Բանկի կողմից 07.10.2008թ., գրանցման համար՝ 84, գրանցման վկայական թիվ 0476, բանկային գործունեության լիցենզիա N84, գտնվելու վայրը՝ ՀՀ, ք. Երևան 0010, Խանջյան 13/2, հեռ. 52-95-93)՝ որպես տեղաբաշխման խմբի անդամ:
- 2.6.5. Համաձայն «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ և «ԱՐՄԵՆԲՐՈԿ» ԲԲԸ միջև կնքված պայմանագրի, «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ն պարտավորվել է լավագույն ջանքերի գործադրմամբ, սակայն չերաշխավորված եղանակով տեղաբաշխել Թողարկողի կողմից թողարկվող բաժնետոմսերը: Տեղաբաշխման ծավալ սահմանված չէ: Սահմանված միջնորդավճարը տեղաբաշխման խմբի անդամի համար կազմում է իր կողմից տեղաբաշխված բաժնետոմսերի ծավալի 1.8%-ը:
- 2.6.6. Տեղաբաշխող խմբի կողմից առաջարկվող բաժնետոմսերի քանակն է 3,285,715 (երեք միլիոն երկու հարյուր ութսունհինգ հազար յոթ հարյուր տասնհինգ) բաժնետոմս: Տեղաբաշխող խմբի կողմից առաջարկվող մեկ բաժնետոմսի տեղաբաշխման գինը կազմում է 1,050 (մեկ հազար հիսուն) դրամ:

2.7. Բաժանորդագրությունների վերաբերյալ տեղեկություններ

- 2.7.1. Բաժանորդագրությանը կարող են մասնակցել Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը, ինչպես նաև ԼՂՀ ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ, ինչպես իրավաբանական, այնպես էլ ֆիզիկական անձինք:
- 2.7.2. Տեղաբաշխվող բաժնետոմսերի բաժանորդագրությունը իրականացվելու է բաց բաժանորդագրության եղանակով:
- 2.7.3. Բաժնետոմսերի բաժանորդագրությունը կսկսվի ՀՀ Կենտրոնական Բանկի կողմից սույն Ազդագրի գրանցմանը հաջորդող 3-րդ աշխատանքային օրը և կտևի 4 (չորս) ամիս:
- 2.7.4. Այն ներդրողները, որոնք հետաքրքրված են առաջարկվող բաժնետոմսերում ներդրումներ կատարելու մեջ, պետք է ներկայացնեն Բաժանորդագրության Հայտ (այսուհետ՝ Հայտ) «Արմենբրոկ» ԲԲԸ՝ «Հետադարձ կապ» բաժնում նշված ցանկացած կապի միջոցով: Հայտի ձևը կարելի է ձեռք բերել Ընկերության կամ Տեղաբաշխողի գրասենյակներից՝ թղթային ձևով, կամ նրանց ինտերնետի էջերից՝ էլեկտրոնային ձևով: Հայտը պետք է ստորագրվի (իրավաբանական անձի դեպքում՝ նաև կնքվի (կնիքի առկայության դեպքում)) ներդրողի կողմից:
- 2.7.5. Հայտը ներկայացնելուց հետո ներդրողը պետք է կատարի գնվող բաժնետոմսերի դիմաց վճարումը «Արմենբրոկ» ԲԲԸ կողմից այդ նպատակով «Արդշինինվեստբանկ» ՓԲԸ-ում և «Արցախբանկ» ՓԲԸ-ում բացված հետևյալ բանկային հաշիվներին. «Արդշինինվեստբանկ»՝ 2472300356740040; «Արցախբանկ»՝ 223005000169 (տես կետ 2.1.7. և 2.1.8.):
- 2.7.6. Բաժանորդագրման հայտը կհամարվի վավեր միայն ձեռք բերվող բաժնետոմսերի դիմաց լրիվ վճարման պահից: Բացի այդ, բաժանորդագրության հայտը կհամարվի անվավեր եթե. 1) չի պարունակում հայտով սահմանված վավերապայմանները և/կամ 2) Տեղաբաշխողի կողմից հայտը ստացվել է տեղաբաշխման ժամկետի ավարտից ուշ:
- 2.7.7. Տեղաբաշխողը երաշխավորում է վավեր Հայտում նշված արժեթղթերի գրանցումը ներդրողի անունով «Հայաստանի Կենտրոնական Դեպոզիտարիա» ԲԲԸ-ում:
- 2.7.8. Բաժանորդագրության հետ կանչի պահանջ չի ընդունվում:
- 2.7.9. Տեղաբաշխման ժամկետում թողարկված բաժնետոմսերի ամբողջությամբ վաճառվելու (դեպքում) արժեթղթերի տեղաբաշխման գործընթացը համարվում է ավարտված այդ պահից:
- 2.7.10. Բաժանորդագրությունների քանակը թողարկողի կողմից կարող է նվազեցվել, եթե մինչ այդ բաժանորդագրված բաժնետոմսերի քանակի և բաժանորդագրության հայտում նշված բաժնետոմսերի քանակի գումարը գերազանցում է 3,285,715 հատը: Ընդ որում, եթե ներդրողը բաժանորդագրության հայտում նշում է կատարել մասնակի բավարարման մասին, ապա նվազեցումը կկատարվի գերազանցող մասով, իսկ եթե ներդրողը բաժանորդագրության հայտում նշում է կատարել լրիվ կամ ոչինչ վանդակում, ապա նվազեցումը կկատարվի ամբողջությամբ:

- 2.7.11. Բաժանորդագրությունների քանակը նվազեցնելու պատճառով գումարները վերադարձվում են հետևյալ կարգով.
- 2.7.11.1. Թողարկողը և/կամ Տեղաբաշխողը բաժանորդագրության քանակը նվազեցնելու պահից 1 (մեկ) աշխատանքային օրվա ընթացքում ներդրողին ծանուցում է բաժանորդագրության քանակը նվազեցնելու հանգամանքի, չափի և պատճառի մասին:
- 2.7.11.2. Ներդրողը ծանուցումը ստանալու պահից 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնում է իր ներդրած գումարը կամ դրա մասը վերադարձնելու դիմում, որի մեջ նշվում է.
- ✓ ներդրողի լրիվ ֆիրմային անվանումը (ֆիզիկական անձի համար՝ անունը, ազգանունը), պետական գրանցման տվյալները (անձնագրային տվյալները), գտնվելու (բնակության) վայրը,
 - ✓ վերադարձման ենթակա գումարի չափը,
 - ✓ գումարի վերադարձման նախընտրելի եղանակը. կանխիկ կամ անկանխիկ: Անկանխիկի դեպքում նշվում է նաև բանկի անվանումն ու հաշվի համարը:
- 2.7.11.3. Դիմումները բավարարվում են դիմումը ստանալու պահից 3 (երեք) աշխատանքային օրվա ընթացքում:
- 2.7.11.4. Եթե ներդրողին ծանուցման պահից 6 (վեց) ամսվա ընթացքում ներդրողը դիմում չի ներկայացնում կամ դիմում ներկայացնում է, բայց հետո չի ներկայանում գումարը կանխիկ ստանալու համար (գումարի կանխիկ վերադարձման նախընտրման դեպքում), ապա այդ ներդրողի գումարը մուծվում է նոտարի դեպոզիտ:

2.8. Տեղաբաշխված (տեղաբաշխվող) բաժնետոմսերից ստացվող բաժնետոմսերի սեփականատերերի եկամուտների հարկման կարգի ամբողջական և մանրամասն նկարագիրը

2.8.1. **Շահութահարկ.** ԼՂՀ-ում գործող իրավաբանական անձինք պարտավոր են շահութահարկի գծով վճարումներ կատարել պետ. բյուջե: Այն իրավաբանական անձինք, որոնք հիմնադրվել կամ գործում են ԼՂՀ-ում՝ ռեզիդենտ իրավաբանական անձինք, շահութահարկ են վճարում իրենց ստացած ընդհանուր շահույթից, իսկ ոչ ռեզիդենտ իրավաբանական անձինք միայն ԼՂՀ աղբյուրներից ստացված շահույթից: ԼՂՀ-ում հիմնադրված իրավաբանական անձանց համար, ինչպես նաև ԼՂՀ-ում գործող օտարերկրյա իրավաբանական անձանց հարկվող շահույթը հավասար է հարկվող եկամտի և եկամուտները նվազեցնող ծախսերի տարբերությանը: Ռեզիդենտ իրավաբանական անձանց համար շահութահարկի դրույքը կազմում է 5% (բացառությամբ ֆինանսական ինստիտուտների, որոնք հարկվում են 20% դրույքաչափով): 2009թ. նախատեսվում է բարձրացնել այդ դրույքաչափը մինչև 10%: Կանոնադրական կապիտալում արտասահմանյան մասնակցություն ունեցող ռեզիդենտ իրավաբանական անձինք որոշ դեպքերում ազատվում են շահութահարկից (տես աղյուսակ 2-ը):

Աղյուսակ 2. ԼՂՀ-ում արտասահմանյան ներդրումների համար հարկերից ազատվելու դեպքերը

| Ներդրումների գումարը, մլն. ՀՀ դրամ | Շահութահարկից ազատման չափը | |
|------------------------------------|----------------------------|----------------|
| | 100%-ով | 50%-ով |
| 25-50 | առաջին տարին | հետագա 2 տարին |
| 50-100 | առաջին տարին | հետագա 3 տարին |
| 100-200 | առաջին 2 տարին | հետագա 3 տարին |
| 200-300 | առաջին 3 տարին | հետագա 3 տարին |
| 300 և ավելին | առաջին 4 տարին | հետագա 3 տարին |

Աղբյուրը՝ ԼՂՀ օրենքը Շահութահարկի մասին

Ոչ ռեզիդենտ անձանց հարկումը կատարվում է 3% դրույքաչափով (բացառությամբ ապահովագրական ընկերությունների, որոնք հարկվում են 2% դրույքաչափով):


2.8.2. **Շահութաբաժիններ.** Ֆիզիկական անձի ստացած շահութաբաժինները՝ և ռեզիդենտ, և ոչ ռեզիդենտ, եկամտահարկով չեն հարկվում: Հարկվող շահույթի որոշման ժամանակ համախառն եկամուտը պետք է նվազեցվի ստացված շահութաբաժինների գումարի չափով: Սա նաև գործում է ԼՂՀ-ում հիմնադրված կամ գործող իրավաբանական անձանց համար: Չնայած դրան, օտարերկրյա իրավաբանական անձանց կողմից ստացված շահութաբաժինները հարկվում են 3% դրույքաչափով:

2.8.3. **Կապիտալի հավելում.** ԼՂՀ-ն չունի առանձին հարկատեսակ կապիտալի հավելումի համար: Ֆիզիկական անձանց պատկանող արժեթղթերից ստացված կապիտալի հավելումը՝ և ռեզիդենտ, և ոչ ռեզիդենտ, չի հարկվում եկամտահարկով: Դրան հակառակ՝ իրավաբանական անձինք կապիտալի հավելումի համար վճարում են շահութահարկ. ռեզիդենտները՝ 5%, ոչ ռեզիդենտները՝ 3%:

2.9. Ֆոնդային բորսայում առևտրի թույլտվության վերաբերյալ տեղեկություններ

- 2.9.1. Ընկերության բաժնետոմսերը ֆոնդային բորսաներում չեն շրջանառվում:
- 2.9.2. Տեղաբաշխման գործընթացի ավարտից հետո Ընկերությունը նախատեսում է ցուցակել իր բաժնետոմսերը «Հայաստանի Ֆոնդային Բորսա» ԲԲԸ-ում (Արմեքս)՝ ՀՀ, ք. Երևան, Մ. Սկրտչյան, 5բ: Արմեքսի առևտրային նստաշրջանը տեղի է ունենում երկուշաբթիից ուրբաթ՝ օրեկան մեկ ժամ:
- 2.9.3. Վերջին տարիներին ՀՀ կապիտալի շուկան լուրջ զարգացումներ է ունեցել: Մասնավորապես՝ վերջին 5 տարիների ընթացքում շուկայի ծավալները աճել են մոտ 111.5%-ով և միջին տարեկան աճը կազմել է 34.5%, ինչը կարող է նշանակալից հաջողություն համարվել անցումային և զարգացող երկրների համար: Արմեքսի հարթակում կատարված գործարքների ծավալը զգալի աճել է վերջին տարիներին, 2007թ. կազմելով 1.5 մլրդ. ՀՀ դրամ, մեծացնելով ընդհանուր աճի ցուցանիշը 89%-ով 2002թ. համեմատ: Բացի դա, ՀՀ կապիտալի շուկայի հետագա զարգացման գրավական կարող է համարվել NASDAQ OMX-ի մուտքը շուկա, որով կապահովվի նրա հետագա զարգացումը և իրացվելիությունը:

Գծանկար 1. Հայաստանի կապիտալի շուկայի հիմնական ցուցանիշները



Աղբյուրը՝ Հայաստանի Ֆոնդային Բորսա

2.9.4. Ընկերությունը չունի իր բաժնետոմսերի շուկա ստեղծողի պայմանագիր որևէ անձի հետ, սակայն առաջարկվող արժեթղթերի իրացվելիությունը ապահովելու համար նախատեսվում է, որ Տեղաբաշխողը Արմեքսի առևտրային նստաշրջանների ընթացքում կիրականացնի այդ բաժնետոմսերի երկկողմանի գնանշում՝ հանդես գալով որպես Ընկերության արժեթղթերի մարքեթ մեյքեր:

2.10. Բաժնետոմսերի նկատմամբ իրավունքների և պարտավորությունների հաշվառումը և (կամ) գրանցումն իրականացնող կազմակերպությունների վերաբերյալ տեղեկություններ

Ընկերության բաժնետոմսերի նկատմամբ իրավունքների և պարտավորությունների գրանցումը և հաշվառումն իրականացնում է «Հայաստանի Կենտրոնական Դեպոզիտարիա» ԲԲԸ-ն, ՀՀ, ք. Երևան, Մ. Մկրտչյան 5^բ, հեռ. (010) 56-64-46:

2.11. Թողարկման նպատակը

2.11.1. Ընկերությունը նախատեսում է բաժնետոմսերի առաջնային հրապարակային տեղաբաշխումից հավաքագրած գուտ միջոցներն ուղել երեք հիդրոէլեկտրակայանների՝ Մատաղիս 1, Մատաղիս 2, Թրդի 1, կառուցմանը: Այդ ՀԷԿ-երը՝ կառուցվելու են Թարթառ գետի և Թարթառ գետից Թրդի գետը թափվող ջրատարի վրա:

2.11.2. Ներկայումս տվյալ ՀԷԿ-երի կառուցման ուղղությամբ իրականացվում են նախագծահետազոտական աշխատանքներ: Մասնավորապես՝ ՀԷԿ-երի կառուցման նախագծահետազոտական աշխատանքներն իրականացվում են «Հայհիդրոէներգանախագիծ» ՓԲԸ կողմից, որի կատարած հաշվարկների համաձայն նշված երեք ՀԷԿ-երի կառուցման նախնական արժեքն է 3,450,000,000 (երեք միլիարդ չորս հարյուր հիսուն միլիոն) ՀՀ դրամ:

2.11.3. Նախատեսվող ՀԷԿ-երը իրենցից ներկայացնելու են փոքր (մինչև 5 Մվտ հզորությամբ) նորագույն սարքավորումներով հագեցած կայաններ, որոնց օգտակար կյանքի տևողությունը գնահատվում է 40 տարի:

2.12. Նոր թողարկման իրականացման կանխատեսվող ժամանակահատվածը

2.12.1. Ընկերությունը, սույն տեղաբաշխումը հաջողությամբ ավարտելու դեպքում, 2010թ. նախատեսում է իրականացնել ևս մեկ թողարկում, երկու նոր ՀԷԿ-երի՝ Թրդի 2 և Թրդի 3, կառուցումը ֆինանսավորելու նպատակով: Տվյալ ծրագիրը բխում է ԼՂՀ Կառավարության «ԼՂՀ ջրային պաշարների յուրացում» նպատակային ծրագրից:

2.12.2. Կատարված նախնական հետազոտական աշխատանքների համաձայն այդ ՀԷԿ-երի կառուցման արժեքը գնահատվել է մոտ 1,724,000,000 (մեկ միլիարդ յոթ հարյուր քսանչորս միլիոն) դրամ, որն էլ կկազմի նոր թողարկման ծավալը: Տվյալ ծրագիրը գտնվում է դեռևս նախնական փուլում և նրա մանրամասները կճգրտվեն հետագայում: Ընկերության բոլոր բաժնետերերը անպայմանորեն կիրազեկվեն այդ ծրագրի մանրամասների մասին:

3. ԹՈՂԱՐԿՈՂԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

3.1. Ընդհանուր տեղեկություններ

3.1.1. Թողարկողի պատմությունը և զարգացումը

3.1.2. Ընկերության ֆիրմային անվանումն է՝

հայերեն

լրիվ՝ «ԱՐՅԱԽ ՀԷԿ» Բաց Բաժնետիրական Ընկերություն
կրճատ՝ «ԱՐՅԱԽ ՀԷԿ» ԲԲԸ

ռուսերեն

լրիվ՝ Открытое Акционерное Общество “АРЦАХ ГЭК”
կրճատ՝ ОАО “АРЦАХ ГЭК”

անգլերեն

լրիվ՝ “ARTSAKH HEK” Open Joint Stock Company
կրճատ՝ “ARTSAKH HEK” OJSC

3.1.2.1. Ընկերությունը հիմնադրվել է ԼՂՀ կառավարության 2007թ. նոյեմբերի 1-ի No 484 որոշմամբ (պետական գրանցում է ստացել 2007 թ.-ի դեկտեմբերի 12-ին «ԱՐՅԱԽ ՀԷԿ» անվանումով և «փակ բաժնետիրական ընկերություն» կազմակերպական-իրավական ձևով), որի համաձայն ընկերության 100% բաժնետոմսերի սեփականատեր է ԼՂՀ-ը ի դեմս կառավարության:

«ԱՐՅԱԽ ՀԷԿ» փակ բաժնետիրական ընկերությունը ստեղծվել է «ԱՐՅԱԽԷՆԵՐԳՈ» փակ բաժնետիրական ընկերության (գրանցված Լեռնային Ղարաբաղի Հանրապետության արդարադատության նախարարության ռեգիստրի բաժնի կողմից 28.02.2005 թ., գրանցման թիվ՝ 443.120.20892, վկայական՝ 001350) առանձնացման միջոցով վերակազմակերպման արդյունքում և հանդիսանում է նրա իրավահաջորդը՝ բաժանիչ (առանձնացման) հաշվեկշռին համապատասխան: «ԱՐՅԱԽԷՆԵՐԳՈ» ՓԲԸ բացի էլեկտրաէներգիայի շուկայի օպերատոր լինելուց, նաև հանդիսանում էր ԼՂՀ-ում միակ ՀԷԿ-ի՝ «Մարսանգ ՀԷԿ» սեփականատերը: Այսպիսով, «Արցախ ՀԷԿ» ՓԲԸ-ն դարձավ «ԱՐՅԱԽԷՆԵՐԳՈ»-ի իրավահաջորդը՝ էլեկտրաէներգիայի արտադրության մասով:

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2008 թ. մայիսի 13-ի «ԱՐՅԱԽ ՀԷԿ» փակ բաժնետիրական ընկերությունը վերակազմակերպելու մասին» թիվ 360 որոշման համաձայն «ԱՐՅԱԽ ՀԷԿ» փակ բաժնետիրական ընկերությունը (գրանցված Լեռնային Ղարաբաղի Հանրապետության արդարադատության նախարարության ռեգիստրի բաժնի կողմից 12.12.2007 թ., գրանցման թիվ՝ 443.120.11328, վկայական՝ 02 Ա 001980) վերակազմակերպվել է վերակազմավորման միջոցով:

2008 թ.-ի հունիսի 9-ից ընկերությունը կրում է «ԱՐՑԱԽ ՀԷԿ» բաց բաժնետիրական ընկերություն» ֆիրմային անվանումը և կազմակերպական-իրավական ձևը:

- 3.1.2.2. Ընկերությունը առաջին գրանցումը ստացել է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության արդարադատության նախարարության ռեգիստրի բաժնի կողմից 2007 թ.-ի դեկտեմբերի 12-ին (գրանցման համարը՝ 443.120.11328, վկայական՝ 02 Ա 001980): Պետական գրանցման պահից մինչ օրս Ընկերությունը փաստացի գործունեություն է իրականացնում:
- 3.1.2.3. Ընկերության գտնվելու վայրը և իրավաբանական (փոստային) հասցեն է՝ ԼՂՀ, ք. Ստեփանակերտ, Ա. Առաքելյան փող., թիվ 10:

3.1.3. Ֆինանսական և այլ խմբերի վերաբերյալ տեղեկություններ

Ընկերությունը որևէ արդյունաբերական, բանկային, ֆինանսական խմբերի և միությունների չի անդամակցում:

3.1.4. Թողարկողի մասնաճյուղերը և ներկայացուցչությունները

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տարածքում և նրանից դուրս Ընկերությունը չունի մասնաճյուղեր և ներկայացուցչություններ:

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տարածքում և նրանից դուրս Ընկերությունը չունի հիմնարկներ:

3.1.5. Թողարկողի աուդիտն իրականացնող անձինք

- 3.1.5.1. Ընկերության ստեղծման պահից Ընկերության աուդիտն իրականացնող անձն է «Վ. Ս. ԱՌԻԳԻՏ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը, որն ունի աուդիտորական ծառայությունների իրականացման լիցենզիա (սերիա - ԱԾ N 042), տրված Հայաստանի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության կողմից 2005 թ.-ի հունիսի 13-ին (որոշում թիվ 616 - Ա):

«Վ.Ս.ԱՌԻԳԻՏ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության գտնվելու և գործունեության վայրը և կապի միջոցն է.

Գրանցման հասցեն - 0903, ՀՀ, Արարատի մարզ, գ. Նոր Խարբերդ;

Գործունեության հասցեն - ՀՀ ք. Երևան, Գ.Նժդեհի 48/1, Հեռ: 093-75-00-16:

- 3.1.5.2. «Վ. Ս. ԱՌԻԳԻՏ» ՍՊԸ-ն չի անդամակցում ոչ մի մասնագիտացված անձի:
- 3.1.5.3. Ընկերության ստեղծման պահից Ընկերության աուդիտն իրականացնող անձի կողմից աշխատանքից հրաժարման, վերընտրությանը չմասնակցելու, աշխատանքից այլ հիմքերով ազատման դեպքեր չեն եղել:

3.1.6. Փորձագետների մասնագիտական կարծիքը և այլ անձանցից ստացված տեղեկությունները

- 3.1.6.1. Ազդագրում Ընկերության որևէ փորձագետ կամ խորհրդատու հանդիսացող անձի մասնագիտական կարծիք չի օգտագործվել:
- 3.1.6.2. Ազդագրում ներառվել են այլ անձանցից ձեռք բերված տեղեկություններ: Ամեն անգամ, երբ ներառվել է այլ անձից ձեռք բերված տեղեկություն, համապատասխան աղբյուրի վրա կատարվել է հղում:

Տեղեկատվության աղբյուրներն են.

- ✓ ԼՂՀ Կառավարության Արտադրական Ենթակառուցվածքների Վարչություն,
- ✓ ԼՂՀ Ազգային Վիճակագրական Ծառայություն,
- ✓ ԼՂՀ Հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողով,
- ✓ «Արցախէներգո» ՓԲԸ,
- ✓ «Հայիդրոէներգանախագիծ» ՓԲԸ,
- ✓ CIA-World Factbook,
- ✓ World Bank-World Development Indicators:

3.1.7. Կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալի չափը, կառուցվածքը

- 3.1.7.1. Ընկերության կանոնադրական կապիտալը 5,100,000,000 (հինգ միլիարդ հարյուր միլիոն) դրամ է, որը կազմված է 5,100,000 (հինգ միլիոն հարյուր հազար) հատ հասարակ (սովորական) անվանական ոչ փաստաթղթային բաժնետոմսից: Մեկ բաժնետոմսի անվանական արժեքը կազմում է 1,000 (մեկ հազար) դրամ:
- 3.1.7.2. Ընկերության կողմից թողարկված բոլոր 5,100,000 (հինգ միլիոն հարյուր հազար) բաժնետոմսերը տեղաբաշխված են, սեփականության իրավունքով պատկանում են Լեռնային Ղարաբաղի Հանրապետությանը և լրիվ (100%) վճարված են նրա կողմից:
- 3.1.7.3. Կանոնադրական կապիտալը ընկերության ստեղծման պահից վճարվել է ամբողջությամբ և ըստ տարիների կազմել է՝
- | | |
|-----------------------|--------------------|
| 2007 թ. տարեվերջին՝ | 36,083,000 դրամ |
| 2008 թ. հունիսի 9-ից՝ | 5,100,000,000 դրամ |
- 3.1.7.4. Բոլոր տարիների սկզբի և վերջի դրությամբ չվճարված բաժնետոմսեր չեն եղել:
- 3.1.7.5. «ԱՐՑԱԽ ՀԷԿ» փակ բաժնետիրական ընկերությունից վերակազմավորման ճանապարհով ստեղծվող «ԱՐՑԱԽ ՀԷԿ» բաց բաժնետիրական ընկերության հիմնադրման մասին Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության աշխատակազմի ղեկավար-նախարարի 29.05.2008թ. թիվ 70/1 հրամանով հաստատվել է կանոնադրական կապիտալի նշված չափը:

- 3.1.7.6. Ընկերությունը մտադրություն ունի կանոնադրական կապիտալը մեծացնել լրացուցիչ բաժնետոմսերի առաջնային (սույն ազդագրով) և երկրորդային (2010թ.) հրապարակային տեղաբաշխման միջոցով:
- 3.1.7.7. Ընկերությունը արտոնյալ բաժնետոմսեր չունի:

3.1.8. Թողարկողի կողմից թողարկված արժեթղթերի նկատմամբ առկա օպցիոնների վերաբերյալ տեղեկություններ

Ընկերության կողմից թողարկված արժեթղթերի նկատմամբ առկա օպցիոններ չկան:

3.1.9. Բաժնետերերի տարեկան և արտահերթ ժողովների հրավիրման կարգը (կանոնադրությամբ նշված կարգից այլ կարգերի առկայության դեպքում)

Բացի բաժնետերերի տարեկան և արտահերթ ժողովների հրավիրման կանոնադրությամբ նշված կարգից, Ընկերությունը այլ կարգեր չունի:

3.2. Թողարկողի գործունեության վերաբերյալ տեղեկություններ

3.2.1. Ռիսկային գործոններ

Առաջարկվող արժեթղթերում ներդրումները կապված են որոշակի ռիսկերի հետ: Որոշում կայացնելուց առաջ ցանկացած ներդրող պետք է նախապես ծանոթանա ստորև բերված ռիսկերի հետ, որոնց քանակը այսքանով չի սահմանափակվում: Ներդրողը պետք է հասկանա, որ Ազդագիրը չի կարող ներկայացնել առաջարկվող արժեթղթերում ներդրումների հետ կապված բոլոր ռիսկերը: Ներդրողները պետք է որոշում կայացնեն լիովին գիտակցելով այսպիսի ներդրումների բնույթը և դրանցից բխող հիմնական ռիսկերը՝ ելնելով իրենց փորձից, նպատակներից, ֆինանսական ռեսուրսներից, ռիսկերի նկատմամբ հակվածության աստիճանից և այլ գործոններից:

Ընկերությունը ներկայացրել է այն ռիսկերը, որոնք նա համարում է էական, սակայն Ընկերությունը ապագայում կարող է առնչվել նաև այլ ռիսկերի հետ: Լրացուցիչ ռիսկերը և անորոշությունները, ներառյալ նրանք, որոնց մասին Ընկերությունը ներկայումս տեղյակ չի կամ կարծում է, որ դրանք էական չեն, նույնպես կարող են հանգեցնել Ընկերության եկամուտների իջեցմանը, ծախսերի ավելացմանը, ինչն իր հերթին կարող է հանգեցնել բաժնետոմսերի գների իջեցմանը:

Ընկերությունը կձեռնարկի բոլոր անհրաժեշտ միջոցառումները, որպեսզի նվազեցնի ստորև նշված ռիսկային գործոնների բացասական ազդեցությունը: Այնուամենայնիվ, քանի որ շատ դեպքերում նշված ռիսկային գործոնները Ընկերության հսկողությունից դուրս են, ապա այս ցուցակով չսահմանափակվող ռիսկերի բացասական ազդեցությունը նվազեցնելու նպատակով ձեռնարկված միջոցառումների արդյունավետությունը չի երաշխավորվում Ընկերության կողմից:


- 3.2.1.1. **Վիճելի տարածքների ռիսկեր.** ԼՂՀ-ն ծանր պատերազմ է ապրել իր հարևան Ադրբեջանի Հանրապետության հետ: Չնայած 1994թ. կնքված զինադադարի պայմանագրին, խնդիրը դեռևս մնում է չլուծված և սպասում է իր վերջնական և խաղաղ լուծմանը երկկողմանի ուղղակի բանակցությունների միջոցով: Այս խնդրի լուծման հիմնական գործիք է հանդիսանում Միավորված Ազգերի Կազմակերպության (ՄԱԿ) Մինսկի Խումբը, որը միջնորդում է տարածաշրջանում երկարատև խաղաղության հաստատմանը: Մինսկի Խումբը արդեն իսկ ներկայացրել է մի շարք առաջարկություններ ճգնաժամի հաղթահարման համար, սակայն այդ խնդիրը դեռևս վերջնական լուծում չի ստացել:
- 3.2.1.2. **Քաղաքական ռիսկեր.** ԼՂՀ-ն անցումային երկիր է, որտեղ քաղաքական, տնտեսական և անցումային գործընթացները դեռևս գտնվում են կայացման փուլում: ԼՂՀ քաղաքական դաշտում ցանկացած բացասական փոփոխություն, հատկապես ցանկացած փոփոխություն, որը ազդեցություն կունենա ԼՂՀ կառավարության կայունության վրա կամ կկասեցնի ընթացիկ բարեփոխումները, կարող է բացասական ազդեցություն ունենալ նաև Ընկերության գործունեության և բաժնետոմսերի շուկայական գնի վրա:
- 3.2.1.3. **Անցումային շուկաների ռիսկ.** ԼՂՀ-ի նման անցումային տնտեսություններով հետաքրքրվող ներդրողները պետք է տեղյակ լինեն, որ այսպիսի շուկաները հակված են ավելի մեծ ռիսկի, քան առավել զարգացած շուկաները: Ներդրողները պետք է գիտակցեն նաև, որ ԼՂՀ տնտեսությունը, ինչպես և մյուս անցումային տնտեսությունները, հակված են կտրուկ փոփոխությունների և որ սույն փաստաթղթում նշված տեղեկությունները կարող են շատ արագ հնամալ: Նախքան ներդրումային որոշում կայացնելը, ներդրողները պետք է նախապես խորհրդակցեն իրենց իրավախորհրդատուների և ֆինանսական խորհրդատուների հետ, որպեսզի կարողանան պատշաճորեն գնահատել առաջարկվող արժեթղթերում ներդրումների ռիսկայինության աստիճանը և դրա համապատասխանելիությունը իրենց ներդրումային հնարավորություններին:
- 3.2.1.4. **Արժույթային ռիսկ.** Առաջարկվող արժեթղթերը գնանշվելու և վճարվելու են ՀՀ դրամով: Այն ներդրողների համար, որոնց ֆինանսական հոսքերը գնանշվում են այլ արժույթով, տվյալ բաժնետոմսերը պարունակում են զգալի ռիսկեր: Այդ ռիսկերը ներառում են, ՀՀ դրամի և ներդրողի արժույթի փոխարժեքի զգալի փոփոխությունների հնարավորությունը, ինչպես նաև Հայաստանի և ԼՂՀ դրամային կառույցների կողմից միջամտության կամ փոփոխությունների հնարավորությունը: Այդպիսի ռիսկերը հիմնականում բխում են տնտեսական և քաղաքական իրադարձություններից, որոնք Ընկերությունը անգոր է վերահսկել:

- 3.2.1.5. **Իրացվելիության ռիսկ.** Ցածր իրացվելիությունը հատուկ է Հայաստանի կապիտալի շուկային, ինչպես և այլ անցումային տնտեսություններին: Ընկերության արժեթղթերը ցուցակվելու են Հայաստանի Ֆոնդային Բորսայի առևտրային հարթակում, բայց չնայած Ընկերության ջանքերին, գոյություն ունի այդ արժեթղթերի երկրորդային շուկայի ցածր ակտիվության ռիսկ: Հետևաբար ներդրողը կարող է հայտնվել այնպիսի իրադրության մեջ, երբ կարող է հնարավորություն չունենալ վաճառելու այդ բաժնետոմսերը: Այսպիսով ցածր իրացվելիությունը կարող է ազդել ներդրումները Ընկերությունից հանելու՝ բաժնետերերի կարողության վրա: Ավելին, իրավիճակը կարող է ավելի բարդանալ, երբ առքի և վաճառքի գների տարբերությունը զգալի մեծ լինի և վաճառքը հանգեցնի զգալի կորուստների:
- 3.2.1.6. **Նորմատիվ և օրենսդրական դաշտի փոփոխություններ.** ԼՂՀ իրավական դաշտում օրենսդրական բարեփոխումների գործընթացը դեռևս չի ավարտվել: Այս բարեփոխումների ճանապարհին օրենսդրական համակարգում կարող են այնպիսի փոփոխություններ կատարվել, որոնք կդառնան անորոշության լրացուցիչ գործոն: ԼՂՀ օրենսդրական դաշտին վերաբերվող ցանկացած անորոշություն կարող է հանգեցնել երկրում տնտեսական իրավիճակի վատթարացման և, հետևաբար, ազդել Ընկերության գործունեության վրա: Միաժամանակ, 1990-ականների սկզբին ընդունված մի շարք օրենքներ վերանայման և լրացումների կարիք ունեն, իսկ որոշները առհասարակ պետք է փոխարինվեն նորերով: Ամեն դեպքում, ԼՂՀ օրենսդրական դաշտի բարեփոխումները դեռևս չեն ավարտվել և անորոշ է, թե որքանով այս գործընթացը կարող է աջակցել երկրում տնտեսական գործունեության զարգացմանը:
- 3.2.1.7. **Բնակլիմայական պայմանների ռիսկեր.** Ընկերության գործունեության առանձնահատկություններով պայմանավորված՝ բնակլիմայական պայմաններն ունեն էական ազդեցություն նրա գործունեության վերջնական արդյունքների վրա: Այսպես, Ընկերության հասույթը էականորեն պայմանավորված է համապատասխան գետի ջրի հոսքի ծավալներով: Չնայած նրան, որ նախկին մի քանի տարիների ջրի հոսքի ցուցանիշների վերլուծությունը թույլ է տալիս բավականին մեծ ճշգրտությամբ կատարել կանխատեսումներ նրա ապագա հոսքի վերաբերյալ, այնուամենայնիվ, բնակլիմայական պայմանների փոփոխությունը կարող է հանգեցնել Ընկերության հասույթի կրճատմանը և հետևաբար ֆինանսական այլ ցուցանիշների էական վատթարացմանը:

3.2.2. Թողարկողի հիմնական գործունեության նկարագիրը

- 3.2.2.1. Ընկերության գործունեության հիմնական ուղղությունը էլեկտրաէներգիայի արտադրությունն ու վաճառքն է, որն էլ հանդիսանում է շահույթի ստացման միակ աղբյուրը: Էլեկտրաէներգիայի արտադրությունն Ընկերությունն իրականացնում է Սարսանգի հիդրոէլեկտրակայանի միջոցով: Արտադրված էլեկտրաէներգիան Ընկերությունը ֆիքսված սակագնով վաճառում է ԼՂՀ էլեկտրաէներգիայի շուկայի միակ օպերատոր՝ «Արցախէներգո» ՓԲԸ-ին, որն ունի ԼՂՀ տարածքում էլեկտրաէներգիայի փոխանցման և բաշխման լիցենզիա: Վաճառքը իրականացվում է համաձայն առուվաճառքի պայմանագրի, որը գրանցված է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի կողմից: Վաճառքի սակագները սահմանվում են Հանձնաժողովի կողմից:
- 3.2.2.2. Ընկերության հիմնական ակտիվը Սարսանգի հիդրոէլեկտրակայանն է, որը կառուցվել է 1976թ. ԼՂՀ հիմնական գետի՝ Թարթառի վրա, և համարվում է նախկին Սովետական Միության լավագույն և սարքավորումներով առավելագույնս հագեցած ՀԷԿ-երից մեկը: Սարսանգի ՀԷԿ-ը ԼՂՀ էներգիայի աղբյուրներից ամենախոշորն է: ՀԷԿ-ը ունի 50 ՄՎտ հզորություն և արտադրում է տարեկան 90-140 մլն. կՎտ/ժամ էլեկտրաէներգիա: Սարսանգի ՀԷԿ-ը հագեցած է երկու հիդրոտուրբիններով՝ յուրաքանչյուրը 25 ՄՎտ դրվածքային հզորությամբ և վայրկյանում 33.2մ^3 ջրի օգտագործման ծավալներով: Տուրբինները կապիտալ վերանորոգվում են յուրաքանչյուր 7 տարին մեկ, բացի դրանից ամեն 3 տարին մեկ կատարվում են պարտադիր ընթացիկ վերականգնողական աշխատանքներ:
- 3.2.2.3. Սարսանգի ՀԷԿ-ը տեղակայված է Սարսանգի ջրամբարի վրա: Վերջինս ունի 500 մլն. մ³ արդյունավետ ծավալ: Ամբարտակի բարձրությունը և լայնությունը կազմում են համապատասխանաբար 730մ և 550մ, որը նույնիսկ եվրոպական երկրների շարքում համարվում է ամենաբարձրերից մեկը:
- 3.2.2.4. Չնայած Ընկերությունը, ստեղծվելով 2007թ. նոյեմբերի 1-ին, ունի գործունեության բավականին սահմանափակ պատմություն, Սարսանգ ՀԷԿ-ը ունի էլեկտրաէներգիայի արտադրության ավելի քան երեսունամյա փորձ: Ցավոք սրտի, ջրի հոսքի, ինչպես նաև էլեկտրաէներգիայի արտադրության վերաբերյալ տվյալները առկա են միայն 1994թ.-ից սկսած, որոնք ներկայացված են ստորև բերված գծանկարում:

Գծանկար 2. Սարսանգի ՀԷԿ-ի գործունեության հիմնական ցուցանիշները 1994-2007թթ.



Աղբյուրը՝ «Արցախ ՀԷԿ» ԲԲԸ

3.2.2.5. Ինչպես ներկայացված է գծանկարում, էլեկտրաէներգիայի արտադրության ծավալները տարիների մեջ փոփոխվում են ջրի հոսքի փոփոխությունների հետ միասին: Բացի այդ, էլեկտրաէներգիայի արտադրության ծավալները փոփոխվում են նաև ըստ ամիսների: Հետաքրքրական է նաև, որ չնայած գարնանը ջրի հոսքն ավելանում է, էլեկտրաէներգիայի արտադրության ծավալները դրա հետ մեկտեղ չեն ավելանում: Սա բացատրվում է ՀԷԿ-ի շահագործման համապատասխան քաղաքականությամբ, որը համապատասխանում է ԼՂՀ էլեկտրաէներգիայի պահանջարկի կառուցվածքին: Էլեկտրաէներգիայի պահանջարկը աճում է հատկապես ուշ աշնանը և ձմռանը՝ նվազելով տաք եղանակներին: Այդ իսկ պատճառով, պահանջարկի փոփոխություններին համապատասխանելու համար, Սարսանգի ՀԷԿ-ը կուտակում է ջուրը Սարսանգի ջրամբարում, սահմանափակելով էլեկտրաէներգիայի արտադրությունը գարնանը և սկսում է օգտագործել այն ուշ աշնանը և ձմռանը, երբ ջրի հոսքը նվազում է, իսկ պահանջարկը՝ աճում:

- 3.2.2.6. Սարսանգ ՀԷԿ-ը ԼՂՀ տարածքում էլեկտրաէներգիա արտադրող միակ միավորն է: Այն արտադրում է միջինում տարեկան 90-140 մլն կվտ/ժամ էլեկտրաէներգիա, որը կազմում է ԼՂՀ էլեկտրաէներգիայի նկատմամբ ներկայիս պահանջարկի մոտ 40-60%-ը (2007թ. տվյալներով ԼՂՀ էլեկտրաէներգիայի սպառումը կազմել է 225 մլն կվտ/ժամ): Պահանջարկի մնացած մասը բավարարվում է Հայաստանից ներմուծած էլեկտրաէներգիայի հաշվին:
- 3.2.2.7. Ինչպես արդեն նշել ենք, Ընկերությունը ունի գործունեության խիստ սահմանափակ պատմություն: Ստորև բերված աղյուսակն ամփոփում է Ընկերության կողմից արտադրված էլեկտրաէներգիայի հիմնական բնութագրիչներն ըստ ամիսների:

Աղյուսակ 3. Ընկերության կողմից արտադրված էլեկտրաէներգիայի ծավալները և վաճառքի սակագներն ըստ ամիսների

| Տարին | Ամիսը | Գինը (դրամ/կվտժ, առանց ԱԱՀ) | Ծավալը (կվտ/ժ) |
|-------|----------------------|-----------------------------|-------------------|
| 2007 | Նոյեմբեր | 3 | 12,727,600 |
| | Դեկտեմբեր | 3 | 11,932,000 |
| | Ընդամենը 2007 | | 24,659,600 |
| 2008 | Հունվար | 3 | 10,836,400 |
| | Փետրվար | 3 | 11,212,400 |
| | Մարտ | 3 | 10,202,800 |
| | Ապրիլ | 3 | 1,400,400 |
| | Ապրիլ | 3.5 | 1,447,200 |
| | Մայիս | 3.5 | 5,339,200 |
| | Հունիս | 3.5 | 5,886,971 |
| | Հուլիս | 3.5 | 3,000,000 |
| | Օգոստոս | 3.5 | 5,300,000 |
| | Սեպտեմբեր | 3.5 | 3,500,000 |
| | Հոկտեմբեր | 3.5 | 6,000,000 |
| | Նոյեմբեր | 9 | 14,000,000 |
| | Դեկտեմբեր * | 9 | 13,000,000 |
| | | Ընդամենը 2008 | - |

Աղբյուրը՝ «Արցախ ՀԷԿ» ԲԲԸ

* «Արցախ ՀԷԿ» ԲԲԸ գնահատականներ

- 3.2.2.8. Ինչպես երևում է վերը բերված աղյուսակից, էլեկտրաէներգիայի արտադրության ծավալները խիստ անկում են ապրել սկսած ապրիլ ամսվանից: Դա պայմանավորված է մի շարք հանգամանքներով.
 - ✓ Նախ եղանակի փոփոխությունը և օդի միջին ջերմաստիճանի բարձրացումը հանգեցրեց էլեկտրաէներգիայի նկատմամբ պահանջարկի կտրուկ նվազման և հետևաբար էլեկտրաէներգիայի արտադրության ծավալների կրճատմանը:
 - ✓ Ամառվա ամիսներին իրականացվեցին Սարսանգ ՀԷԿ-ի երկու հիդրոտուրբիններից մեկի ոչ պլանային վթարային վերանորոգման

աշխատանքներ, որի ընթացքում ՀԷԿ-ը աշխատում էր միայն մեկ հիդրոտուրբինով՝ կես հզորությամբ:

- ✓ Մատադիս 1 ՀԷԿ-ի շինարարական որոշ աշխատանքերը պահանջում էին ջրի մինիմալ քանակության առկայություն գետում:

Այս ամենի արդյունքում էլեկտրաէներգիայի արտադրության ծավալները կտրուկ անկում ապրեցին: Սակայն Սարսանգ ՀԷԿ-ի, հետևաբար նաև Ընկերության գործունեության արդյունավետության գրավականներից մեկը հանդիսանում է Սարսանգի ջրամբարի առկայությունը, որը հնարավորություն է ընձեռում ցածր պահանջարկի և էլեկտրաէներգիայի արտադրության ծավալների կրճատման ժամանակ կուտակել հոսող ջուրը ջրամբարում և հետագայում այն օգտագործել՝ կտրուկ ավելացնելով էլեկտրաէներգիայի արտադրության ծավալները՝ նույնիսկ գետի ջրի բնական հոսքի կրճատման դեպքում: Այսպիսով, Սարսանգի ջրամբարը հնարավորություն է տալիս արդյունավետ կառավարել գետի ջրի բնական հոսքը՝ նվազեցնելով բնակլիմայական պայմանների սցոնարիայի սցոնարիայի ռիսկը որոշակի կարճաժամկետ ժամանակահատվածում:

- 3.2.2.9. Ինչ վերաբերում է սակագներին՝ Ընկերության ստեղծման պահից մինչև ապրիլ ընկած ժամանակահատվածը արտադրված էլեկտրաէներգիան վաճառվում էր Արցախէներգո ընկերությանը 3 դրամ/կվտ/ժամ (առանց ԱԱՀ) ֆիքսված սակագնով: Համաձայն ԼՂՀ հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի 2008թ. Ապրիլի 20-ի որոշման Արցախ ՀԷԿ-ի համար սահմանվել 3.5 դրամ կվտ/ժամ սակագինը: Սակայն ելնելով Ընկերության հետագա գործունեության իրականացման ռազմավարությունից և մրցունակության բարելավման նպատակներից Հանձնաժողովը, Ընկերության դիմումի համաձայն վերանայել է գործող սակագները և 2008թ. հոկտեմբերի 1-ի թիվ 51Ա Որոշմամբ սահմանել է նոր սակագին՝ 9 դրամ կվտ/ժամ, որը սկսել է գործել 2008թ. Նոյեմբերի 1-ից:
- 3.2.2.10. Ազդագրի գրանցման ներկայացմանը նախորդող ժամանակահատվածում, Ընկերությունը նոր ապրանքներ չի արտադրել և նոր ծառայություններ չի իրականացրել:
- 3.2.2.11. Ընկերությունը չի զբաղվում բնական ռեսուրսների արդյունահանմանը կամ վերամշակմամբ:

Ոլորտի հակիրճ նկարագիրը և զարգացման միտումները

- 3.2.2.12. ԼՂՀ էլեկտրաէներգետիկ համակարգը կապված է Հայաստանի հետ 110 կՎ երկարությամբ ձգվող Շինուհայրը և Ստեփանակերտը կապող էլեկտրական լարերի միջոցով: Փաստացի, ԼՂՀ էլեկտրաէներգետիկ համակարգը հանդիսանում է Հայաստանի համապատասխան համակարգի մի մասը, հաշվի առնելով նաև այն փաստը, որ Սարսանգի կողմից արտադրվող էլեկտրաէներգիայի ծավալը օրեկան կտրվածքով կարգավորվում է Հայաստանից: Չնայած դրան, յուրաքանչյուր տարի Ընկերությունը «Արցախէներգո» ՓԲԸ-ի հետ կնքում է պայմանագիր, որտեղ ֆիքսվում է Ընկերության կողմից էլեկտրաէներգիայի արտադրության և վաճառքի նվազագույն ծավալները: Նշված ծավալների ֆիքսման համար հիմք են ծառայում Ընկերության, «Արցախէներգո» ՓԲԸ-ի, ինչպես նաև Հայաստանի համապատասխան կառույցների մասնագետների փորձագիտական գնահատականները առաջիկա տարվա ընթացքում էլեկտրաէներգիայի պահանջարկի վերաբերյալ:
- 3.2.2.13. Ներկայումս էական փոփոխություններ են սպասվում ԼՂՀ էլեկտրաէներգիայի ոլորտում: Այս փոփոխությունները կապված են պետության կողմից սույն ոլորտի զարգացման նոր քաղաքականության կիրառման հետ: Հիդրոէներգետիկան համարվում է ԼՂՀ պետական քաղաքականության գերակա ուղղություններից մեկը: Այդ պատճառով նոր ձևավորված կառավարությունը որոշակի խթաններ է ստեղծել և գործողություններ է ձեռնարկել այդ ոլորտի զարգացման և ներդրումների ներգրավման համար: Մասնավորապես, կառավարությունը երկու կարևոր բարեփոխումներ է ձեռնարկել էլեկտրաէներգիայի ոլորտում:
- ✓ Առաջինը կոչվում է «ԼՂՀ էլեկտրաէներգիայի Բաշխման Ցանցերի Վերակառուցում և Վերազինում», որը նպատակաուղղված է բնակչությանը բարձր որակի և անխափան էլեկտրաէներգիա մատուցելուն: Այս ծրագիրը ներառում է հին ենթակայանների և հաղորդիչ գծերի վերակառուցում և նորերի կառուցում, 110/35 կՎ ս հզորությամբ բաշխման ցանցերի կառավարման համակարգերում, ինչպես նաև ֆինանսական և հաշվապահական հաշվառման համակարգերում ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների ներդրում, Հայաստանի և ԼՂՀ համակարգերի միջև էլեկտրաէներգիայի հաղորդման երկրորդ հիմնական գծի կառուցում և այլն: Ծրագրի հիմնական արդյունքը պետք է լինի վերջնական սպառողներին բարձր որակի և անխափան էլեկտրաէներգիայի փոխանցումը և բաշխումը: Այս ծրագիրը թույլ կտա նաև կրճատել ընդհանուր համակարգի տեխնիկական կորուստները 12%-ից մինչև 10%, իսկ գերնորմատիվային կորուստները 10%-ից մինչև 1-2%: Ծախսերի այսպիսի նվազեցումը կհանգեցնի հավելյալ միջոցների խնայողությանը: Մտավոր գնահատականներով այդ գումարը կկազմի 430 մլն. դրամ, որը կօգտագործվի բաշխման ցանցերի հետագա զարգացման համար: Ծրագիրը նախատեսվում է իրականացնել 2008-2015թթ.:

- ✓ Երկրորդ բարեփոխումը, որ ձեռնարկվել է կառավարության կողմից, «ԼՂՀ Ջրային Պաշարների Յուրացում» ծրագիրն է, որը նպատակաուղղված է ԼՂՀ էներգետիկ անկախության ապահովմանը, այսպիսով ապահովելով հանրապետության էներգետիկ անվտանգությունը: Այս ծրագրի շրջանակներում պետությունը արդեն ձեռնարկել է որոշակի քայլեր, մասնավորապես՝ «Արցախէներգո»-ից էլեկտրաէներգիայի արտադրության գործառույթի տարանջատումը և դրա փոխանցումը նորաստեղծ «Արցախ ՀԷԿ»-ին: Հաջորդ քայլերն ուղղված են նոր ՀԷԿ-երի կառուցման համար «Արցախ ՀԷԿ»-ի կողմից արտասահմանյան և ներքին ներդրումների ներգրավման աջակցությանը, ինչը հնարավոր կդարձնի ավելացնել էլեկտրաէներգիայի տեղական արտադրության ծավալները և դրանով իսկ նվազեցնել ներմուծման ծավալները, հնարավոր դարձնելով սեփական միջոցներով բավարարել էլեկտրաէներգիայի տեղական պահանջարկը: Այս ծրագրի իրատեսականությունը հիմնավորվում է նրանով, որ ԼՂՀ ջրային ռեսուրսների կառուցվածքը առավելագույնս հնարավորություն է ընձեռում օգտագործել երկրի արագահոս բարձրադիր գետերը հիդրոէներգիա արտադրելու համար: Ծրագրի համաձայն, 2015թ. համար նպատակային ցուցանիշ է հանդիսանում 350 մլն. կՎտ/ժամ էլեկտրաէներգիայի արտադրությունը, որը նախատեսվող 300 մլն. կՎտ/ժամ պահանջարկի համեմատ, հնարավորություն կընձեռի ոչ միայն լիովին բավարարել տեղական պահանջարկը, այլ նաև հավելյալ էլեկտրաէներգիան արտահանել Հայաստան:

Նշված ծրագրի իրականացման հիմնական գործիք է հանդիսանում սույն Ազդագրում ներկայացված նոր բաժնետոմսերի Առաջնային Հրապարակային Տեղաբաշխումը, որը կհանդիսանա այդ ծրագրի ֆինանսավորման հիմնական աղբյուր:

3.2.3. Ընկերության արտադրանքի սպառման շուկաների նկարագրությունը

Արտադրություն և սպառում

- 3.2.3.1. Ընկերությունը իր գործունեությունը ծավալում է ներքին շուկայում:
- 3.2.3.2. ԼՂՀ էներգետիկայի համակարգը կազմված է երկու հիմնական ոլորտներից՝ գազի և էլեկտրաէներգիայի ոլորտներից: Էլեկտրաէներգիան դեռևս մնում է էներգիայի հիմնական աղբյուրը ԼՂՀ բնակչության և տնտեսության (արդյունաբերություն, գյուղատնտեսություն, շինարարություն և ծառայություններ) համար: Էլեկտրաէներգիայի արտադրությունը և բաշխումը 2007թ. կազմել է 4.2 մլրդ դրամ, ինչը կազմում է տնտեսության «էլեկտրաէներգիայի, գազի և ջրի արտադրության և բաշխման» 63.1%-ը: Ստորև բերված աղյուսակում տրված է ԼՂՀ էլեկտրաէներգիայի հաշվեկշիռը 2000-2007թթ. և 2008թ. առաջին եռամսյակի համար:


Աղյուսակ 4. ԼՂՀ էլեկտրաէներգիայի հաշվեկշիռը, մլն կվտ/ժամ

| | 2000 | 2001 | 2002 | 2003 | 2004 | 2005 | 2006 | 2007 | 2008Q1 |
|------------------------------------|--------------|--------------|--------------|--------------|--------------|--------------|--------------|--------------|-------------|
| Արտադրություն | 43.1 | 51.4 | 108.6 | 130.6 | 137.0 | 112.1 | 69.1 | 90.4 | 32.3 |
| Ներմուծում | 117.4 | 112.2 | 72.0 | 68.9 | 77.3 | 115.7 | 154.0 | 145.2 | 37.6 |
| Արտահանում | -5.5 | -12.5 | -33.3 | -44.0 | -44.6 | -17.7 | -3.4 | -10.1 | -0.3 |
| Ընդամենը սպառված էլ.էներգիա | 155.0 | 151.1 | 147.3 | 155.5 | 169.7 | 210.1 | 219.7 | 225.5 | 69.6 |

Աղբյուրը՝ ԼՂՀ Ազգային Վիճակագրական Ծառայություն, «Արցախէներգո» ՓԲԸ

3.2.3.3. Ինչպես ներկայացված է աղյուսակում, վերջին 8 տարիներին էլեկտրաէներգիայի ընդհանուր սպառումը աճել է 45%-ով: Չնայած դրան, էլեկտրաէներգիայի արտադրության ծավալները կտրուկ տատանվել են նշված տարիների ընթացքում և կառավարությունը ստիպված է եղել պահանջարկի մի մասը բավարարել էլեկտրաէներգիայի ներմուծման ճանապարհով, որը 2007թ. կազմել է էլեկտրաէներգիայի ընդհանուր սպառման 64%-ը: Սա հիմնականում պայմանավորված է նրանով, որ երկրում էլեկտրաէներգիա արտադրող միակ միավորը Սարսանգի ՀԷԿ-ն է, որը մինչև 2007թ. նոյեմբերը պատկանում էր «Արցախէներգո» ՓԲԸ-ին և միայն 2007թ. նոյեմբերին է անցել «Արցախ ՀԷԿ» ՓԲԸ-ին: Նրա արտադրության ծավալները մեծ կախման մեջ են Թարթառ գետի ջրի հոսքից ծավալներից:

Գծանկար 3. Սարսանգ ՀԷԿ-ի հիմնական ցուցանիշները




Աղբյուրը՝ «Արցախ ՀԷԿ» ԲԲԸ

Ինչպես ներկայացված է գծանկար 3-ում, ջրի հոսքը և հետևաբար էլեկտրաէներգիայի արտադրությունը տարիների ընթացքում դրսևորում են ցիկլային զարգացման միտումներ: Կոպիտ գնահատականներով, յուրաքանչյուր ցիկլը տևում է 4-6 տարի: Վերջին ցիկլը, որը սկսվել էր 2001թ. և տևեց 6 տարի, ունեցել է համապատասխանաբար 708.9 և 258.9 մլն. մ³ առավելագույն և նվազագույն ջրի հոսքի մակարդակներ, որոնք ապահովում էին համապատասխանաբար 137 և 51.5 մլն. կվտ/ժամ էլեկտրաէներգիա: Բացի այս մեծ ցիկլերից, տարվա ընթացքում առաջանում են նաև փոքր ցիկլեր: Այսպես, ջրի հոսքի ուժեղացման

միտումները սկսվում են ուշ աշնանը, շարունակվում է ձմռանը, հասնում իր գագաթնակետին գարնանը և նվազում է ուշ գարնանը և ամռանը:

3.2.3.4. Մեկ շնչի հաշվով էլեկտրաէներգիայի սպառումը 2007թ. կազմել է 1,624.6 կՎտ/ժամ, ինչը 2006թ. համեմատ աճել էր 1.83%-ով: Համադրելով նշված ցուցանիշը ընդհանուր տնտեսական զարգացման ցուցանիշի՝ մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ի հետ, տեսնում ենք, որ ԼՂՀ-ն գտնվում է այնպիսի երկրների շարքում, ինչպիսիք են Մոլդովան, Դրոգասանը, Ուզբեկստանը և Վրաստանը: Ինչպես ներկայացված է գծանկար 4-ում, մեկ շնչի հաշվով էլեկտրաէներգիայի սպառման ամենաբարձր ցուցանիշը դրսևորել է Ռուսաստանը: Բայց այս երկու ցուցանիշների համադրության արդյունքում զարգացող և անցումային երկրների շարքում առաջատար դիրքերն են զբաղեցնում Արևելյան Եվրոպայի երկրները:


Գծանկար 4. 2006 թ. զարգացող և անցումային երկրների էլեկտրաէներգիայի օգտագործումը



Աղբյուրը՝ CIA-World Factbook, World Bank-World Development Indicators, ԼՂՀ ԱՎԾ

3.2.3.5. Ուսումնասիրելով էլեկտրաէներգիայի պահանջարկի կառուցվածքը՝ տեսնում ենք, որ 2000թ. համեմատ, 2007թ. արդյունաբերության չափաբաժինը համարյա կրկնապատկվել է, 2008թ. առաջին եռամսյակում հասնելով ընդհանուր պահանջարկի 30.3%, ինչը արդյունք է արդյունաբերության վերջին տարիների զգալի զարգացման: Բացի այդ, հետաքրքրական է նաև այն, որ 2000թ. համեմատ 2008թ. առաջին կիսամյակում, էլեկտրաէներգիայի բաշխման կորուստները նվազել են ավելի քան երկու անգամ: Այս առումով անհրաժեշտ է նշել, որ կառավարությունը ձեռնարկել է բաշխման համակարգի վերակառուցման և վերազինման ծրագիր, որը կնվազեցնի բաշխման կորուստները, հասցնելով այն 12%-ի:

Գծանկար 5. Էլեկտրաէներգիայի սպառման կառուցվածքը, %



Աղբյուրը՝ ԼՂՀ Ազգային Վիճակագրական Ծառայություն

Փոխանցում և բաշխում

3.2.3.6. ԼՂՀ էլեկտրաէներգիայի բաշխման համակարգը սերտ կապված է Հայաստանի Հանրապետության էներգետիկայի համակարգի հետ և կազմում է դրա մի մասը: Էլեկտրաէներգիայի արտադրության, արտահանման և ներմուծման ծավալները որոշակիորեն կախված են Հայաստանում էլեկտրաէներգիայի պահանջարկից և առաջարկից:

3.2.3.7. ԼՂՀ էլեկտրաէներգիայի ոլորտում հիմնական օպերատորը «Արցախէներգո» ՓԲԸ-ն է, որի միակ բաժնետերը ԼՂՀ-ն է ի դեմս կառավարության: Վերջինս միակ լիցենզավորված օպերատորն է, որը մատուցում է էլեկտրաէներգիայի փոխանցման և բաշխման ծառայություններ ԼՂՀ-ում: Ինչպես արդեն նշվել էր, մինչ վերջերս «Արցախէներգո» ՓԲԸ-ն, բացի օպերատորից, իրականացնում էր նաև էլեկտրաէներգիայի արտադրության գործունեություն՝ համապատասխան լիցենզիայի հիման վրա: Էլեկտրաէներգիայի արտադրությունն իրականացվում էր Սարսանգ ՀԷԿ-ի միջոցով: Սակայն ԼՂՀ նոր ձևավորված կառավարության որոշման հիման վրա, 2007թ. նոյեմբերին հիմնադրվեց 100% պետական մասնակցությամբ «Արցախ ՀԷԿ» ՓԲԸ-ն, որին և փոխանցվեց Սարսանգի ՀԷԿ-ը: Այս որոշման նպատակն էր տարանջատել էլեկտրաէներգիայի արտադրության և փոխանցման/բաշխման գործառույթները՝

- ✓ հիմքեր ստեղծելով փոքր և միջին ՀԷԿ-երի ստեղծման և զարգացման համար,
- ✓ ապահովելով և բարձրացնելով շուկայի մասնակիցների կարգավորման և վերահսկողության արդյունավետությունը,
- ✓ հնարավոր դարձնելով «Արցախ ՀԷԿ»-ի ընդլայնումը և նոր ՀԷԿ-երի ստեղծումը ԼՂՀ տարբեր գետերի վրա՝ ներքին և արտաքին ներդրումների ներգրավման ճանապարհով:

ԼՂՀ Էներգետիկայի ոլորտի կարգավորումը

- 3.2.3.8. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Էներգետիկայի ոլորտի կարգավորումը կատարվում է 4 հիմնական օրենքներով և մի շարք ենթաօրենսդրական ակտերով: Այդ օրենքներն են՝
- ✓ ԼՂՀ Օրենքը Էներգետիկայի մասին
 - ✓ ԼՂՀ Օրենքը Էներգախնայողության և վերականգնվող էլեկտրաէներգիայի մասին
 - ✓ ԼՂՀ Օրենքը Էներգետիկայի և էլեկտրաէներգիայի սպառման ոլորտում պետական տեխնիկական վերահսկողության մասին
 - ✓ ԼՂՀ Օրենքը Հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող մարմնի մասին
- 3.2.3.9. Հիմնական օրենքը, որը սահմանում է ԼՂՀ Էներգետիկայի ոլորտի գործունեության և կարգավորման հիմնական սկզբունքները Էներգետիկայի մասին ԼՂՀ Օրենքն է: Այս օրենքը կարգավորում է ԼՂՀ-ում պետական մարմինների, էներգետիկայի ոլորտի ինստիտուտների և էլեկտրաէներգիայի, ջերմային և բնական գազի սպառողների միջև հարաբերությունները:
- 3.2.3.10. ԼՂՀ Էներգետիկայի ոլորտի կարգավորումն իրականացնում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովը, որը գործում է «Էներգետիկայի մասին» ԼՂՀ օրենքով իրեն տրված իրավասությունների շրջանակներում և ինքնուրույն է այդ իրավասությունների շրջանակում:
- 3.2.3.11. Ինչպես արդեն նշել ենք, ԼՂՀ Էներգետիկայի համակարգի հիմնական կառույցներից մեկը «Արցախէներգո» ՓԲԸ-ն է: Այն լրիվ պետական մասնակցությամբ փակ բաժնետիրական ընկերություն է, որը գործում է որպես էլեկտրաէներգիայի միակ օպերատոր և, փաստորեն, ԼՂՀ Էներգետիկայի համակարգում հանդես է գալիս «մարքեթ մեյքերի» դերում: 2007թ. նոյեմբերի 1-ից Սարսանգի ՀԷԿ-ը տարանջատվեց «Արցախէներգո»-ից և տրվեց նորաստեղծ «Արցախ ՀԷԿ» ՓԲԸ-ին: Այս գործողությունները ԼՂՀ նոր կառավարության կատարած բարեփոխումների մի մասն են կազմում և նպատակաուղղված են հիդրոէներգիայի արտադրության արդյունավետության բարձրացմանը, նոր ՀԷԿ-երի ստեղծման արդյունքում սեփական միջոցներով էլեկտրաէներգիայի ողջ պահանջարկի ապահովմանը և, ի վերջո, էլեկտրաէներգիայի փոխանցման և բաշխման առանձնացման ճանապարհով, վերահսկողության արդյունավետության բարձրացմանը:

Էլեկտրաէներգիայի սակագները

- 3.2.3.12. Էլեկտրաէներգիայի սակագները սահմանվում են Հանձնաժողովի կողմից: Հանձնաժողովը Էլեկտրաէներգիայի սակագները սահմանում է հետևյալ սկզբունքների հիման վրա.
- ✓ լիցենզիայի պայմաններին համապատասխան լիցենզավորված գործունեություն իրականացնելու համար անհրաժեշտ՝ հիմնավորված շահագործման և պահպանման ծախսերի, հիմնական միջոցների մաշվածության և ոչ նյութական ակտիվների ամորտիզացիայի փոխհատուցման ապահովումը.
 - ✓ ողջամիտ շահույթի ստացման հնարավորության ապահովումը.
 - ✓ հիմնավորված վարկերի սպասարկման ծախսերի ներառումը.
 - ✓ սպառման ծավալով, պատվիրված հզորությամբ, տարվա եղանակով, օրվա ժամով, միացման պայմաններով, ծառայությունների տեսակներով պայմանավորված սակագների տարբերակումը.
 - ✓ հիմնավորված և անհրաժեշտ ապահովագրական ծախսերի ներառումը.
 - ✓ բնապահպանական նորմերն ապահովելու համար անհրաժեշտ հիմնավորված ծախսերի ներառումը.
 - ✓ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության կողմից հաստատված էներգետիկայի զարգացման ծրագրով նախատեսված էներգատեղակայանքների կոնսերվացման և պահպանման ծախսերի ներառումը.
 - ✓ հիմնավորված տեխնիկական և առևտրային կորուստների ներառումը.
 - ✓ օրենսդրությամբ նախատեսված հիմնավորված և անհրաժեշտ այլ ծախսերի ներառումը:
- 3.2.3.13. Հանձնաժողովի կողմից հաստատված սակագները ուժի մեջ են մտնում որոշման ընդունումից 30 օր հետո: Ընդունված սակագները գործում են նվազագույնը 6 ամիս, եթե Հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող մարմնի մասին ԼՂՀ Օրենքով այլ բան սահմանված չէ: Բացի այդ, Հանձնաժողովը կարող է էլեկտրաէներգիա արտադրողների և բաշխողների համար երկարաժամկետ սակագներ սահմանել: Սահմանված սակագները կարող են դիտվել որպես հաստատուն մեծություններ կամ որոշակի հաշվարկների և պարամետրերի վրա հիմնված բանաձևեր: Սակագները կարող են վերանայվել և նորացվել Հանձնաժողովի նախաձեռնությամբ Հանձնաժողովի կողմից սահմանված կարգով, տնտեսական գործունեության, էլեկտրաէներգիա արտադրողների ներդրումային ծրագրերի, ինչպես նաև սպառողների ծառայությունների վերաբերյալ որոշակի պահանջների հիման վրա:
- 3.2.3.14. Ստորև բերված աղյուսակը ներառում է ԼՂՀ էլեկտրաէներգիայի արտադրության և բաշխման ներկա և կանխատեսվող սակագները: Համաձայն հիդրոէլեկտրաէներգիայի ոլորտում ԼՂՀ կառավարության կողմից կիրառվող ռազմավարության, նախատեսվում է կիրառել տարբերակված սակագներ նոր կառուցվող ՀԷԿ-երի համար:

Աղյուսակ 5. Գործող սակագները և դրանց կանխատեսումները, դրամ կՎտ/ժամ

| | 2007 | 2008 | 2009 | 2010 | 2011 | 2012 | 2013 | 2014 |
|---|--------------|------|------|------|------|------|------|------|
| Արտադրության սակագներ, այդ թվում | | | | | | | | |
| Հին (գործող) ՀԷԿ-երի համար | 3.0 | 3.5* | 9.0 | 9.0 | 9.0 | 9.0 | 9.0 | 12.0 |
| Նոր ստեղծվող ՀԷԿ-երի համար | - | - | 15.0 | 15.0 | 15.0 | 15.0 | 15.0 | 15.0 |
| Բաշխման սակագներ, այդ թվում | | | | | | | | |
| իրավաբանական | <i>գիշեր</i> | 15 | 15 | 22 | 22 | 22 | 22 | 22 |
| անձանց | <i>ցերեկ</i> | 25 | 25 | 30 | 30 | 30 | 30 | 30 |
| բնակչությանը | <i>գիշեր</i> | 15 | 15 | 22 | 22 | 22 | 22 | 22 |
| | <i>ցերեկ</i> | 20 | 20 | 30 | 30 | 30 | 30 | 30 |

Աղբյուրը՝ ԼՂՀ Հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողով, Ընկերության գնահատականներ

* 3.5 դրամ կՎտ/ժամ արտադրության սակագինը գործում է 2008թ. ապրիլի 20-ից: 2008թ. Հունվարի 1-ից մինչև Ապրիլի 20 ընկած ժամանակահատվածում գործում էր 3 դրամ կՎտ/ժամ սակագինը: Նոյեմբերի 1-ից Ընկերության համար գործում է 9 դրամ կՎտ/ժամ սակագինը:

3.2.4. Ընկերության հիմնական մրցակիցները

3.2.4.1. Ընկերությունը էլեկտրաէներգիայի արտադրության ոլորտում ըստ էության մրցակիցներ չունի: ԼՂՀ-ում միակ ՀԷԿ-ը Սարսանգի ՀԷԿ-ն է, որը պատկանում է Ընկերությանը: Արտադրված ողջ էլեկտրաէներգիան վաճառվում է «Արցախէներգո» ՓԲԸ-ին՝ պայմանագրին համաձայն: ՀՀ-ում գործող ՀԷԿ-երը իրենց արտադրանքը նույնպես վաճառում են բաշխիչ ընկերություններին, որոնցից էլեկտրաէներգիան հասնում է վերջնական սպառողին: Բաշխիչ ընկերությունները ՀԷԿ-երից գնում են վերջիններիս արտադրած ողջ էլեկտրաէներգիան: Արտադրման ծավալը և ժամկետը որոշվում է միասնական կենտրոնից՝ Հայաստանից: Ընդ որում նշված գործոնները ավելի շատ կախված են ոչ թե ՀԷԿ-ի հզորությունից, սեփականատիրոջից կամ արտադրված էներգիայի գնից, այլ անհրաժեշտ էներգիայի վայրից, ՀԷԿ-ի տեղադիրքից և այլ նման գործոններից:

3.2.4.2. Ապագայում նոր մրցակիցներ ի հայտ գալու վերաբերյալ տեղեկություններ հայտնի չեն:

3.2.5. Ընկերության մատակարարները

Ընկերության հիմնական մատակարարները, որոնց բաժին է ընկնում ապրանքանյութական արժեքների (դրամական արտահայտությամբ) ընդհանուր մատակարարման 10 տոկոսից ավելին ներկայացված են ստորև բերված աղյուսակում:

Աղյուսակ 6. Ընկերության հիմնական մատակարարները և մատակարարման արժեքները 01.01.2008թ.-31.10.2008թ.

| | Մատակարարված ապրանքը | Մատակարարման արժեքը, դրամ | % |
|-------------------|----------------------|---------------------------|-------|
| «Ֆլեշ Պլյուս» ՍՊԸ | բենզին | 7,287,950 | 42.3% |
| «Նակոյ» ՍՊԸ | տեխնիկական յուղ | 5,184,000 | 30.1% |

Աղբյուրը՝ «Արցախ ՀԷԿ» ԲԲԸ

Ընկերության հիմնական պայմանագրերը

3.2.5.1. Ընկերությունը իր գոյության կարճատև ժամանակահատվածում կնքել է մի շարք պայմանագրեր: Դրանցից մի մասի (որոնց գինը գերազանցում է Ընկերության ակտիվների հաշվեկշռային արժեքի 5 տոկոսը) հիմնական պայմանները ներկայացված են ստորև բերված աղյուսակում.

Աղյուսակ 7. Ընկերության այն պայմանագրերը, որոնք գերազանցում են ակտիվների հաշվեկշռային արժեքի 5 տոկոսը

| Պայմանագրի կողմը | Պայմանագրի առարկան | Պայմանագրի գինը | Գործողության ժամկետը |
|---|---|------------------------|---|
| 1. «Արցախէներգո» ՓԲԸ | Էլեկտրաէներգիայի առուվաճառքի պայմանագիր | 3.6 - 4.8 դրամ/կՎտ ժամ | 01.01.2008թ.-31.12.2008թ. |
| 2. «Հայիդրոէներգանախագիծ» ՓԲԸ | Մատաղիս ՓՀԷԿ 2-ի բանվորական նախագծի աշխատանքների կատարում | 12,000,000 դրամ | 21.01.2008թ.-30.09.2008թ. |
| 3. ԼՂՀ-ում Ռուս-հայկական գործարար համագործակցություն ասոցիացիայի մասնաճյուղ | մատակարարման պայմանագիր, ռուսական արտադրության մալուխային արտադրանքի փոխանցում | 8,143,000 դրամ | 18.02.2008թ.-30.06.2008թ. |
| 4. ԼՂՀ-ում Ռուս-հայկական գործարար համագործակցություն ասոցիացիայի մասնաճյուղ | մատակարարման պայմանագիր, ռուսական արտադրության 12ԱԻ -300 տիպի 110 հատ մարտկոցների փոխանցում | 22,827,000 դրամ | 18.02.2008թ.-30.06.2008թ. |
| 5. Չինաստանի իրավաբանական անձ՝ «Գուանգդոնգ դաբու վոթր և Էլեկտրսիտի Էքվիփմենտ ֆեբրորի» | հիդրոագրեգատների մատակարարում | 630,000 ԱՄՆ դոլար | 15.04.2008թ.- մինչև պայմանագրով նախատեսված պարտավորությունների ամբողջական կատարումը |
| 6. «Արցախբանկ» ՓԲԸ | Վարկի տրամադրում | 250,000,000 դրամ | 22.05.2008թ.- մինչև պայմանագրով նախատեսված պարտավորությունների ամբողջական կատարումը |

Աղբյուրը՝ «Արցախ ՀԷԿ» ԲԲԸ

3.2.5.2. Ընկերությունը չունի ժամկետանց պայմանագրեր:

3.2.5.3. «ԱրցախԷներգո» ՓԲԸ հետ կնքված պայմանագրում վաճառվող էլեկտրաէներգիայի սակագինը սահմանված է հունվար-հունիս ժամանակահատվածի համար 3.0 դրամ/կՎտ ժամ առանց ԱԱՀ և հուլիս-դեկտեմբեր ժամանակահատվածի համար՝ 4.0 դրամ/կՎտ ժամ առանց ԱԱՀ: Չնայած պայմանագրում նշված սակագներին՝ Հանձնաժողովի որոշմամբ այդ սակագները ենթարկվել են փոփոխության, որոնք ձևակերպվել են որպես հավելվածներ նշված պայմանագրին:

3.2.6. Լիցենզիաներ, արտոնագրեր, ապրանքանիշեր և այլն

Ընկերությունը ունի Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության լիցենզիա (թիվ 0001): Լիցենզիան տրված է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի կողմից 2008 թ. մարտի 20-ին: Լիցենզիան տրված է 15 տարի ժամկետով:

3.2.7. Հետազոտություններ և զարգացման ուղղություններ

3.2.7.1. Քանի որ ելնելով իր գործունեության խիստ առանձնահատուկ բնույթից Ընկերությունը չի կարող ընդլայնել իր կոմպլեքս թողարկվող արտադրանքի տեսականին կամ մատուցել այլ ծառայություններ՝ Ընկերության հիմնական բաժնետերերը և ղեկավար մարմինները Ընկերության հետագա զարգացումը տեսնում են նրա ծավալների ընդլայնման մեջ: Մյուս կողմից, քանի որ գործող Սարսանգ ՀԷԿ-ի կողմից արտադրվող էլեկտրաէներգիայի ծավալների ընդլայնումը սահմանափակված է գետի ջրի հոսքով, այլ բնակլիմայական պայմաններով և ՀԷԿ-ի դրվածքային հզորությամբ, արտադրության ծավալների հետագա ընդլայնումը հնարավոր է միայն նոր արտադրական միավորների՝ ՀԷԿ-երի կառուցմամբ:

3.2.7.2. Ընկերության կողմից նախատեսվում է մոտ ապագայում կառուցել երեք նոր հիդրոէլեկտրակայան՝ Մատաղիս 1 և Մատաղիս 2 (Թարթառ գետի վրա) և Թրղի 1 (Թրղի գետից Թարթառ գետն իջնող ջրատարի վրա): Այս ՀԷԿ-երի կառուցումը ֆինանսավորվելու է սույն Ազդագրով նախատեսված բաժնետոմսերի թողարկումից և վաճառքից հավաքագրված միջոցներով: Հետագայում նախատեսվում է կառուցել ևս երկու ՀԷԿ՝ Թրղի 2 և Թրղի 3՝ նույնպես Թրղի գետից Թարթառ գետն իջնող ջրատարի վրա:

- 3.2.7.3. Ստեղծման պահից Ընկերության կողմից իրականացվել են հետազոտական աշխատանքներ կապված նոր ՀԷԿ-երի կառուցման հետ: Մասնավորապես՝ «Հայիդրոէներգանախագիծ» ՓԲԸ կողմից 21.01.2008թ. կնքված պայմանագրի համաձայն իրականացվել են ՀԷԿ-երի նախագծային աշխատանքներ, որի կատարած հաշվարկների համաձայն նոր ՀԷԿ-երի կառուցման նախնական արժեքն է 3,450,000,000 ՀՀ դրամ: Սույն նախագծահետազոտական աշխատանքի վերջնական արդյունքները գտնվում են ամփոփման փուլում: Հետազոտական և զարգացման աշխատանքների քաղաքականության վրա նշված պայմանագրի համաձայն կատարվել է 12,000,000 դրամի ծախս:
- 3.2.7.4. Ներկայումս սկսվել է Մատաղիս 1 ՀԷԿ-ի կառուցման աշխատանքները Ընկերության սեփական և փոխառու միջոցներով:

3.2.8. Ընկերության գործունեության մեջ ներգրավված գույքը

Ստորև բերված աղյուսակներում ներկայացված է Ընկերության գործունեության մեջ ներգրավված հիմնական գույքի նկարագիրը.

Աղյուսակ 8. Ընկերության գործունեության մեջ ներգրավված հիմնական գույքի նկարագիրը

| Գույքի անվանումը | Գույքի նկատմամբ իրավունքը | Գույքի օգտագործման ժամկետը | Հաշվեկշռային արժեքը ¹ |
|---|---------------------------|----------------------------|----------------------------------|
| Հողամաս (151,120.0 մ ²) ԼՂՀ Մարտակերտի շրջան | անհատույց օգտագործում | անժամկետ | - |
| «Սարսանգ» ՀԷԿ (շինություններ, 3,047.16 մ ² ընդհանուր մակերեսով) ԼՂՀ Մարտակերտի շրջան | սեփականություն | - | 131,406,675 |
| Պատվար, ջրի վթարային թողարկման թունել, շինարարական թունել | սեփականություն | - | 2,126,054,449 |
| Դերիվացիոն թունել | սեփականություն | - | 942,997,162 |
| Հիդրոգեներատոր (2 հատ) | սեփականություն | - | 1,573,875,000 |
| Կառավարման համակարգ | սեփականություն | - | 67,152,000 |
| Տրանսֆորմատոր | սեփականություն | - | 244,825,000 |
| Վարչական շենք (150 մ ²) ԼՂՀ, ք. Ստեփանակերտ, Ա. Առաքելյանի 10 | վարձակալություն | անժամկետ | - |
| Ընդամենը | | | 5,086,310,286 |

Աղբյուրը՝ «Արցախ ՀԷԿ» ԲԲԸ

Նշված ողջ գույքն օգտագործվում է բացառապես Ընկերության հիմնական գործունեության՝ էլեկտրաէներգիայի արտադրության նպատակով:

¹ Արժեքները բերված են 2007թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ համաձայն «ՈՒԱՅԳ-ԳԵՅԹ» ՍՊԸ անկախ գնահատողի գնահատման հաշվետվության:

Աղյուսակ 9. Ընկերության գույքի կազմը և կառուցվածքը 30.09.2008թ. դրությամբ

| Գույքի անվանումը | | Նկարագիրը | Մնացորդը (հազ. դրամ), % | |
|----------------------------|--|-------------------------|-------------------------|----------|
| 1. | Շենքեր | հաշվեկշռային արժեք | 3,137,563 | 61.68% |
| | | արժեք | 4,519,755 | 61.62% |
| | | կուտակված մաշվածություն | 1,382,192 | 61.49% |
| 2. | Փոխանցող հարմարանքներ | հաշվեկշռային արժեք | 113,026 | 2.22% |
| | | արժեք | 163,900 | 2.23% |
| | | կուտակված մաշվածություն | 50,875 | 2.26% |
| 3. | Մեքենաներ և սարքավորումներ | հաշվեկշռային արժեք | 1,569,517 | 30.85% |
| | | արժեք | 2,264,432 | 30.87% |
| | | կուտակված մաշվածություն | 694,915 | 30.91% |
| 4. | Տրանսպորտային միջոցներ | հաշվեկշռային արժեք | 9,367 | 0.18% |
| | | արժեք | 10,733 | 0.15% |
| | | կուտակված մաշվածություն | 1,365 | 0.06% |
| 5. | Արտադրական գույք, սնտեսական գույք, գործիքներ | հաշվեկշռային արժեք | 254,991 | 5.01% |
| | | արժեք | 373,405 | 5.09% |
| | | կուտակված մաշվածություն | 118,414 | 5.27% |
| 6. | Բազմամյա տնկարկներ | հաշվեկշռային արժեք | 2,637 | 0.05% |
| | | արժեք | 2,876 | 0.04% |
| | | կուտակված մաշվածություն | 240 | 0.01% |
| Ընդամենը հիմնական միջոցներ | | հաշվեկշռային արժեք | 5,087,101 | 100.00 % |
| | | արժեք | 7,335,101 | 100.00 % |
| | | կուտակված մաշվածություն | 2,248,001 | 100.00 % |

Աղբյուրը՝ «Արցախ ՀԷԿ» ԲԲԸ

3.2.9. Ներդրումների վերաբերյալ տեղեկություններ

3.2.9.1. Ընկերության ստեղծման պահից Ընկերության կողմից կատարված ներդրումները ներկայացված են ստորև բերված աղյուսակում.

Աղյուսակ 10. Ընկերության կողմից կատարված ներդրումները, 01.01.2008-30.09.2008թթ.

| | Ներդրման օբյեկտը | Ներդրման արժեքը, ՀՀ դրամ | | |
|-----------------|------------------------|--------------------------|-------------------------|--------------------|
| | | Չեռք բերման արժեքը | Կուտակված մաշվածություն | Մնացորդային արժեքը |
| 1. | Տրանսպորտային միջոցներ | 5,650,500 | 653,333 | 4,997,167 |
| 2. | Համակարգչային տեխնիկա | 2,092,000 | 188,750 | 1,903,250 |
| 3. | Գրասենյակային գույք | 3,302,450 | 297,902 | 3,004,548 |
| 4. | Լիցենզիա | 2,000,000 | 66,667 | 1,933,333 |
| 5. | Այլ գույք | 7,383,638 | 385,824 | 6,997,814 |
| Ընդամենը | | 20,428,588 | 1,592,475 | 18,836,113 |

Աղբյուրը՝ «Արցախ ՀԷԿ» ԲԲԸ

3.2.9.2. Ընկերությունը ընթացքի մեջ գտնվող ներդրումներ չունի:

3.2.10. Այն անձանց անվանացանկը, որտեղ թողարկողը, ներառյալ նրա դուստր ընկերությունները, բաժնային արժեթղթերի նշանակալից մասնակիցներ են

3.2.10.1. Ընկերությունը որևէ անձի բաժնային արժեթղթերի նշանակալից կամ խոշոր սեփականատեր չի հանդիսանում:

3.2.10.2. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տարածքում և նրանից դուրս Ընկերությունը չունի դուստր ու կախյալ ընկերություններ:

3.2.11. Թողարկողի աշխատողները, հատկացումները

3.2.11.1. Ընկերության աշխատողների թվաքանակը 2007թ. տարեվերջին կազմել է 110 (հարյուր տաս) մարդ:

3.2.11.2. Ընկերության աշխատակիցները սեփականության իրավունքով Ընկերության բաժնետոմսեր չունեն:

3.2.11.3. Ընկերության աշխատողների մասնակցությունը Ընկերության կապիտալում նախատեսված է Ընկերության բաժնետոմսերի բաց բաժանորդագրության ընթացքում ձեռքբերման միջոցով: Ընկերությունը դեռևս չի նախատեսում իրականացնել այնպիսի ծրագրեր, որոնց միջոցով աշխատողներին հնարավորություն կընձեռվի արտոնյալ պայմաններով մասնակցել Ընկերության կապիտալում:

3.2.12. Հարկային արտոնությունները

Ընկերության համար հատուկ հարկային արտոնություններ սահմանված չեն, Ընկերությունը գործում է ընդհանուր հարկային օրենսդրական դաշտում:

3.2.13. Գատական և իրավական ընթացակարգը

Ընկերության ստեղծման պահից Ընկերության նկատմամբ դատարանի, ինչպես նաև պետական մարմինների կողմից պատասխանատվության միջոցներ (վարչական, քաղաքացիաիրավական) չեն կիրառվել: Ընկերության դեմ սնանկության (անվճարունակության) կամ լուծարային վարույթի նախաձեռնություններ չեն կիրառվել:

3.2.14. Փոխկապակցված գործարքների վերաբերյալ տեղեկություններ

Վերջին տարվա ընթացքում Ընկերության հետ փոխկապակցված անձանց հետ Ընկերության կողմից կնքված գործարքներն են.

- 3.2.14.1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության վարչապետի 2008 թ. մայիսի 7-ի թիվ 145 «Ֆինանսական միջոցներ հատկացնելու մասին» որոշմամբ «Արցախ ՀԷԿ» փակ բաժնետիրական ընկերությանը արտաբյուջետային հաշվի մնացորդից՝ հետագայում վերականգնելու պայմանով 70,000,000 (յոթանասուն միլիոն) դրամ է հատկացվել, որի մասնաբաժինը Ընկերության՝ 2008թ. առաջին կիսամյակի եկամուտների ընդհանուր մեծության (համախառն հասույթի) մեջ կազմում է 48.17 տոկոս:
- 3.2.14.2. «Արցախ ՀԷԿ» ՓԲԸ և «Արցախէներգո» ՓԲԸ միջև 2008 թ. հունվարի 1-ին կնքված էլեկտրաէներգիայի առուվաճառքի թիվ 1 պայմանագրով «Արցախ ՀԷԿ» ՓԲԸ վաճառում, իսկ «Արցախէներգո» ՓԲԸ գնում է էլեկտրաէներգիա՝ պայմանագրով սահմանված կարգով: Պայմանագիրը գործում է մինչև 2008 թ. դեկտեմբերի 31-ը: Վաճառվող էլեկտրաէներգիայի սակագինը պայմանագրով սահմանված է.
- ✓ 3.0 դրամ/կՎտժ՝ 2008 թ. հունվար-հունիս ժամանակահատվածի համար՝ առանց ԱԱՀ,
 - ✓ 4.0 դրամ/կՎտժ՝ 2008 թ. հուլիս-դեկտեմբեր ժամանակահատվածի համար՝ առանց ԱԱՀ:

Քանի որ գործարքը դեռևս ավարտված չէ, գործարքի ընդհանուր մասնաբաժինը Ընկերության եկամուտների ընդհանուր մեծության մեջ հնարավոր չէ հաշվել:

3.2.15. Ընկերության նախատեսվող գործունեությունը և հեռանկարները

- 3.2.15.1. Ընկերությանը չի նախատեսում իր հիմնական գործունեության փոփոխություն ապագայում: Քանի որ Ընկերությունը զբաղվում է խիստ առանձնահատուկ տեսակի արտադրանքի՝ էլեկտրաէներգիայի արտադրությամբ, նա չի կարող թողարկել նոր տեսակի արտադրանքներ կամ մատուցել այլ ծառայություններ: Դրա հետ կապված՝ Ընկերության եկամուտի աղբյուրը ապագայում փոփոխման ենթակա չէ: Նրա հիմնական աղբյուրը մնում է էլեկտրաէներգիայի վաճառքից ստացվող միջոցները:
- 3.2.15.2. Ընկերությունը նախատեսում է իրականացնել լայնածավալ ներդրումային ծրագիր իր գործունեության ընդլայնման նպատակով՝ նոր հիդրոէլեկտրակայանների կառուցման ուղղությամբ: Նախատեսվում է կառուցել երեք հիդրոէլեկտրակայան Թարթառ գետի և Թրդի գետից Թարթառ գետն անցնող ջրատարի վրա: Նախատեսվող ՀԷԿ-երը իրենցից ներկայացնելու են փոքր (մինչև 5 ՄՎտ հզորությամբ) նորագույն սարքավորումներով հագեցած կայաններ, որոնց օգտակար կյանքի տևողությունը գնահատվում է մոտ 40 տարի (կախված ՀԷԿ-երի հիմնական սարքավորումների՝ հիդրոտուրբինների, գեներատորների և ղեկավարման կայանների որակից):

- 3.2.15.3. Համաձայն «Հայիդրոէներգանախագիծ» ՓԲԸ նախնական հաշվարկների՝ նշված երեք ՀԷԿ-երի կառուցման արժեքն է 3.45 մլրդ. դրամ: Այս ներդրումային ծրագրի ֆինանսավորման նպատակով Ընկերությունը թողարկում և սույն Ազդագրով առաջարկում է հասարակ անվանական բաժնետոմսեր: ՀԷԿ-երի կառուցման աշխատանքները նախատեսվում է ավարտել և նոր ՀԷԿ-երը գործարկել 2010թ. օգոստոս ամսին:
- 3.2.15.4. Բացի նշված երեք ՀԷԿ-երից, Ընկերությունը նախատեսում է կառուցել ևս 2 ՀԷԿ՝ Թրդի 2 և Թրդի 3, Թրդի գետից Թարթառ գետն անցնող ջրատարի վրա: Այս ՀԷԿ-երը նույնպես պատկանում են փոքր ՀԷԿ-երի դասին (մինչև 5 ՄՎտ հզորությամբ), որոնց կառուցման արժեքը՝ համաձայն «Հայիդրոէներգանախագիծ» ՓԲԸ նախնական հաշվարկների, կազմում է 1.72 մլրդ դրամ: Տվյալ ՀԷԿ-երի կառուցումը նախատեսվում է ավարտել 2011թ.:
- 3.2.15.5. Նախատեսված հինգ ՀԷԿ-երը հնարավորություն կտան Ընկերությանը 2011թ.-ից արտադրել լրացուցիչ 85.1 մլն. կՎտ/ժամ էլեկտրաէներգիա: Սա հնարավորություն կտա սեփական ուժերով բավարարել ԼՂՀ էլեկտրաէներգիայի պահանջարկի մոտ 85%-ը:
- 3.2.15.6. ՀԷԿ-երի կողմից արտադրվող էլեկտրաէներգիայի կանխատեսումները ներկայացված են ստորև բերված աղյուսակում: Ներկայացված կանխատեսումները հիմնված են ԼՂՀ կառավարության Արտադրական ենթակառուցվածքների վարչության և Ընկերության ղեկավարության կողմից տրամադրված տվյալների վրա: Նշված գնահատականների համար հիմք են ծառայել համապատասխան գետերի ջրի հոսքի և ջրի սպառման նախկին միտումները (ներառյալ ջրի հոսքի ցիկլային տատանումները), ինչպես նաև Սարսանգի ՀԷԿ-ի և նոր կառուցվող ՀԷԿ-երի դրվածքային հզորությունները և համապատասխան այլ տեխնիկական ցուցանիշները:

Աղյուսակ 11. Էլեկտրաէներգիայի արտադրության կանխատեսումներ, մլն. կՎտ/ժամ

| | 2009 | 2010 | 2011 | 2012 | 2013 | 2014 | 2015 |
|-----------------|-------------|--------------|--------------|--------------|--------------|--------------|--------------|
| Սարսանգ | 90.4 | 115.1 | 118.3 | 113.6 | 115.2 | 112.4 | 110.1 |
| Մատաղիս 1 | | | 10.2 | 22.4 | 22.4 | 22.4 | 22.4 |
| Մատաղիս 2 | | | 5.8 | 13.2 | 13.2 | 13.2 | 13.2 |
| Թրդի 1 | | | 4.7 | 16.5 | 16.5 | 16.5 | 16.5 |
| Թրդի 2 | | | | 20.9 | 20.9 | 20.9 | 20.9 |
| Թրդի 3 | | | | 12.1 | 12.1 | 12.1 | 12.1 |
| Ընդամենը | 90.4 | 115.1 | 139.0 | 198.7 | 200.3 | 197.5 | 195.2 |

Աղբյուրը՝ ԼՂՀ Կառավարության ենթակառուցվածքների վարչություն, «Արցախ ՀԷԿ» ԲԲԸ

3.2.15.7. Ընկերությունը չի իրականացնում որևէ գիտահետազոտական աշխատանք, ինչպես նաև նոր ապրանքների, ծառայությունների և տեխնոլոգիաների ներդրման ու կատարելագործման հետ կապված աշխատանքներ:

3.2.16. Թիրախային ներդրումային ծրագրեր

Ինչպես արդեն նշվել է, Ընկերությունը նախատեսում է իրականացնել լայնածավալ ներդրումներ երեք փոքր ՀԷԿ-երի կառուցման ուղությամբ: Յուրաքանչյուր նախագծվող ՀԷԿ ընկերության կողմից դիտարկվում է որպես առանձին ներդրումային ծրագիր՝ իրեն ներհատուկ գործառնական և ֆինանսական ցուցանիշներով: Ստորև բերված է տվյալ ներդրումային ծրագրերի նկարագիրը, մասնավորապես՝ շրջակա միջավայրի և բնակլիմայական պայմանների՝ որպես ՀԷԿ-երի գործունեության որոշիչ գործոնների նկարագիրը, նախագծվող ՀԷԿ-երի տեխնիկական պարամետրերը, ՀԷԿ-երի կառուցման ամփոփ նախահաշիվները և այլ տեղեկատվություն:

3.2.17. Բնակլիմայական պայմանների նկարագիրը

- 3.2.17.1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը բնորոշվում է լեռնային արագահոս գետերի առկայությամբ, որոնք ունեն հիդրոէներգետիկ բավականին մեծ պոտենցիալ: Թարթառ գետը հանդիսանում է երկրի ամենախոշոր գետը որի ընդհանուր երկարությունը հասնում է 200կմ, իսկ ջրհավաք մակերեսը՝ ավելի քան 2,650 կմ²: Այս գետի վրա տեղակայված է միակ ՀԷԿը՝ Սարսանգ ՀԷԿ-ը, որը գտնվում է Սարսանգի ջրամբարի վրա:
- 3.2.17.2. Թարթառ գետի և նրա վտակների աղբյուրները գտնվում են Ղարաբաղի լեռնահամակարգի ամենաբարձր կետերում՝ ԼՂՀ սահմաններից դուրս: Այն հոսում է Մարտակերտի շրջանով, ընդունում է Թրդի վտակը և հոսում դեպի Ադրբեջանի հանրապետություն: Ռելիեֆը տիպիկ լեռնային է, խիստ կտրտված, որը պայմանավորված է երկրաբանական կառուցվածքի առանձնահատկություններով և ֆիզիկաաշխարհագրական պայմանների բնույթով:
- 3.2.17.3. Թարթառ գետը ԼՂՀ-ի համար ունի խիստ մեծ էներգետիկ պոտենցիալ: Այն պատկանում է լեռնային տիպի գետերին, որն ունի ջրի հոսքի սեզոնային տատանումներ: Թարթառն ունի խառը սնուցման համակարգ. սնուցման հիմնական աղբյուրը հանդիսանում են հալոցքային և անձրևային ջրերը, իսկ ստորգետնյա ջրային աղբյուրներն ունեն երկրորդական նշանակություն:
- 3.2.17.4. Կլիմայական տեսանկյունից՝ Սարսանգի և Մատաղիսի ջրամբարները ներառող հատվածը բնութագրվում է մեղմ կլիմայական պայմաններով: Օդի միջին տարեկան ջերմաստիճանը կազմում է +13.8°C, բացարձակ նվազագույն ջերմաստիճանը՝ -31 °C, բացարձակ առավելագույն ջերմաստիճանը՝ +35 °C: Ոչ սառնամանիքային շրջանի միջին տևողությունն է 252 օր, առավելագույնը՝ 285 օր, նվազագույնը՝ 235 օր:

3.2.18. ՀԷԿ-երի տեխնիկական պայմանները

- 3.2.18.1. Մատաղիս 1 և Մատաղիս 2 ՀԷԿ-երը նախատեսվում է կառուցել Թարթառ գետի վրա՝ Մատաղիսի ջրամբարի հարևանությամբ: Մատաղիսի ջրամբարի առկայությամբ է հիմնականում պայմանավորված կառուցվող ՀԷԿ-երի տնտեսական նպատակահարմարությունը: Սույն ջրամբարն ունի 5.8 մլն մ³ ընդհանուր ծավալ և 3.5 մլն մ³ արդյունավետ ծավալ, սակայն ջրամբարի էներգետիկ ծավալը կազմում է միայն 0.64 մլն մ³:
- 3.2.18.2. Մատաղիս 1 ՀԷԿ-ը ջրամբարին է միանում ճնշումային ջրատար խողովակով, որի ընդհանուր երկարությունը կազմում է 600 մ (3 խողովակ, յուրաքանչյուրը՝ 200մ): Խողովակի տրամագիծը կազմում է հիմնականում 2.5 մ (յուրաքանչյուր խողովակի վերջում նախատեսվում է տեղադրել անցումային հատված՝ 1.6մ տրամագծով և 33մ երկարությամբ): Մատաղիս 2-ի ջրատար խողովակը ավելի փոքր է ընդհանուր 100 մ երկարությամբ (3 խողովակ, յուրաքանչյուրը՝ 33մ): ՀԷԿ-երը հագեցված են լինելու երեքական տուրբիններով: Մատաղիս 1-ի յուրաքանչյուր տուրբին 1.6 ՄՎտ հզորությամբ, Մատաղիս 2-ը՝ 1 ՄՎտ:
- 3.2.18.3. Թրդի 1 ՀԷԿ-ը տեղակայվելու է Թրդի գետից Թարթառ գետը միացնող ջրատար խողովակի վրա: Սույն ջրատար խողովակը կառուցվում է պետության նախաձեռնությամբ և պետական բյուջեի միջոցներով և ունենալու է գյուղատնտեսական նշանակություն՝ օգտագործվելու է հողերի ոռոգման նպատակով: Սակայն բացի ոռոգման նպատակով ծառայելուց, այն, համաձայն իրականացված հաշվարկների, կարող է ծառայել նաև հիդրոէլեկտրաէներգիա արտադրելու համար: Ջրատարի երկարությունը կազմում է մոտ 14.46 կմ, տրամագիծը 1,000-1,200 սմ: Թրդի 1 ՀԷԿ-ը տեղակայվելու է ջրատարի բերանից 6,051 մ վրա: Այն ունենալու է 3.7 ՄՎտ դրվածքային հզորություն, որը հնարավորություն է տալիս արտադրելու տարեկան 3.7 մլն կՎտ/ժամ էլեկտրաէներգիա: Ստորև բերված աղյուսակն ամփոփում է նախատեսվող ՀԷԿ-երի տեխնիկական պարամետրերը:

Աղյուսակ 12. Նախատեսվող ՀԷԿ-երի հիմնական տեխնիկական ցուցանիշները

| | Մատաղիսի ՀԷԿ 1 | Մատաղիսի ՀԷԿ 2 | Թրդի ՀԷԿ 1 |
|---|-------------------|-------------------|---------------|
| Գտնվելու վայրը | Մարտակերտ | Մարտակերտ | Մարտակերտ |
| Գետը | Թարթառ | Թարթառ | Թրդի |
| Ջրի ծախսը, մ ³ /վրկ | 30 | 30 | 1.8 |
| Ջրի ճնշումը, մ | 22 | 12 | 291 |
| Տուրբինների քանակը | 3 | 3 | |
| Պոտենցիալ դրվածքային հզորությունը, ՄՎտ | 4.8 | 3.0 | 3.7 |
| Էլ.էներգիայի տարեկան արտադրություն, ԳՎտ/ժամ | 22.4 | 13.2 | 16.5 |

Աղբյուրը՝ «Արցախ ՀԷԿ» ԲԲԸ, «Հայիդրոէներգանախագիծ» ՓԲԸ

3.2.19. Շինարարական աշխատանքներ

Ստորև բերված աղյուսակներն ամփոփում են Մատաղիս 1, Մատաղիս 2 և Թրդի 1 ՀԷԿ-երի կառուցման շինարարական մոնտաժային աշխատանքների նախահաշիվը: Տվյալ նախահաշիվը կազմվել է «Հայհիդրոէներգոնախագիծ» ՓԲԸ կողմից: Նախատեսվող շինարարության ժամկետն է 2 տարի: Քանի որ սույն ՀԷԿ-երի կառուցման աշխատանքներն արդեն իսկ սկսվել են Ընկերության կողմից նրա սեփական և փոխառու միջոցներով, նախնական հաշվարկների համաձայն շինարարական աշխատանքները կավարտվեն և ՀԷԿ-երը կգործարկվեն 2010թ. օգոստոսին:

Աղյուսակ 13. Մատաղիս 1 ՀԷԿ-ի կառուցման նախահաշիվը, հազ. դրամ

| | Շինարարական մոնտաժային աշխատանքներ | Սարքավորումներ | Այլ | Ընդամենը |
|--|------------------------------------|------------------|------------------|--------------------|
| Մատաղիս 1 | | | | |
| <i>Ընդամենը կառուցման արժեքը (առանց ԱԱՀ)</i> | <i>930,946.0</i> | <i>268,900.0</i> | <i>205,154.5</i> | <i>1,405,000.5</i> |
| այդ թվում՝ | | | | |
| Գլխային հանգույց | 231,147.0 | 5,556.0 | | 236,703.0 |
| Տուրբինային ջրատար | 372,280.6 | | | 372,280.6 |
| ՀԷԿ-ի շենք | 152,465.0 | | | 152,465.0 |
| Հիդրոուժային սարքավորումներ | 11,904.5 | 238,095.5 | | 250,000.0 |
| Բաշխման 35 կվոլտանոց ենթակայաններ | 6,568.3 | 15,174.6 | | 21,742.9 |
| Երկշրթայանի 35 կվոլտանոց օդային գծեր (3 կմ) | 29,772.2 | 1,841.6 | | 31,613.8 |
| այլ | 126,808.4 | 8,232.3 | 205,154.5 | 340,195.2 |

Աղբյուրը՝ «Հայհիդրոէներգոնախագիծ» ՓԲԸ

Աղյուսակ 14. Մատաղիս 2 ՀԷԿ-ի կառուցման նախահաշիվը, հազ. դրամ

| | Շինարարական մոնտաժային աշխատանքներ | Սարքավորումներ | Այլ | Ընդամենը |
|--|------------------------------------|------------------|-----------------|------------------|
| <i>Ընդամենը կառուցման արժեքը (առանց ԱԱՀ)</i> | <i>617,810.3</i> | <i>265,626.8</i> | <i>17,115.9</i> | <i>900,553.0</i> |
| այդ թվում՝ | | | | |
| Պատվար | 98,645.4 | | | 98,645.4 |
| Ճնշումային խողովակաշար | 273,028.0 | 2,778.4 | | 275,806.4 |
| ՀԷԿ-ի շենք | 152,465.0 | | | 152,465.0 |
| Հիդրոուժային սարքավորումներ | 11,904.5 | | | 11,904.5 |
| Բաշխման 35 կվոլտանոց ենթակայաններ | 6,568.3 | 15,174.6 | | 21,742.9 |
| Երկշրթայանի 35 կվոլտանոց օդային գծեր (3 կմ) | 29,772.2 | 1,841.6 | | 31,613.8 |
| այլ | 45,426.9 | 245,832.2 | 17,115.9 | 308,375.0 |

Աղբյուրը՝ «Հայհիդրոէներգոնախագիծ» ՓԲԸ

Աղյուսակ 15. Թրդի 1 ՀԷԿ-ի կառուցման նախահաշիվը, հազ. դրամ

| | Շինարարական մոնտաժային աշխատանքներ | Սարքավորումներ | Այլ | Ընդամենը |
|--|------------------------------------|-----------------|------------------|------------------|
| Ընդամենը կառուցման արժեքը (առանց ԱԱՀ) | 370,014.1 | 40,098.4 | 154,892.6 | 565,005.1 |
| այդ թվում՝ | | | | |
| Գլխային հանգույց | 9,690.4 | 5,556.0 | | 15,246.5 |
| Տուրբինային ջրատար | 30,493.0 | | | 30,493.0 |
| ՀԷԿ-ի շենք | 121,972.0 | | | 121,972.0 |
| Հիդրոուժային սարքավորումներ | 140,633.2 | 16,206.8 | | 156,840.0 |
| Բաշխման 35 կվոլտանոց ենթակայաններ | 6,568.3 | 15,174.6 | | 21,742.9 |
| Երկշղթայանի 35 կվոլտանոց օդային գծեր (3 կմ) | 29,772.2 | 1,841.6 | | 31,613.8 |
| այլ | 30,885.0 | 1,319.4 | 154,892.6 | 187,096.9 |

Աղբյուրը՝ «Հայհիդրոէներգանախագիծ» ՓԲԸ

Աղյուսակ 16. Երեք ՀԷԿ-երի կառուցման նախահաշիվների ամփոփումը, հազ. դրամ

| | Շինարարական մոնտաժային աշխատանքներ | Սարքավորումներ | Այլ | Ընդամենը |
|---------------------------------|------------------------------------|-------------------|-------------------|--------------------|
| Մատաղիս 1 (առանց ԱԱՀ) | 930,945.9 | 268,900.0 | 205,154.5 | 1,405,000.5 |
| Մատաղիս 2 (առանց ԱԱՀ) | 617,810.3 | 265,626.8 | 17,115.9 | 900,553.0 |
| Թրդի 1 (առանց ԱԱՀ) | 370,014.1 | 40,098.4 | 154,892.6 | 565,005.1 |
| ԸՆԴ-ԱՄՇՆԸ (առանց ԱԱՀ) | 1,918,770.3 | 574,625.2 | 377,163.0 | 2,870,558.6 |
| ԸՆԴ-ԱՄՇՆԸ (ներառյալ ԱԱՀ) | 2,302,524.36 | 689,550.24 | 452,595.60 | 3,444,670.3 |

Աղբյուրը՝ «Հայհիդրոէներգանախագիծ» ՓԲԸ

3.3. Թողարկողի ֆինանսական վիճակի և գործունեության արդյունքների վերաբերյալ տեղեկություններ

3.3.1. Ֆինանսական հաշվետվություններ

Ընկերության 2007թ. տարեկան և 2008թ. երրորդ եռամսյակի ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են Ազդագրին կից ներկայացվող փաստաթղթերի կազմում: Ցանկության դեպքում ներդրողները Ընկերության ֆինանսական հաշվետվությունները կարող են ձեռք բերել նաև Ընկերության և Տեղաբաշխողի գտնվելու վայրերից, ինչպես նաև ծանոթանալ ինտերնետի Ընկերության տնային էջում՝ www.artsakhhpp.com:

3.3.2. Ֆինանսական վիճակի, գործունեության արդյունքների փոփոխությունների վերաբերյալ տեղեկություններ

- 3.3.2.1. Ընկերության ստեղծման պահից Ընկերության ֆինանսական վիճակի և գործունեության արդյունքների ցուցանիշները ներկայացված են ստորև բերված աղյուսակում:
- 3.3.2.2. Տվյալ աղյուսակում և Ազդագրի այլ բաժիններում բերված Ընկերության ֆինանսական գործունեության ցուցանիշների վերլուծության ժամանակ անհրաժեշտ է հաշվի առնել, որ 2007թ. տարեկան տվյալներն ամփոփում են միայն Ընկերության գործունեության արդյունքները 2007թ. նոյեմբեր և դեկտեմբեր ամիսներին, քանի որ Ընկերությունը սկսել է իր գործունեությունը 2007թ. նոյեմբեր ամսից:

Աղյուսակ 17. Ընկերության գործունեության արդյունքների հիմնական ցուցանիշները, հազ. դրամ

| | 31.12.2007թ. | 30.09.2008թ. |
|-----------------------------------|---------------|----------------|
| Հասույթ | 36,989 | 188,511 |
| Համախառն շահույթ | 6,835 | 18,745 |
| Համախառն շահույթի մարժա | 18.48% | 9.94% |
| Գործառնական շահույթ | 3,465 | -18,984 |
| Գործառնական շահույթի մարժա | 9.37% | -10.07% |
| Չուտ շահույթ | 3,230 | -22,586 |
| Չուտ շահույթի մարժա | 8.73% | -11.98% |

Աղբյուրը՝ «Արցախ ՀԷԿ» ԲԲԸ

- 3.3.2.3. Ընկերության գործունեության եկամտաբերության գործակիցները ներկայացված են ստորև բերված աղյուսակում: Սույն գործակիցների վերլուծության ժամանակ պետք է հաշվի առնել, որ 2007թ. տարեկան շահութաբերության գործակիցների հաշվարկի հիմքում ընկած է միայն նոյեմբեր և դեկտեմբեր ամսվա գործունեությունից ստացված զուտ շահույթի մեծությունը, իսկ 2008թ. երրորդ եռամսյակի գործակիցների հիմքում՝ ինն ամսվա շահույթի մեծությունը:

Աղյուսակ 18. Ընկերության եկամտաբերության գործակիցները

| | 31.12.2007թ. | 30.09.2008թ. |
|--|--------------|--------------|
| Ակտիվների եկամտաբերության գործակից, % | 6.41% | -0.40% |
| Մեփական կապիտալի եկամտաբերության գործակից, % | 8.22% | -0.44% |

Աղբյուրը՝ «Արցախ ՀԷԿ» ԲԲԸ

3.3.3. Ընկերության ֆինանսական գործունեությունը

3.3.3.1. Ընկերության ընթացիկ պարտավորությունները 2008թ. երրորդ եռամսյակի վերջին օրվա դրությամբ կազմել են 500,253 հազ. դրամ: Ընկերությունը չունի ոչ ընթացիկ պարտավորություններ: Ստորև բերված աղյուսակում ներկայացված է Ընկերության պարտավորությունների կազմը և կառուցվածքը:

Աղյուսակ 19. Ընկերության պարտավորությունների կազմը և կառուցվածքը

| | 30.12.2007թ. | | 30.09.2008թ. | |
|---|---------------|---------------|----------------|---------------|
| | հազ. դրամ | % | հազ. դրամ | % |
| Ընթացիկ պարտավորություններ | | | | |
| Կարճաժամկետ բանկային վարկեր | 0 | 0.0% | 413,281 | 82.6% |
| Կրեդիտորական պարտքեր գնումների գծով | 2,623 | 23.7% | 6,981 | 1.4% |
| Ստացված ընթացիկ կանխավճարներ | 0 | 0.0% | 70,000 | 14.0% |
| Կրեդիտորական պարտքեր բյուջեին | 6,363 | 57.6% | 1,333 | 0.3% |
| Կրեդիտորական պարտքեր պարտադիր սոցիալական ապահովագրության գծով | 944 | 8.5% | 1,845 | 0.4% |
| Կրեդիտորական պարտքեր աշխատավարձի և աշխատակիցների այլ կարճաժամկետ հատուցումների գծով | 1,117 | 10.1% | 6,661 | 1.3% |
| Այլ կրեդիտորական պարտքեր | 0 | 0.0% | 152 | 0.0% |
| Ընդամենը ընթացիկ պարտավորություններ | 11,047 | 100.0% | 500,253 | 100.0% |
| Ոչ ընթացիկ պարտավորություններ | | | | |
| Երկարաժամկետ բանկային վարկեր | 0.0 | 0.00 | 0.0 | 0.00 |
| Հետաձգված հարկային պարտավորություններ | 0.0 | 0.00 | 0.0 | 0.00 |
| Այլ ոչ ընթացիկ պարտավորություններ | 0.0 | 0.00 | 0.0 | 0.00 |
| Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ | 0.0 | 0.00 | 0.0 | 0.00 |
| Ընդամենը պարտավորություններ | 11,047 | 100.0% | 500,253 | 100.0% |

Աղբյուրը՝ «Արցախ ՀԷԿ» ԲԲԸ

3.3.3.2. Վերոհիշյալ պարտքերը առաջացել են Ընկերության գործունեության ընթացքում՝ ըստ ֆինանսատնտեսական գործունեության պահանջների: Մասնավորապես, կրեդիտորական պարտքերը և ստացված ընթացիկ կանխավճարներն առաջացել են Ընկերության ընթացիկ գործունեության ընթացքում և ուղղված են ֆինանսավորելու նրա ընթացիկ գործառնական գործունեությունը: Կարճաժամկետ բանկային վարկերի ձեռք բերման հիմնական նպատակը նոր կառուցվող ՀԷԿ-երի շինարարական աշխատանքների նախնական փուլի ֆինանսավորումն է:

- 3.3.3.3. Ընկերության հնարավորությունները ներում են ստանձնած պարտավորությունները պատշաճ կատարելու համար: Չնայած երրորդ եռամսյակում Ընկերությունն ունեցել է վնաս, այնուամենայնիվ էլեկտրաէներգիայի գնի կտրուկ բարձրացումը 3.5-ից 9-ը դրամ սկսած Նոյեմբերի 1-ից էականորեն կբարձրացնի Ընկերության շահութաբերությունը, քանի որ գնի բարձրացման հետ միաժամանակ ծախսերը կմնան նույն մակարդակի վրա:
- 3.3.3.4. Ընկերության սեփական կապիտալի կառուցվածքը ներկայացված է ստորև բերված աղյուսակում:

Աղյուսակ 20. Սեփական կապիտալի կազմը, հազ. դրամ

| | 30.12.2007թ. | 30.09.2008թ. |
|---|---------------|------------------|
| Սեփական կապիտալ | | |
| Կանոնադրական կապիտալ | 36,083 | 5,100,000 |
| Էմիսիոն եկամուտ | 0 | 0 |
| Վերագնահատումից և վերաչափումից տարբերություններ | 0 | 13,087 |
| Կուտակված շահույթ | 3,230 | -19,356 |
| Պահուստային կապիտալ | 0 | 0 |
| Ընդամենը սեփական կապիտալ | 39,313 | 5,093,731 |

Աղբյուրը՝ «Արցախ ՀԷԿ» ԲԲԸ

- 3.3.3.5. Ինչպես երևում է վերը բերված աղյուսակից, Ընկերության սեփական կապիտալը կտրուկ աճել է 2008թ. երկրորդ եռամսյակում՝ 2007թ. տարեվերջի համեմատ: Նշված աճը հիմնականում պայմանավորված է հետևյալ հանգամանքով. Սարսանգ ՀԷԿ-ը, մինչև «Արցախ ՀԷԿ» փակ բաժնետիրական ընկերության ստեղծումը, հաշվառված էր «Արցախէներգո» ՓԲԸ հաշվեկշռում խիստ թերագնահատված արժեքով: Այսպես. թվով 13 շինություն՝ 3,047.2 մ² ընդհանուր մակերեսով, ջրի վթարային թողարկման թունել, շինարարական թունել, դերիվացիոն թունել, 2 հիդրոգեներատոր կառավարման համակարգ, ինչպես նաև այլ գույք ներառյալ տրանսպորտային միջոցներ, հաշվառված էին ընդամենը 34.8 մլն դրամ արժեքով: Այդ արժեքով էլ Սարսանգ ՀԷԿ-ը իր գույքով անցավ Ընկերության սեփականության տակ: Ընկերությունը 2008թ. սկզբին վերագնահատեց «Սարսանգ» ՀԷԿ-ի գույքը (վերագնահատումն իրականացվեց անկախ գնահատող՝ «Ուայթ Գեյթ» ՍՊԸ-ի կողմից), որի արդյունքում սեփական կապիտալի վերագնահատումից և վերաչափումից տարբերություններ տողը մեծացավ 5,077,004,000 դրամով: Այնուհետև Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության աշխատակազմի ղեկավար-նախարարի 29.05.2008 թ. թիվ 70/1 հրամանով Ընկերության կանոնադրական կապիտալը հաստատվեց 5,100,000,000 դրամ՝ Ընկերության սեփական կապիտալի արժեքից կանոնադրական կապիտալի արժեքը գերազանցող մասը մասնակի փոխանցելով կանոնադրական կապիտալ:

Ընկերությունը նախատեսում է սեփական կապիտալի ավելացում երկու հիմնական աղբյուրների հաշվին՝ ընկերության գործունեության արդյունքում ստացված և կուտակված շահույթ, ինչպես նաև Ընկերությունը նախատեսում է իրականացնել բաժնետոմսերի նոր թողարկում 2010թ., որը էապես կմեծացնի սեփական կապիտալը:

3.3.4. Շահույթի կանխատեսումը և գնահատումը

3.3.4.1. Ստորև ներկայացված կանխատեսումները հիմնված են ԼՂՀ կառավարության Արտադրական ենթակառուցվածքների վարչության և Ընկերության գնահատականների վրա: Ստորև ներկայացված աղյուսակը արտացոլում է նշված տարիների համար էլեկտրաէներգիայի արտադրության ծավալները Սարսանգ ՀԷԿ-ի, նախատեսվող երեք ՀԷԿ-երի, ինչպես նաև հետագայում նախատեսվող ևս երկու ՀԷԿ-երի՝ Թրղի 2 և Թրղի 3 ՀԷԿ-երի համար: ՀԷԿ-երի արտադրության կանխատեսումները հիմնված են ջրի հոսքի և ջրի սպառման նախկին միտումների վրա (ներառյալ ջրի հոսքի ցիկլային տատանումները), ինչպես նաև նրանց դրվածքային հզորությունների և համապատասխան գետերի տեխնիկական ցուցանիշների վրա:

Աղյուսակ 21. Նշված ժամանակահատվածների համար էլեկտրաէներգիայի արտադրման կանխատեսումներ, մլն. կՎտ/ժամ

| | 2008 | 2009 | 2010 | 2011 | 2012 | 2013 | 2014 | 2015 |
|-----------------|-------------|--------------|--------------|--------------|--------------|--------------|--------------|--------------|
| Սարսանգ | 90.4 | 115.1 | 118.3 | 113.6 | 115.2 | 112.4 | 110.1 | 115.5 |
| Մատաղիս 1 | | | 10.2 | 22.4 | 22.4 | 22.4 | 22.4 | 22.4 |
| Մատաղիս 2 | | | 5.8 | 13.2 | 13.2 | 13.2 | 13.2 | 13.2 |
| Թրղի 1 | | | 4.7 | 16.5 | 16.5 | 16.5 | 16.5 | 16.5 |
| Թրղի 2 | | | | 20.9 | 20.9 | 20.9 | 20.9 | 20.9 |
| Թրղի 3 | | | | 12.1 | 12.1 | 12.1 | 12.1 | 12.1 |
| Ընդամենը | 90.4 | 115.1 | 139.0 | 198.7 | 200.3 | 197.5 | 195.2 | 200.6 |

Աղբյուրը՝ «Արցախ ՀԷԿ» ԲԲԸ, ԼՂՀ կառավարության Արտադրական ենթակառուցվածքների վարչության

3.3.4.2. Ինչպես երևում է վերը բերված աղյուսակից, 2011թ. նոր ՀԷԿ-երը կկարողանան տարեկան լրացուցիչ 85.1 մլն. կՎտ/ժամ էլեկտրաէներգիա արտադրել: Սա հնարավորություն կտա սեփական ուժերով բավարարել ԼՂՀ էլեկտրաէներգիայի պահանջարկի մոտ 85%-ը:

3.3.4.3. Կիրառելով էլեկտրաէներգիայի արտադրության սակագները Ընկերության կողմից թողարկվող էլեկտրաէներգիայի արտադրության կանխատեսվող ծավալների վրա, ստանում ենք Ընկերության կանխատեսվող հասույթի մեծության գնահատականները:

Աղյուսակ 22. Ընկերության հասույթի կանխատեսվող մեծությունները

| | 2008 | 2009 | 2010 | 2011 | 2012 | 2013 | 2014 | 2015 |
|--------------------------|---------|-----------|-----------|-----------|-----------|-----------|-----------|-----------|
| Արտադրված էլեկտրաէներգիա | 90.4 | 115.1 | 139.0 | 198.7 | 200.3 | 197.5 | 195.2 | 200.6 |
| Սակագինը, այդ թվում | | | | | | | | |
| Գործող ՀԷԿ-երի համար | 3.5* | 9.0 | 9.0 | 9.0 | 9.0 | 9.0 | 12.0 | 12.0 |
| Նոր ՀԷԿ-երի համար | - | 15.0 | 15.0 | 15.0 | 15.0 | 15.0 | 15.0 | 15.0 |
| Հասույթ, հազ դրամ | 450,613 | 1,035,900 | 1,375,200 | 2,298,900 | 2,313,300 | 2,288,100 | 2,597,700 | 2,662,500 |

Աղբյուրը՝ «Արցախ ՀԷԿ» ԲԲԸ գնահատականներ

3.3.4.4. Հասույթի կանխատեսումից հետո տրվել է ՀԷԿ-երի կողմից կատարվող գործառնական ծախսերի գնահատականները: Գործառնական ընդհանուր ծախսերը մենք բաժանել ենք երեք հիմնական խմբի՝ ինքնարժեք, վարչական ծախսեր և հիմնական միջոցների ամորտիզացիա: Չնայած հիմնական միջոցների ամորտիզացիան հաշվառվում է որպես ինքնարժեքի տարր, այնուամենայնիվ կանխատեսումների և գնահատումների ճշգրտության ապահովման տեսանկյունից ամորտիզացիան ուսումնասիրվել է ինքնարժեքից անկախ՝ որպես առանձին ծախսային հոդված:

3.3.4.5. **Ինքնարժեք.** Նախագծվող ՀԷԿ-երի կողմից թողարկվող արտադրանքի՝ էլեկտրաէներգիայի ինքնարժեքի հաշվարկման համար հիմք է ծառայել Սարսանգ ՀԷԿ-ի համապատասխան ծախսային հոդվածները: Ինքնարժեքի մեջ մեծ տեսակարար կշիռ է կազմում հիմնական անձնակազմի աշխատավարձին ուղղվող ծախսումները (միջինում՝ 55%): Աշխատավարձի ֆոնդի հաշվարկման համար հիմք է ծառայել այն համոզմունքը, որ աշխատողների խթանման և ՀԷԿ-երի գործունեության արդյունավետության բարձրացման համար անհրաժեշտ է էապես վերանայել ներկայիս աշխատավարձերի խիստ ցածր մակարդակը: Մասնավորապես՝ մեր կողմից ենթադրվել է, որ վերանայման արդյունքում, ինչպես նաև գնաճի ազդեցության ներքո 2009թ. աշխատավարձերը 2008թ. համեմատ կաճեն 30%-ով, իսկ հետագա տարիներին՝ տարեկան 10%-ով: Բացի այդ կատարված տեխնիկական հաշվարկները ցույց են տալիս, որ ՀԷԿ-երի հիմնական անձնակազմը միջինում պետք է կազմի 20 մարդ:

3.3.4.6. Ինքնարժեքի հաջորդ տարրերն են էլեկտրաէներգիայի և նյութերի սպառումը: Ծախսվող էլեկտրաէներգիայի հաշվարկման համար հիմք է ծառայել էլեկտրաէներգիայի սպառման սակագնի կանխատեսվող արժեքները (30 դրամ 1 կվտ/ժամի համար՝ սկսած 2009թ.-ից), ինչպես նաև Սարսանգ ՀԷԿ-ի կողմից կատարվող համապատասխան ծախսումները՝ ճշգրտված նոր ՀԷԿ-երի չափերով: Նույնանման հաշվարկներ կատարվել են օգտագործվող նյութերի և ՀԷԿ-երի անվտանգության պահպանմանն ուղղվող ծախսերի գնահատման դեպքերում: Ինքնարժեքի մեջ է ներառվել նաև տրանսպորտային ծախսումները, տեղական տուրքերն ինչպես նաև ճանապարհային հարկը (ԼՂՀ հատուկ հարկ՝ համախառն հասույթի 0.4%-ի չափով): Ստորև բերված աղյուսակը ամփոփում է Ընկերության բոլոր ՀԷԿ-երի կողմից թողարկվող էլեկտրաէներգիայի ընդհանուր ինքնարժեքի ծախսային հոդվածների գնահատականներն ըստ տարիների:

Աղյուսակ 23. Ընկերության արտադրանքի ինքնարժեքի կանխատեսումները

| | 2008 | 2009 | 2010 | 2011 | 2012 | 2013 | 2014 | 2015 |
|---|----------------|----------------|----------------|----------------|----------------|----------------|----------------|----------------|
| ՀԷԿ-ի (երի) աշխատողների թվաքանակը, մարդ | 60 | 60 | 120 | 160 | 160 | 160 | 160 | 160 |
| Աշխատավարձի աճ, % | 0% | 30% | 10% | 10% | 10% | 10% | 10% | 10% |
| Աշխատավարձ | 75,036 | 97,547 | 214,603 | 314,751 | 346,226 | 380,849 | 418,934 | 460,827 |
| Տեղական հարկեր | 649 | 649 | 649 | 649 | 649 | 649 | 649 | 649 |
| Ճանապարհային հարկ | 1,802 | 4,144 | 5,501 | 9,196 | 9,253 | 9,152 | 10,391 | 10,650 |
| Անվտանգություն | 24,486 | 24,486 | 48,972 | 65,296 | 65,296 | 65,296 | 65,296 | 65,296 |
| Էլ.էներգիայի ծախս | 15,000 | 18,000 | 36,000 | 48,000 | 48,000 | 48,000 | 48,000 | 48,000 |
| Նյութական ծախսեր | 18,080 | 23,020 | 27,800 | 39,740 | 40,060 | 39,500 | 39,040 | 40,120 |
| Տրանսպորտային ծախսեր | 2,118 | 2,118 | 4,236 | 5,648 | 5,648 | 5,648 | 5,648 | 5,648 |
| Ընդամենը ինքնարժեք | 137,171 | 169,963 | 337,761 | 483,280 | 515,132 | 549,094 | 587,957 | 631,190 |

Աղբյուրը՝ «Արցախ ՀԷԿ» ԲԲԸ գնահատականներ

3.3.4.7. **Վարչական ծախսեր.** Սույն ծախսային հոդվածի գնահատման համար հիմք են ծառայել նույն ենթադրությունների համակարգը, ինչ ինքնարժեքի դեպքում՝ Սարսանգ ՀԷԿ-ի վարչական ծախսերի կառուցվածք, վարչական աշխատողների աշխատավարձերի աճ և այս ամենը ճշգրտված՝ հաշվի առնելով նոր կառուցվող ՀԷԿ-երի չափերն ու առանձնահատկությունները: Ստորև բերված աղյուսակն արտացոլում է Մատաղիս 1, Մատղիս 2-ի և Թրդի 1 ընդհանուր վարչական ծախսումների ծախսային հոդվածների գնահատականներն ըստ տարիների:

Աղյուսակ 24. Ընկերության վարչական ծախսումների կանխատեսումները

| | 2008 | 2009 | 2010 | 2011 | 2012 | 2013 | 2014 | 2015 |
|-----------------------------------|---------------|---------------|---------------|---------------|---------------|---------------|---------------|---------------|
| Վարչական աշխատողների քանակը, մարդ | 15 | 15 | 30 | 40 | 40 | 40 | 40 | 40 |
| Աշխատավարձի աճ, % | 0% | 30% | 10% | 10% | 10% | 10% | 10% | 10% |
| Աշխատավարձ | 13,932 | 18,112 | 39,846 | 58,440 | 64,284 | 70,713 | 77,784 | 85,562 |
| Տրանսպորտ | 284 | 313 | 688 | 1,009 | 1,060 | 1,113 | 1,169 | 1,227 |
| Բանկի կոմիսիոն վճարներ | 59 | 65 | 144 | 211 | 221 | 232 | 244 | 256 |
| Կապ | 120 | 132 | 290 | 426 | 447 | 470 | 493 | 518 |
| Գրասենյակային ապրանքներ | 270 | 297 | 653 | 958 | 1,006 | 1,057 | 1,109 | 1,165 |
| Վարձակալական վճար | 432 | 648 | 1,944 | 2,851 | 3,136 | 3,450 | 3,795 | 4,174 |
| Ընդամենը վարչական ծախսեր | 15,098 | 19,567 | 43,565 | 63,896 | 70,155 | 77,034 | 84,594 | 92,902 |

Աղբյուրը՝ «Արցախ ՀԷԿ» ԲԲԸ գնահատականներ

3.3.4.8. **Հիմնական միջոցների ամորտիզացիա.** ՀԷԿ-երի հիմնական միջոցների ամորտիզացիան հաշվարկվել է գծային եղանակով: Ամորտիզացիոն ժամկետն ընդունվել է 40 տարի՝ հիմնվելով համանման ՀԷԿ-երի գործունեության, ինչպես նաև նախագծվող շենքերի ու սարքավորումների արդյունավետ գործունեության ժամկետների վրա: Այսպիսով ամորտիզացիոն տարեկան մասհանումները կազմում են հիմնական միջոցների արժեքի 2.5%-ը:

3.3.4.9. Ամփոփելով ՀԷԿ-երի եկամուտների և ծախսերի վերլուծությունը, ստանում ենք զուտ գործառնական եկամտի գնահատականները: Մեր ենթադրությունների համաձայն՝ նախագծվող ՀԷԿ-երը չեն ունենալու ոչ գործառնական եկամուտներ և ծախսեր (կամ դրանց արժեքն այնքան փոքր է լինելու, որ դրանց ազդեցությունը ներդրումային նախագծի արդյունավետության վրա չնչին է լինելու): Բացի այդ, նախնական ենթադրությունների համաձայն ներդրվող միջոցները լինելու են հիմնականում սեփական աղբյուրներից, փոխառու միջոցներ չեն օգտագործվելու, հետևաբար սույն ներդրումային նախագիծը չի ենթադրում ֆինանսական ծախսերի առկայություն: Ստորև բերված աղյուսակն ամփոփում է Ընկերության գործառնական ծախսերի գնահատականները:

Աղյուսակ 25. Ընկերության գործառնական ծախսերի կանխատեսումները

| | 2008 | 2009 | 2010 | 2011 | 2012 | 2013 | 2014 | 2015 |
|---|---------|---------|---------|---------|---------|---------|---------|---------|
| Գործառնական ծախսեր, հազ դրամ | 242,058 | 361,506 | 604,177 | 812,751 | 850,988 | 892,504 | 939,602 | 991,268 |
| Գործառնական ծախսերը 1 կվտ/ժամ-ի հաշվով, այդ թվում | 2.68 | 3.14 | 4.35 | 4.09 | 4.25 | 4.52 | 4.81 | 4.94 |
| Ինքնարժեք, դրամ | 1.52 | 1.48 | 2.43 | 2.43 | 2.57 | 2.78 | 3.01 | 3.15 |
| Վարչական, դրամ | 0.17 | 0.17 | 0.31 | 0.32 | 0.35 | 0.39 | 0.43 | 0.46 |
| Ամորտիզացիա, դրամ | 1.00 | 1.50 | 1.60 | 1.34 | 1.33 | 1.35 | 1.37 | 1.33 |

Աղբյուրը՝ «Արցախ ՀԷԿ» ԲԲԸ գնահատականներ

- 3.3.4.10. Ինչ վերաբերում է հարկային ծախսումներին, ապա չնայած ԼՂՀ-ում գործող ներկայիս հարկային համակարգը նախատեսում է 5% շահութահարկ, այնուամենայնիվ մեր հաշվարկներում օգտագործվում է 10% դրույքաչափը, որը համապատասխանում ԼՂՀ կառավարության ծրագրին՝ հարկային քաղաքականության փոփոխությունների առումով:
- 3.3.4.11. Ստորև բերված աղյուսակն ամփոփում է Ընկերության նախատեսվող գործունեության շրջանակներում սպասվող գործառնական եկամուտների և ծախսումների գնահատականները:

Աղյուսակ 26. Ընկերության կանխատեսվող եկամուտների մասին հաշվետվությունը

| | 2008 | 2009 | 2010 | 2011 | 2012 | 2013 | 2014 | 2015 |
|------------------------|----------------|----------------|----------------|------------------|------------------|------------------|------------------|------------------|
| Հասույթ | 450,613 | 1,035,900 | 1,375,200 | 2,298,900 | 2,313,300 | 2,288,100 | 2,597,700 | 2,662,500 |
| Ինքնարժեք | -137,171 | -169,963 | -337,761 | -483,280 | -515,132 | -549,094 | -587,957 | -631,190 |
| Ամորտիզացիա | -89,989 | -172,156 | -223,013 | -265,721 | -265,832 | -266,494 | -267,157 | -267,271 |
| Համախառն եկամուտ | 223,453 | 693,781 | 814,426 | 1,549,899 | 1,532,336 | 1,472,512 | 1,742,586 | 1,764,039 |
| Վարչական ծախսեր | -15,098 | -19,567 | -43,565 | -63,896 | -70,155 | -77,034 | -84,594 | -92,902 |
| Գործառնական եկամուտ | 208,355 | 674,214 | 770,861 | 1,486,003 | 1,462,181 | 1,395,478 | 1,657,992 | 1,671,137 |
| Ֆինանսական ծախսեր | -17,500 | -12,500 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| Շահույթ հարկումից առաջ | 190,855 | 661,714 | 770,861 | 1,486,003 | 1,462,181 | 1,395,478 | 1,657,992 | 1,671,137 |
| Շահութահարկի գծով ծախս | -19,085 | -66,171 | -77,086 | -148,600 | -146,218 | -139,548 | -165,799 | -167,114 |
| Զուտ շահույթ | 171,769 | 595,543 | 693,775 | 1,337,403 | 1,315,963 | 1,255,930 | 1,492,193 | 1,504,023 |

Աղբյուրը՝ «Արցախ ՀԷԿ» ԲԲԸ գնահատականներ

- 3.3.4.12. Ընկերության կառավարման մարմինները հնարավորություն ունեն ազդելու Ընկերության գործունեության և շահույթի վրա ազդող հետևյալ հիմնական գործոնների վրա.
 - ✓ տեղաբաշխման արդյունքում ներգրավված միջոցների արդյունավետ օգտագործում
 - ✓ աշխատակիցների գործունեության արդյունավետության բարձրացում
- 3.3.4.13. Ընկերության կառավարման մարմինները կարող են արձագանքել, սակայն հնարավորություն չունեն ազդելու Ընկերության գործունեության և շահույթի վրա ազդող հետևյալ հիմնական գործոնների վրա.
 - ✓ համապատասխան գետերի ջրի հոսքը
 - ✓ էլեկտրաէներգիայի սակագինը
 - ✓ անհաղթահարելի ուժի ազդեցության գործոններ (արտակարգ դրության հայտարարելը, հաղորդակցության միջոցների աշխատանքների դադարեցումը, բնական աղետները, պատերազմը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում Ընկերության բնականոն գործունեությունը):

- 3.3.4.14. Ընկերությունը նախկինում շահույթի կանխատեսում կամ գնահատում չի իրականացրել:
- 3.3.4.15. Սույն (3.3.4) կետում նշված տեղեկությունները ընդամենը կանխատեսումներ են և ներդրումային որոշումներ կայացնելիս չպետք է հիմնվել դրանց վրա:

3.4. Թողարկողի կառավարման մարմինների և կառավարմանը մասնակցող անձանց վերաբերյալ տեղեկություններ

3.4.1. Ընդհանուր տեղեկություններ կառավարման մարմինների վերաբերյալ

Ընկերության կառավարման մարմիններ են Բաժնետերերի Ընդհանուր Ժողովը (այսուհետ՝ ԲԸԺ), Տնօրենների Խորհուրդը (այսուհետ՝ Խորհուրդ), Գլխավոր Տնօրենը և Վերստուգողը: Ընկերության կանոնադրությամբ սահմանված է կառավարման յուրաքանչյուր մարմնի իրավունքները, պարտականությունները և լիազորությունները, որոնք համապատասխանում են ԼՂՀ օրենսդրությանը: ԲԸԺ ընտրում է Խորհրդի անդամներին, որն իրավասու և պատասխանատու է Գլխավոր Տնօրենի վերահսկողության և Ընկերության ընդհանուր կառավարման համար: Խորհուրդը նշանակում է Գլխավոր Տնօրենին, որը Ընկերության գործադիր մարմնի ղեկավարն է և պատասխանատու է ընթացիկ գործունեության համար: ԲԸԺ ընտրում է նաև Վերստուգողին, որը հետևում է Ընկերության կառավարման մարմինների որոշումների կատարմանը: Վերստուգողը հաշվետու է ԲԸԺ-ին:

3.4.2. Բաժնետերերի Ընդհանուր Ժողով

3.4.3. Կանոնադրության համաձայն, տարեկան ԲԸԺ պետք է տեղի ունենա ֆինանսական տարվա ավարտից երկու ամիս հետո, չորս ամսվա ընթացքում: Բաժնետերերը պետք է տեղեկացվեն կայանալիք ժողովի մասին առնվազն երեք օր առաջ: Ընկերության բաժնետերերի ինչպես տարեկան, այնպես էլ արտահերթ ընդհանուր ժողովները գումարվում են Խորհրդի կողմից սեփական նախաձեռնությամբ, գրավոր որոշմամբ: Արտահերթ ընդհանուր ժողովը կարող է գումարվել նաև գլխավոր տնօրենի, վերստուգող հանձնաժողովի (վերստուգողի), Ընկերության աուդիտն իրականացնող անձի կամ պահանջող ներկայացնելու դեպքում Ընկերության՝ առնվազն 10 տոկոս ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի սեփականատեր բաժնետիրոջ (բաժնետերերի) պահանջով:

- 3.4.3.1. ԼՂՀ օրենսդրության և Ընկերության Կանոնադրության համաձայն, Ընկերության ԲԸԺ իրավասությանն են պատկանում.
- ✓ Ընկերության կանոնադրության մեջ փոփոխությունների և լրացումների կատարումը, Ընկերության նոր խմբագրությամբ կանոնադրության հաստատումը,
 - ✓ Ընկերության վերակազմակերպումը,

- ✓ Ընկերության լուծարումը,
- ✓ Ընկերության լուծարման հանձնաժողովի նշանակումը, ամփոփ, միջանկյալ և լուծարման հաշվեկշիռների հաստատումը,
- ✓ Ընկերության Խորհրդի քանակական կազմի հաստատումը, դրա անդամների ընտրությունը և նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը,
- ✓ հայտարարված բաժնետոմսերի ծավալի առավելագույն չափի սահմանումը,
- ✓ բաժնետոմսերի անվանական արժեքի մեծացման կամ լրացուցիչ բաժնետոմսերի տեղաբաշխման ճանապարհով Ընկերության կանոնադրական կապիտալի չափի ավելացումը,
- ✓ տեղաբաշխված բաժնետոմսերի անվանական արժեքի փոքրացման, բաժնետոմսերի ընդհանուր քանակի կրճատման նպատակով տեղաբաշխված բաժնետոմսերի ձեռքբերման, ինչպես նաև Ընկերության կողմից ձեռք բերված կամ հետ գնված բաժնետոմսերի մարման ճանապարհով Ընկերության կանոնադրական կապիտալի չափի նվազեցումը,
- ✓ Ընկերության կողմից տեղաբաշխված բաժնետոմսերի ձեռքբերումը և հետգնումը,
- ✓ Ընկերության վերստուգող հանձնաժողովի (վերստուգողի) ընտրությունը և նրա լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը,
- ✓ Ընկերության աուդիտն իրականացնող անձի հաստատումը,
- ✓ Ընկերության տարեկան հաշվետվությունների, հաշվապահական հաշվեկշիռների, շահույթների և վնասների հաշվի, շահույթների և վնասների բաշխման հաստատումը, տարեկան շահութաբաժինների վճարման մասին որոշման ընդունումը և տարեկան շահութաբաժինների չափի հաստատումը,
- ✓ բաժնետոմսերի անվանական արժեքի փոքրացումը (տարանջատումը) և մեծացումը (համախմբումը),
- ✓ Ընկերության գույքի օտարման և ձեռքբերման հետ կապված խոշոր գործարքների կնքումը,
- ✓ Ընկերության կողմից դուստր կամ կախյալ ընկերությունների ստեղծումը,
- ✓ դուստր և կախյալ ընկերություններում մասնակցությունը,
- ✓ հոլդինգային ընկերությունների, առևտրային կազմակերպությունների այլ միությունների հիմնադրումը,
- ✓ հոլդինգային ընկերություններում, առևտրային կազմակերպությունների այլ միություններում մասնակցությունը:

3.4.3.2. Վերոնշյալ իրավասությունները պատկանում են ԲԸԺ բացառիկ իրավասությանը և չեն կարող փոխանցվել Ընկերության այլ կառավարման մարմիններին (եթե կանոնադրությամբ այլ բան սահմանված չէ):

3.4.3.3. Ընկերության ԲԸԺ իրավունք ունի քննարկել և որոշումներ ընդունել նաև «Բաժնետիրական ընկերությունների մասին» ԼՂՀ օրենքով ու կանոնադրությամբ ԲԸԺ իրավասությանը պատկանող ցանկացած հարցի շուրջ:

3.4.4. Տնօրենների Խորհուրդ

3.4.4.1. Ընկերության գործունեության ընդհանուր ղեկավարումը իրականացնում է Ընկերության Խորհուրդը: Իրենց իրավասությունների կատարման ընթացքում Խորհրդի անդամները պետք է գործեն Ընկերության շահերին համապատասխան: Խորհուրդը բաղկացած է երեք անդամներից, որոնք ընտրվում են ԲԸԺ կողմից մեկ տարի ժամկետով:

3.4.4.2. Ընկերության Խորհրդի բացառիկ իրավասությանն են պատկանում հետևյալ հարցերը՝

- ✓ Ընկերության գործունեության հիմնական ուղղությունների որոշումը,
- ✓ Ընկերության բաժնետերերի տարեկան և արտահերթ ընդհանուր ժողովների գումարումը, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի,
- ✓ Ընկերության ԲԸԺ օրակարգի հաստատումը,
- ✓ գույքի շուկայական արժեքի որոշումը,
- ✓ Ընկերության տեղաբաշխված բաժնետոմսերի, պարտատոմսերի և այլ արժեթղթերի ձեռք բերումը «Բաժնետիրական ընկերությունների մասին» ԼՂՀ օրենքով նախատեսված դեպքերում,
- ✓ Ընկերության գլխավոր տնօրենի նշանակումը, նրա աշխատանքի վարձատրության պայմանների որոշումը, լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը,
- ✓ պարտատոմսերի և այլ արժեթղթերի տեղաբաշխումը,
- ✓ Ընկերության աուդիտն իրականացնող անձի վարձատրության չափի սահմանումը,
- ✓ Ընկերության բաժնետոմսերի դիմաց վճարվող տարեկան շահութաբաժինների չափի և վճարման կարգի վերաբերյալ Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի առաջարկությունների նախապատրաստումը,
- ✓ Ընկերության բաժնետոմսերի միջանկյալ (եռամսյակային կամ կիսամյակային) շահութաբաժինների չափի և վճարման կարգի սահմանումը,
- ✓ Ընկերության պահուստային հիմնադրամի օգտագործումը,
- ✓ Ընկերության կառավարման մարմինների գործունեությունը կանոնակարգող ներքին փաստաթղթերի հաստատումը,
- ✓ խոշոր գործարքների կատարման մասին որոշման ընդունումը «Բաժնետիրական ընկերությունների մասին» ԼՂՀ օրենքով սահմանված դեպքերում,
- ✓ այլ կազմակերպություններին մասնակցության մասին որոշման ընդունումը, եթե այդ մասնակցությունը իրենից խոշոր գործարք չի ներկայացնում,

- ✓ Ընկերության առանձնացված ստորաբաժանումների և հիմնարկների ստեղծումը, գործունեության դադարեցումը, դրանց կանոնադրությունների հաստատումը,
- ✓ Ընկերության վարչակազմակերպական կառուցվածքի հաստատումը,
- ✓ հաստիքացուցակի հաստատումը,
- ✓ ամենամյա ծախսերի նախահաշվի և դրա կատարողականի հաստատումը,
- ✓ «Բաժնետիրական ընկերությունների մասին» ԼՂՀ օրենքով և Ընկերության կանոնադրությամբ Ընկերության Խորհրդի իրավասությանը վերապահված այլ հարցերի լուծումը:

3.4.5. Գլխավոր տնօրեն

3.4.5.1. Գլխավոր տնօրենը Ընկերության գործադիր մարմինն է, որը պատասխանատու է Ընկերության ամենօրյա գործունեության համար (բացառությամբ այն իրավասությունների, որոնք վերապահված են ԲԸԺ-ին և Խորհրդին): Ընկերության կառավարումը իրականացվում է Գլխավոր տնօրենի կողմից: Գլխավոր տնօրենը իրավասու է հանձնարարություններ տալ իր տեղակալներին և Ընկերության համապատասխան բաժինների ղեկավարներին: Գլխավոր տնօրենը նշանակվում է և նրա լիազորությունները դադարում են Խորհրդի որոշումների հիման վրա և նա հաշվետու է ԲԸԺ-ին և Խորհրդին: ԲԸԺ հաստատված պարզևատրման քաղաքականության ներքո, Խորհուրդը որոշում է Ընկերության բոլոր աշխատակիցների աշխատանքային պայմանները և նրանց պարզևատրման եղանակները (Գլխավոր տնօրենի, նրա տեղակալների և բաժինների պետերի, ներառյալ Գլխավոր հաշվապահին և Գլխավոր ինժեներին):

3.4.5.2. Ընկերության գլխավոր տնօրենը՝

- ✓ տնօրինում է Ընկերության գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները, գործարքներ է կատարում Ընկերության անունից,
- ✓ ներկայացնում է Ընկերությունը Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում և արտասահմանում,
- ✓ գործում է առանց լիազորագրի,
- ✓ տալիս է լիազորագրեր,
- ✓ նախագահում է Ընկերության ԲԸԺ-ներում,
- ✓ սահմանված կարգով կնքում է պայմանագրեր, այդ թվում՝ աշխատանքային,
- ✓ բանկերում բացում է Ընկերության հաշվարկային (այդ թվում՝ տարադրամային) և այլ հաշիվներ,
- ✓ Ընկերության Խորհրդի հաստատմանն է ներկայացնում Ընկերության աշխատանքային կանոնակարգը, առանձնացված ստորաբաժանումների և հիմնարկների կանոնադրությունները, Ընկերության վարչակազմակերպական կառուցվածքը,
- ✓ իր իրավասության սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ, տալիս է կատարման համար պարտադիր ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը,

- ✓ սահմանված կարգով աշխատանքի է ընդունում և աշխատանքից ազատում Ընկերության աշխատակիցներին,
- ✓ աշխատակցի նկատմամբ կիրառում է խրախուսման և կարգապահական պատասխանատվության միջոցներ:

3.4.6. Վերստուգող


3.4.6.1. Ընկերության ֆինանսատնտեսական գործունեության վերահսկումն իրականացնելու համար ԲԸԺ ընտրում է Ընկերության վերստուգող: Վերստուգող կարող է լինել Ընկերության կառավարման մարմիններում չընդգրկված ցանկացած ֆիզիկական անձ: Վերստուգողն ընտրվում է երեք տարի ժամկետով:

3.4.6.2. Ընկերության վերստուգողը՝

- ✓ հետևում է Ընկերության կառավարման մարմինների որոշումների կատարմանը,
- ✓ ստուգում է Ընկերության փաստաթղթերի համապատասխանությունը օրենքներին, այլ իրավական ակտերին և Ընկերության կանոնադրությանը,
- ✓ իրականացնում է Ընկերության ֆինանսատնտեսական գործունեության տարեկան արդյունքների ստուգումը, ստուգում է Ընկերության ֆինանսատնտեսական գործունեությունը սեփական նախաձեռնությամբ՝ ցանկացած ժամանակ, ԲԸԺ կամ Խորհրդի որոշմամբ, ինչպես նաև Ընկերության այն բաժնետիրոջ (բաժնետերերի) պահանջով, որոնց հանրագումար բաժինը Ընկերության կանոնադրական կապիտալում կազմում է 10 և ավելի տոկոս,
- ✓ ստուգումների արդյունքներն ուղարկում է ԲԸԺ,
- ✓ ըստ տարեկան հաշվետվության և հաշվեկշռի կազմում է եզրակացություն,
- ✓ պահանջում է ԲԸԺ գումարում «Բաժնետիրական ընկերությունների մասին» ԼԳՀ օրենքով սահմանված կարգով,
- ✓ խորհրդակցական ձայնի իրավունքով մասնակցում է ԲԸԺ-ին,
- ✓ պահանջում է Ընկերության, դրա առանձնացված ստորաբաժանումների և հիմնարկների ֆինանսատնտեսական գործունեությանը վերաբերող բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը, նյութերը և բացատրությունները:

3.4.7. Ընկերության կառավարման մարմինների կառուցվածքը ներկայացված է ստորև.

Գծանկար 6. Ընկերության կառավարման մարմինների սխեմատիկ կառուցվածքը



3.4.8. Տեղեկություններ կառավարմանը մասնակցող անձանց վերաբերյալ

3.4.8.1. Ընկերության տնօրենների խորհրդի նախագահը և գլխավոր տնօրենն է Վահրամ Բեգլարյանը: Նրա մասին տեղեկությունները ներկայացված են ստորև բերված աղյուսակում.

| Պահանջվող տեղեկությունը | Նկարագրությունը |
|--|--|
| Բնակության վայրը | ԼՂՀ ք. Ստեփանակերտ, Վ. Վաղարշյան 1/40 |
| Մասնագիտությունը | տնտեսագետ |
| Վերջին երեք տարիների ընթացքում զբաղեցրած պաշտոնները | 1. հոկտեմբեր 2005թ. - սեպտեմբեր 2007թ. «Ստեփանակերտի կոնյակի գործարան» ՓԲԸ տնօրեն 2. սեպտեմբեր 2007թ. - հունվար 2008թ. «Ղարաբաղ Գոլդ» ՓԲԸ ֆինանսական տնօրեն, 3. մարտ 2008թ. - հունվար 2009թ. «Տեխնոշին» ՍՊԸ տնօրեն |
| Նախորդ երեք տարիների ընթացքում Ընկերության կողմից տրված վարձատրությունները | Չի վարձատրվել |
| Տվյալ անձին պատկանող Ընկերության բաժնետոմսերի քանակը | Սեփականության իրավունքով Ընկերությունում բաժնետոմս չունի |
| Նշանակալից մասնակցությունն այլ անձանց բաժնային արժեթղթերում | Այլ անձանց բաժնային արժեթղթերում նշանակալից մասնակցություն չունի |
| Պայմանագրերի և որոշումների համառոտ նկարագրություն, համաձայն որոնց տվյալ անձը հանդիսանում է Ընկերության կառավարմանը մասնակցող անձ, նրա գործողությունների լիազորության ժամկետը | ԼՂՀ կառավարության Արտադրական ենթակառուցվածքների վարչության պետի 08.01.2009թ. թիվ 04Վ հրաման, «Արցախ ՀԷԿ» ԲԲԸ տնօրենների խորհրդի նիստի 08.01.2009թ. թիվ 1 որոշում: Գործողությունների լիազորության ժամկետը՝ անժամկետ: |

3.4.8.2. Ընկերության տնօրենների խորհրդի անդամ է Արթուր Պետրոսյանը: Տեղեկություններ նրա մասին.

| Պահանջվող տեղեկությունը | Նկարագրությունը |
|--|--|
| Բնակության վայրը | ԼՂՀ, ք. Ստեփանակերտ, Մեսրոպ Մաշտոցի փող., 4 շ., բն. 46 |
| Մասնագիտությունը | Տնտեսագետ-իրավաբան |
| Վերջին երեք տարիների ընթացքում զբաղեցրած պաշտոնները | <ol style="list-style-type: none"> 2002թ. – 01.11.2007թ. - «Գարաբաղ գոլդ» ՓԲԸ իրավախորհրդատու 01.11.2007թ.- առ այսօր ԼՂՀ վարչապետի օգնական 09.06.2008թ. - առ այսօր «Արցախ ՀԷԿ» ԲԲԸ տնօրենների խորհրդի անդամ |
| Նախորդ երեք տարիների ընթացքում Ընկերության կողմից տրված վարձատրությունները | Չի վարձատրվել |
| Տվյալ անձին պատկանող Ընկերության բաժնետոմսերի քանակը | Սեփականության իրավունքով Ընկերությունում բաժնետոմս չունի |
| Նշանակալից մասնակցությունն այլ անձանց բաժնային արժեթղթերում | «Առտ-ոփտ» ՍՊԸ 100% բաժնեմաս |
| Պայմանագրերի և որոշումների համառոտ նկարագրություն, համաձայն որոնց տվյալ անձը հանդիսանում է Ընկերության կառավարմանը մասնակցող անձ, նրա գործողությունների լիազորության ժամկետը | ԼՂՀ կառավարության աշխատակազմի ղեկավար-նախարարի 29.05.2008թ. թիվ 70/2 հրաման: Գործողությունների լիազորության ժամկետը՝ անժամկետ: |

3.4.8.3. Ընկերության տնօրենների խորհրդի անդամ է Հայկ Ավետիսյանը: Տեղեկություններ նրա մասին.

| Պահանջվող տեղեկությունը | Նկարագրությունը |
|--|--|
| Բնակության վայրը | ԼՂՀ, ք. Ստեփանակերտ, Գարեգին Նժդեհի փող., տուն 66 |
| Մասնագիտությունը | Էլեկտրաբանեցում և ավտոմատավորում |
| Վերջին երեք տարիների ընթացքում զբաղեցրած պաշտոնները | <ol style="list-style-type: none"> 2000 թ. - 22.11.2007թ. - «Քաջ. էլ. ցանցեր» ՊՓԲԸ տնօրենի տեղակալ 22.11.2007 թ. - առ այսօր ԼՂՀ կառավարության աշխատակազմի արտադրական ենթակառուցվածքների վարչության էներգետիկայի բաժնի պետ 09.06.2008 թ. - առ այսօր «Արցախ ՀԷԿ» ԲԲԸ տնօրենների խորհրդի անդամ |
| Նախորդ երեք տարիների ընթացքում Ընկերության կողմից տրված վարձատրությունները | Չի վարձատրվել |

| | |
|---|---|
| Տվյալ անձին պատկանող Ընկերության բաժնետոմսերի քանակը | Սեփականության իրավունքով Ընկերությունում բաժնետոմս չունի |
| Նշանակալից մասնակցությունն այլ անձանց բաժնային արժեթղթերում | Այլ անձանց բաժնային արժեթղթերում նշանակալից մասնակցություն չունի |
| Պայմանագրերի և որոշումների համառոտ նկարագրություն, համաձայն որոնց տվյալ անձը հանդիսանում է Ընկերության կառավարմանը մասնակցող անձ, նրա գործողությունների լիազորության ժամկետը | ԼՂՀ կառավարության աշխատակազմի ղեկավար-նախարարի 29.05.2008թ. թիվ 70/2 հրաման: Գործողությունների լիազորությունների ժամկետը՝ անժամկետ: |

3.4.8.4. Ընկերության վերստուգողն է Վաղարշակ Մանուկյանը: Տեղեկություններ նրա մասին.

| Պահանջվող տեղեկությունը | Նկարագրությունը |
|---|---|
| Բնակության վայրը | ՀՀ, ք. Երևան, Ներքին Շենգավիթի 1 փող, 25 տուն |
| Մասնագիտությունը | Տնտեսագետ |
| Վերջին երեք տարիների ընթացքում զբաղեցրած պաշտոնները | <ol style="list-style-type: none"> 01.10.2005թ. - 02.06.2008թ. «Ֆլեշ» ՍՊԸ ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավար 01.10.2006թ. - 01.02.2008թ. «Արարատբանկ» ԲԲԸ խորհրդի անդամ 09.06.2008թ. - առ այսօր «Արցախ ՀԷԿ» ԲԲԸ տնօրենների խորհրդի անդամ |
| Նախորդ երեք տարիների ընթացքում Ընկերության կողմից տրված վարձատրությունները | 2008թ. - ամսեկան 150,000 դրամ |
| Տվյալ անձին պատկանող Ընկերության բաժնետոմսերի քանակը | Սեփականության իրավունքով Ընկերությունում բաժնետոմս չունի |
| Նշանակալից մասնակցությունն այլ անձանց բաժնային արժեթղթերում | «Ավիատեմպ» ՍՊԸ, 100% բաժնեմաս |
| Պայմանագրերի և որոշումների համառոտ նկարագրություն, համաձայն որոնց տվյալ անձը հանդիսանում է Ընկերության կառավարմանը մասնակցող անձ, նրա գործողությունների լիազորության ժամկետը | ԼՂՀ կառավարության աշխատակազմի ղեկավար-նախարարի 29.05.2008թ. թիվ 70/2 հրաման: Գործողությունների լիազորությունների ժամկետը՝ 29.05.2011թ.: |

- 3.4.8.5. Ազդագրի գրանցման ներկայացմանը նախորդող վերջին երեք տարվա ընթացքում Ընկերության կառավարմանը մասնակցող անձի դեմ սնանկացման (անվճարունակության) միջնորդությունների ներկայացման, ինչպես նաև դատարանի որոշման (դատավճռի) հիման վրա կամ պետական որևէ մարմնի կողմից նրա նկատմամբ պատասխանատվության միջոցներ չեն կիրառվել:
- 3.4.8.6. Ընկերության կառավարմանը մասնակցող անձանց միջև ազգակցական կապերը բացակայում են:
- 3.4.8.7. Ընկերության և Ընկերության կառավարմանը մասնակցող անձանց միջև ցանկացած շահերի բախումը կարգավորվում է ԼՂՀ օրենսդրության համապատասխան: Ներկայումս Ընկերության և Ընկերության կառավարմանը մասնակցող անձանց միջև շահերի բախում գոյություն չունի:

3.5. Թողակողի հետ փոխկապակցված անձանց, թողարկողի նշանակալից մասնակիցների վերաբերյալ տեղեկություններ

- 3.5.1. Թողարկողի հետ փոխկապակցված անձանց վերաբերյալ տեղեկություններ
- 3.5.1.1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետությանը ի դեմս ԼՂՀ կառավարությանն առընթեր արտադրական ենթակառուցվածքների վարչության պետ Վալերի Բալայանի, պատկանում է թողարկողի բաժնային արժեթղթերի 100%-ը:
- 3.5.1.2. Քանի որ ԼՂՀ-ը ի դեմս ԼՂՀ կառավարությանն առընթեր արտադրական ենթակառուցվածքների վարչության պետ Վալերի Բալայանի հանդիսանում է Ընկերության բաժնետոմսերի 100%-ի սեփականատեր, վերջինս Ընկերության որոշումների վրա էականորեն ազդելու փաստացի հնարավորություն ունի՝ Ընկերության ԲԸԺ բոլոր իրավասությունների շրջանակներում:
- 3.5.1.3. Վալերի Բալայանը վերջին 3 տարիներին թողարկողի կառավարման մարմիններում որևէ պաշտոն չի զբաղեցրել:
- 3.5.1.4. Ընկերության հետ փոխկապակցված իրավաբանական անձ են հանդիսանում.
- ✓ «ԱՐՑԱԽԷՆԵՐԳՈ» փակ բաժնետիրական ընկերությունը, քանի որ երկու ընկերություններում էլ բաժնետոմսերի կառավարման լիազորությունները վերապահված են Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր արտադրական ենթակառուցվածքների վարչությանը: «ԱՐՑԱԽԷՆԵՐԳՈ» ՓԲԸ գտնվելու վայրն է՝ ԼՂՀ, ք. Ստեփանակերտ, Սասունցի Դավթի փող., թիվ 64: Այն իրականացնում է էլեկտրաէներգիայի փոխանցում և բաշխում (գնում է էլեկտրաէներգիան արտադրողներից և վաճառում վերջնական սպառողին): «ԱՐՑԱԽԷՆԵՐԳՈ» ՓԲԸ-ն «ԱՐՑԱԽ ՀԷԿ»

ԲԲԸ բաժնային արժեթղթեր չունի, ուստի այն «ԱՐՑԱԽ ՀԷԿ» ԲԲԸ որոշումները կանխորոշելու փաստացի հնարավորություն ևս չունի: Ընկերությունները չունեն ընդհանուր տնտեսական շահեր:

3.5.2. Թողարկողի նշանակալից մասնակիցները (բացառությամբ այն մասնակիցների, որոնց պատկանում է թողարկողի բաժնային արժեթղթերի 20 և ավելի տոկոսը)

- 3.5.2.1. Ընկերությունը ֆիզիկական անձ հանդիսացող նշանակալից մասնակից չունի:
- 3.5.2.2. Ընկերությունը իրավաբանական անձ հանդիսացող նշանակալից մասնակից չունի:

3.5.3. Թողարկողի կողմից թողարկված արժեթղթերի վերաբերյալ տեղեկություններ

- 3.5.3.1. Ընկերության կողմից թողարկված արժեթղթերն են բաժնետոմսերը: Տեղեկություններ դրանց մասին.
- ✓ Բաժնետոմսերը հասարակ (սովորական) անվանական են, ոչ փաստաթղթային:
 - ✓ Ընկերության թողարկված բաժնետոմսերը կարգավորվող շուկայում առևտրին թույլատրված չեն:
 - ✓ Ընկերության թողարկված և տեղաբաշխված բաժնետոմսերի ընդհանուր ծավալը՝ 5,100,000,000 դրամ է, քանակը՝ 5,100,000 հատ:
 - ✓ Ընկերության բաժնետոմսերը մարման ժամկետ չունեն:
- 3.5.3.2. Բաժնետոմսերի սեփականատերերի հիմնական իրավունքներն են.
- ✓ մասնակցել Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովին՝ վերջինիս իրավասությանը պատկանող բոլոր հարցերի նկատմամբ ձայնի իրավունքով,
 - ✓ ֆինանսական տարվա ավարտից հետո 60 օրվա ընթացքում ներկայացնել երկուսից ոչ ավելի առաջարկություններ բաժնետերերի ընդհանուր ժողովի օրակարգի վերաբերյալ, ինչպես նաև առաջարկել Ընկերության տնօրենների խորհրդի և վերստուգողի անդամության թեկնածուներ, եթե նա հանդիսանում է ձայնի իրավունք ունեցող բաժնետոմսերի առնվազն 2 տոկոսի սեփականատեր,
 - ✓ մասնակցել Ընկերության կառավարմանը,
 - ✓ ստանալ շահութաբաժիններ Ընկերության գործունեությունից առաջացած շահույթից,
 - ✓ առաջնահերթ կարգով ձեռք բերել Ընկերության կողմից տեղաբաշխվող բաժնետոմսերը, եթե «Բաժնետիրական ընկերությունների մասին» ԼՂՀ օրենքով և Ընկերության կանոնադրությամբ այլ բան չի նախատեսված,
 - ✓ ստանալ Ընկերության գործունեության վերաբերյալ ցանկացած տեղեկատվություն՝ գաղտնի փաստաթղթերից բացի, այդ թվում՝ կանոնադրությամբ սահմանված կարգով ծանոթանալ հաշվապահական հաշվեկշռին, հաշվետվություններին, հաշվապահական գրքերին, Ընկերության արտադրատնտեսական գործունեությանը:

- ✓ Ընկերության կանոնադրական կապիտալի առնվազն 5 % կազմող ձայնի իրավունք տվող բաժնետոմսերին տիրող բաժնետերերը կարող են պահանջել փորձագետ կամ փորձագետների խումբ՝ Ընկերության գործունեությանը վերաբերող հաշվետվությունները և գաղտնիք ներկայացնող փաստաթղթերը ստուգելու նպատակով: Ստուգման հետ կապված ծախսերը փոխհատուցում են ստուգումը պահանջող բաժնետերերը,
 - ✓ Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովում իր իրավունքները ներկայացնելու համար լիազորել երրորդ անձի,
 - ✓ հանդես գալ առաջարկություններով Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովում,
 - ✓ Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովում քվեարկել իրեն պատկանող բաժնետոմսերի ձայների չափով,
 - ✓ հայցով դիմել դատարան՝ Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի կողմից ընդունված և գործող օրենքներին և այլ իրավական ակտերին հակասող որոշումների բողոքարկման նպատակով,
 - ✓ Ընկերության լուծարման դեպքում ստանալ պարտատերերի հետ կատարված հաշվարկներից հետո մնացած Ընկերության գույքի իր հասանելիք մասը կամ դրա արժեքը,
 - ✓ օտարել կամ այլ ձևով այլ անձանց փոխանցել իր սեփականությունը հանդիսացող բաժնետոմսը,
 - ✓ պահանջել բաժնետոմսերի հետգնում «Բաժնետիրական ընկերությունների մասին» ԼՂՀ օրենքով նախատեսված դեպքերում,
 - ✓ օգտվել Ընկերության կանոնադրությամբ նախատեսված այլ իրավունքներից:
- 3.5.3.3. Բաժնետերերը պարտավոր են չհրապարակել Ընկերության գործունեության վերաբերյալ գաղտնիք ներկայացնող տեղեկությունները:
- 3.5.3.4. Շահութաբաժինների չափը որոշվում է՝ ելնելով Ընկերության փաստացի շահույթի բաշխումից, հիմք ընդունելով Ընկերության շահութաբաժնային քաղաքականությունը:
- 3.5.3.5. Ընկերության տնօրենների խորհուրդը տարեկան շահութաբաժնի չափի և դրա վճարման ձևի մասին Ընկերության ընդհանուր ժողովին ներկայացվող առաջարկությունում հիմնավորում է Ընկերության գուտ շահույթի բաշխման ուղղությունները, հաշվի առնելով՝
- ✓ Ընկերության պահուստային հիմնադրամի ստեղծման ԼՂՀ օրենսդրության պահանջները
 - ✓ շահութաբաժնի վճարմանն ուղղվող գումարի չափը՝ ելնելով ֆինանսական շուկայում բաժնային արժեթղթերի, ինչպես նաև ներդրումային այլ արժեթղթերի դիմաց վճարվող եկամուտների տոկոսաչափից
 - ✓ Ընկերության բաժնետոմսերի շուկայական արժեքի բարձրացման և հիմնադրամների ձևավորման անհրաժեշտությունը:

- 3.5.3.6. Ընդհանուր ժողովը շահութաբաժինների վճարման մասին որոշումն ընդունում է ժողովին մասնակցող՝ քվեարկող բաժնետոմսերի սեփականատերերի ձայների պարզ մեծամասնությամբ:
- 3.5.3.7. Տեղաբաշխված բաժնետոմսերի դիմաց շահութաբաժինները վճարվում են զուտ շահույթից՝ դրամով: Եռամսյակային և կիսամսյակային շահութաբաժինները վճարվում են Ընկերության տնօրենների խորհրդի որոշմամբ, տարեկան շահութաբաժինները՝ Ընկերության ժողովի որոշմամբ: Տարեկան շահութաբաժնի չափի և դրա վճարման ձևի մասին որոշումն ընդունում է բաժնետերերի տարեկան ժողովը՝ Ընկերության տնօրենների խորհրդի առաջարկությամբ, սահմանելով նաև վճարման ժամկետը:
- 3.5.3.8. Բաժնետոմսերի սեփականատերերն իրենց շահութաբաժինները կարող են ստանալ Ընկերության գտնվելու վայրից՝ կանխիկ դրամով, կամ իրենց անվամբ բացված բանկային հաշիվներից:
- 3.5.3.9. ԼՂՀ օրենսդրությամբ և Ընկերության կանոնադրությամբ սահմանված են շահութաբաժինների վճարման իրավունքի սահմանափակումներ: Մասնավորապես՝ Ընկերությանն արգելվում է վճարել շահութաբաժիններ, եթե՝
- ✓ լրիվ չի վճարվել Ընկերության կանոնադրական կապիտալը,
 - ✓ Ընկերությունը բաժնետիրոջ պահանջով բաժնետիրոջից հետ չի գնել բոլոր բաժնետոմսերը, այն դեպքում երբ,
 - որոշում է ընդունվել Ընկերության վերակազմակերպման, նախապատվության իրավունքի կասեցման կամ խոշոր գործարք կնքելու մասին, և բաժնետերը քվեարկել է Ընկերության վերակազմակերպման, նախապատվության իրավունքի կասեցման կամ խոշոր գործարք կնքելու դեմ կամ այդ հարցերով քվեարկությանը չի մասնակցել,
 - Ընկերության կանոնադրության մեջ լրացումներ կամ փոփոխություններ են կատարվել, կամ հաստատվել է կանոնադրությունը նոր խմբագրությամբ, որի հետևանքով սահմանափակվել են բաժնետիրոջ իրավունքները և բաժնետերը դեմ է քվեարկել կամ քվեարկությանը չի մասնակցել,
 - ✓ շահութաբաժիններ վճարելու որոշումն ընդունելու պահի դրությամբ, Ընկերության վիճակը համապատասխանում է օրենքով սահմանված անվճարունակության (սնանկության) հայտանիշերին, կամ դրանք ի հայտ կգան շահութաբաժինների վճարման հետևանքով.
 - ✓ Ընկերության զուտ ակտիվների արժեքը պակաս է Ընկերության կանոնադրական կապիտալից, կամ կպակասի շահութաբաժինների վճարման հետևանքով:

- 3.5.3.10. Ընկերության բաժնետոմսերի ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ սեփականատերերին շահութաբաժինների վճարումն իրականացվում է նույն պայմաններով:
- 3.5.3.11. Ընկերությունը չունի տեղաբաշխված արտոնյալ բաժնետոմսեր:
- 3.5.3.12. 2007 թվականի արդյունքներով, Ընկերության բաժնետերերի ժողովի որոշմամբ (նախարարի հրամանով) շահութաբաժիններ չեն վճարվել՝ զուտ շահույթն ուղղելով Ընկերության կապիտալացման ավելացմանը: Ընթացիկ տարում Ընկերությունը շահութաբաժինների միջանկյալ վճարումներ չի կատարել:
- 3.5.3.13. Ընկերության ստեղծման պահից Ընկերության արժեթղթերի վաճառք ֆոնդային բորսայում չի իրականացվել:
- 3.5.3.14. Ընկերության արժեթղթերի բաժանման, համախմբման, ձեռքբերման, հետզման կամ փոխարկման դեպքեր Ընկերության ստեղծման պահից չեն եղել:

4. ՀԵՏԱԴԱՐՉ ԿԱՊ

«Արցախի ՀԷԿ» ԲԲԸ

Ընդհանուր տվյալներ
Ա.Առաքելյանի փող. 10,
ԼՂՀ, ք. Ստեփանակերտ

Հեռ./Ֆաքս՝ +374479 74214
Էլ. փոստ՝ artsakhhek@mail.ru
Ինտ. կայք՝ www.artsakhhpp.com

Վահրամ Բեգլարյան
Գլխավոր տնօրեն

Հեռ./Ֆաքս՝ +374479 74214
Էլ. փոստ՝ artsakhhek@mail.ru

«Արմենբրոկ» ԲԲԸ

Ընդհանուր տվյալներ
Տիգրան Մեծի պողոտա 32/1,
ՀՀ, ք. Երևան 0018

Հեռ.՝ +37410 538700
Հեռ./Ֆաքս՝ +37410 528986
Էլ. փոստ՝ info@armenbrok.com
Ինտ. կայք՝ www.armenbrok.com

Արամ Կայֆաջյան, տ.գ.ք.
Գլխավոր տնօրեն

Հեռ.՝ +37410 538700
Հեռ./Ֆաքս՝ +37410 528986
Էլ. փոստ՝ kayfajyan@armenbrok.com

Սամվել Սահակյան, տ.գ.ք.
Գլխավոր Վերլուծաբան

Հեռ.՝ +37410 538700
Հեռ./Ֆաքս՝ +37410 528986
Էլ. փոստ՝ sahakyan@armenbrok.com

Վազգեն Արզարյան
Ֆինանսական խորհրդատու

Հեռ.՝ +37410 538700
Հեռ./Ֆաքս՝ +37410 528986
Էլ. փոստ՝ abgaryan@armenbrok.com

5. ԿԻՑ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ

- ✓ Բաժանորդագրության Հայտի օրինակ
- ✓ ԼՂՀ Մարտակերտի շրջանի քարտեզը և նախատեսվող ՀԷԿ-երի տեղակայումը
- ✓ ԼՂՀ տնտեսության համառոտ նկարագիրը
- ✓ Ընկերության կանոնադրությունը
- ✓ Ընկերության Ֆինանսական հաշվետվությունների աուդիտի եզրակացության պատճեն
- ✓ Ներդրումային ծառայություններ մատուցող անձանց հետ կնքած պայմանագրերը
- ✓ Ընկերության Ֆինանսական Հաշվետվությունները

5.1. Բաժանորդագրության Հայտի օրինակ

ԲԱԺԱՆՈՐԳԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՅՏ
Ֆիզիկական անձանց համար



SUBSCRIPTION FORM
For individuals

Ներդրողի վերաբերյալ տեղեկություններ
Information about Investors

| | |
|--|--|
| Անուն, ազգանուն Name, Surname | |
| Անձնագրի տվյալներ Passport details | |
| Բնակության հասցեն Residence address | |
| Կապի միջոցները (Հեռ., Ֆաքս, Էլ. փոստ) Contact details (Tel., Fax, E-mail) | |
| Արժեթղթերի հաշվի համարը (առկայության դեպքում) Securities account details (if available) | |

Բաժանորդագրության վերաբերյալ տեղեկություններ
Information about subscription

| | |
|---|--|
| Բաժնետոմսերի քանակը Number of shares | |
| Գործարքի ծավալը (ՀՀ դրամ) Transaction volume (AMD) | |
| Բաժանորդագրության ձևը Type of subscription | <input type="checkbox"/> լրիվ կամ ոչինչ all or nothing <input type="checkbox"/> մասնակի partially allowed |

Ես, ներքևստորագրողս, ստորագրելով սույն փաստաթուղթը, տեղեկացնում եմ, որ,
I, undersigned, signing this document verify, that.

- Ծանոթացել եմ «Արցախ ՀԷԿ» ԲԲԸ բաժնետոմսերի թողարկման Ազդագրին
I have read the entire Prospectus of "Artsakh HEK" OJSC
- Լիովին գիտակցում եմ սույն բաժնետոմսերում ներդրումների հետ կապված ռիսկերը:
I fully realize the risks related to the investment in the offered shares.

Ներդրող (լիազոր անձ)
Investor (authorized person)

_____ Անուն Ազգանուն, Name Surname _____ Ստորագրություն, Signature

Լրացվում է Տեղաբաշխողի լիազորված աշխատակցի կողմից
For the Placement Agent use only

| | | |
|---|---|---------------------------------------|
| Հայտի ներկայացման ամսաթիվ Submission date | _____ օր, ամիս, տարեթիվ, day, month, year _____ | _____ ժամ, րոպե, hour, minute _____ |
| Վճարման ամսաթիվ Payment date | _____ օր, ամիս, տարեթիվ, day, month, year _____ | |
| Բաժանորդագրված բաժնետոմսեր Subscribed shares | _____ քանակ, quantity _____ | _____ զույգ, volume _____ |
| Լիազորված աշխատակից Authorized employee | _____ Անուն Ազգանուն, Name Surname _____ | _____ ստորագրություն, signature _____ |

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՅՏ
Իրավաբանական անձանց համար



SUBSCRIPTION FORM
For legal entities

Ներդրողի վերաբերյալ տեղեկություններ
Information about Investors

| | |
|--|--|
| Վազմակերպության անվանումը Company name | |
| Գրանցման տվյալները Registration details | |
| Գործունեության հասցեն Business address | |
| Իրավաբանական հասցեն Legal address | |
| Վապի միջոցները (Հեռ., Ֆաքս, Էլ. փոստ) Contact details (Tel., Fax, E-mail) | |
| Արժեթղթերի դեպո հաշվի համարը (առկայության դեպքում) Details of securities depo account (if available) | |

Բաժանորդագրության վերաբերյալ տեղեկություններ
Information about subscription

| | |
|--|--|
| Բաժնետոմսերի քանակը Number of shares | |
| Գործարքի ծավալը (ՀՀ դրամ) Transaction volume (AMD) | |
| Բաժանորդագրության ձևը Type of subscription | <input type="checkbox"/> լրիվ կամ ոչինչ all or nothing <input type="checkbox"/> մասնակի partially allowed |

Ես, ներքևստորագրյալս, ստորագրելով սույն փաստաթուղթը, տեղեկացնում եմ, որ,
I, undersigned, signing this document verify, that

- Ծանոթացել եմ «Արցախ ՀԷԿ» ԲԲԸ բաժնետոմսերի թողարկման Ազդագրին
I have read the entire Prospectus of "Artsakh HEK" OJSC
- Լիովին գիտակցում եմ սույն բաժնետոմսերում ներդրումների հետ կապված ռիսկերը:
I fully realize the risks related to the investment in the offered shares.

Ներդրողի լիազոր անձ
Authorized person of the Investor


_____ **Անուն Ազգանուն,**
Name Surname

_____ **Ստորագրություն (կնիք),**
Signature (Seal)

Լրացվում է Տեղաբաշխողի լիազորված աշխատակցի կողմից
For the Placement Agent use only

| | | |
|--|---|--|
| Հայտի ներկայացման ամսաթիվ Submission date | _____ օր, ամիս, տարեթիվ, day, month, year | _____ ժամ, րոպե, hour, minute |
| Վճարման ամսաթիվ Payment date | _____ օր, ամիս, տարեթիվ, day, month, year | |
| Բաժանորդագրված բաժնետոմսեր Subscribed shares | _____ քանակ, quantity | _____ զույմար, volume |
| Լիազորված աշխատակից Authorized employee | _____ Անուն Ազգանուն, Name Surname | _____ ստորագրություն, signature |

5.2. ԼՂՀ Մարտակերտի շրջանի քարտեզը և նախատեսվող ՀԷԿ-երի տեղակայումը



5.3. ԼՂՀ տնտեսության համառոտ նկարագիրը

5.3.1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տնտեսական զարգացումը պայմանավորված է հանրապետության տնտեսության հինգ հիմնական ոլորտների կողմից թողարկվող արտադրանքի և ծառայությունների ծավալների փոփոխություններով: Այդ հիմնական ոլորտներն են արդյունաբերություն, գյուղատնտեսություն, շինարարություն, տրանսպորտ և առևտուր: Ստորև բերված աղյուսակը արտացոլում է հանրապետության հիմնական մակրոտնտեսական ցուցանիշների դինամիկան ըստ տարիների:


Աղյուսակ 27. ԼՂՀ հիմնական մակրոտնտեսական ցուցանիշները

| | 2002 | 2003 | 2004 | 2005 | 2006 | 2007 |
|--|----------|----------|----------|----------|-----------|-----------|
| ՀՆԱ, մլն դրամ | 26,477.8 | 33,883.7 | 42,830.0 | 51,379.4 | 61,885.9 | 70,791.0 |
| ՀՆԱ իրական աճ, % | 11.3% | 20.2% | 18.2% | 14.1% | 10.1% | 8.8% |
| ՀՆԱ մեկ շնչի հաշվով, հազ. դրամ | 193.8 | 247.3 | 312.2 | 373.1 | 449.4 | 510.0 |
| Արդյունաբերական արտադրանքի ծավալը, մլն դրամ | 8,082.6 | 11,125.4 | 18,579.1 | 17,773.0 | 24,203.6 | 27,802.0 |
| Գյուղատնտեսական արտադրանքի ծավալը, մլն դրամ | 15,176.2 | 21,160.1 | 21,715.0 | 21,055.0 | 20,735.5 | 23,812.5 |
| Շինարարության ծավալը, մլն դրամ | 6,734.4 | 8,694.4 | 9,138.8 | 12,596.5 | 17,602.0 | 20,810.1 |
| Պետ. Բյուջեի եկամուտներ, մլն դրամ | 3,418.6 | 4,569.8 | 6,440.4 | 9,309.7 | 12,149.7 | 15,065.2 |
| Հիմնական կապիտալի համախառն կուտակում, մլն դրամ | 9,261.6 | 10,018.2 | 9,166.5 | 7,297.7 | 11,914.2 | - |
| Արտահանում, հազ. ԱՄՆ դոլար | 14,136.3 | 29,314.9 | 39,115.3 | 38,214.9 | 45,331.1 | 72,549.6 |
| Ներմուծում, հազ. ԱՄՆ դոլար | 48,069.2 | 54,329.1 | 76,467.0 | 94,902.8 | 113,180.3 | 204,843.3 |
| Սպառողական գների ինդեքս, % | 100.9 | 110.0 | 102.6 | 100.6 | 108.5 | 108.2 |
| Արդյունաբերական գների ինդեքս % | 102.8 | 95.6 | 100.4 | 89.9 | 99.6 | 103.0 |
| Բանկային վարկեր, մլն դրամ | 5,093.1 | 6,033.5 | 9,138.9 | 16,612.3 | 14,957.5 | - |
| Աղբյուրը՝ ԼՂՀ Ազգային Վիճակագրական Ծառայություն | | | | | | |

5.3.2. Ինչպես ներկայացված է աղյուսակում, ԼՂՀ ՀՆԱ-ն (շուկայական գներով) վերջին տարիներին շուրջ երեք անգամ աճել է, ցուցաբերելով 11.5% միջին տարեկան աճի տեմպ: Ցուցանիշների այսպիսի աճը պայմանավորված է տնտեսական բարեփոխումներով, որոնք հանգեցրել են վերջին վեց տարիների արդյունաբերական արտադրանքի 244% աճին, դրսևորելով 26.5% միջին տարեկան աճ: Բացի այդ, ՀՆԱ վերջին տարիների աճում մեծ ներդրում է ունեցել նաև շինարարության ոլորտը, որն այս ժամանակահատվածում նույնպես աճել է շուրջ երեք անգամ՝ 2007թ. հասնելով 20.8 մլն. դրամի: Շինարարության ոլորտի զարգացումը պայմանավորված է կապիտալ ներդրումների աճով կամ, այլ խոսքերով, հիմնական կապիտալի համախառն կուտակումներով, որոնք նույնպես ցուցաբերել են աճի բավականին բարձր միտումներ:

- 5.3.3. Բոլոր այս զարգացումները տեղի են ունեցել գնաճի ցածր մակարդակի պայմաններում (Սպառողական գների ինդեքսը և Արդյունաբերական գների ինդեքսը միջինում 2002-2007թ.թ. համար կազմել են համապատասխանաբար 4.3% և -1%):
- 5.3.4. Ուսումնասիրելով արդյունաբերության ոլորտը, կարող ենք տեսնել, որ հանքարդյունաբերությունը կազմում է ԼՂՀ արդյունաբերության ոլորտի ամենամեծ մասը (տես գծանկար 2), իսկ երկրորդ տեղում է արտադրությունը: Արտադրության մեջ գերիշխող դեր ունի սննդամթերքի և խմիչքների արտադրությունը (այն կազմում է ընդհանուր վերամշակող արդյունաբերության 55.3%):

Գծանկար 7. ԼՂՀ արդյունաբերության կառուցվածքը



Աղբյուրը՝ ԼՂՀ Ազգային Վիճակագրական Ծառայություն

- 5.3.5. Էլեկտրաէներգիայի, ջրի և գազի արտադրությունը կազմում է ընդհանուր արդյունաբերության շատ փոքր մասը, 2007թ. կազմելով 4,232.3 մլն. ՀՀ դրամ, որից 2670.3 մլն. դրամը էլեկտրաէներգիայի արտադրության և բաշխման ծավալներն են:
- 5.3.6. Ուսումնասիրելով արտասահմանյան ներդրումները ԼՂՀ-ում, տեսնում ենք, որ ԼՂՀ կառավարությունը այն համարում է գերակա ոլորտ և ամեն կերպ փորձում է խթանել դրանց ներհոսքը: Մասնավորապես, օտարերկրյա կապիտալով ընկերությունները ունեն որոշակի հարկային արտոնություններ և, բացի այդ, կան որոշակի ապրանքներ, որոնք օտարերկրյա կապիտալով ընկերությունների կողմից արտադրվելու դեպքում ազատվում են ակցիզային և ավելացված արժեքի հարկերից: Այս գործոնների շնորհիվ 1999թ.-ից օտարերկրյա ուղղակի ներդրումները աճել են 10 անգամ:

- 5.3.7. Նշենք նաև, որ նոր ձևավորված կառավարությունը իրականացնում է որոշ կտրուկ փոփոխություններ և բարեփոխումներ, որոնք արդեն իսկ ցույց են տալիս դրական արդյունքեր հարկային ոլորտում և եռամսյակային տնտեսական աճի ոլորտում: Բացի այդ, հիմնվելով այս արդյունքների վրա, կառավարությունը նախատեսում է առաջիկա հինգ տարիներին հասնել տարեկան 15% իրական տնտեսական աճի:

5.4. Ընկերության կանոնադրությունը

Հ Ա Ս Տ Ա Տ Վ Ա Ծ Է

ԼՂՀ կառավարության
աշխատակազմի ղեկավար-
նախարարի 2008 թ. 05.29-ի
թիվ 7081 հրամանով

Նախարար


Ա. Գրիգորյան
" 09 " 06 " 2008 թ.



Կազմված է 27.05.2008 թ. և բաղկացած է 23 բերթից
Տպագրված է ընդամենը 6 օրինակ

ՕՐԻՆԱԿ 5

Գ Ր Ա Ն Ց Վ Ա Ծ Է

ԼՂՀ Արդարադատության նախարարության
պետական ռեգիստրի Ստեփանակերտի
տարածքային բաժնի կողմից
" 09 " 06 " 2008 թ.

գրանցման թիվ 443.130.11407

վկայական ՕՁ ԴՆ Ն: ՕՍԳՕՑՅ

Ստեփանակերտի Տ/Բ պետ՝




«ԱՐՑԱԽ ՀԷԿ»

բաց բաժնետիրական ընկերության

Կ Ա Ն Ո Ն Ա Դ Բ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. «ԱՐՑԱԽ ՀԷԿ» բաց բաժնետիրական ընկերությունը (հետագայում՝ Ընկերություն) համարվում է առևտրային կազմակերպություն հանդիսացող տնտեսական ընկերություն, որի կանոնադրական կապիտալը բաժանված է ընկերության նկատմամբ բաժնետերերի պարտավորական իրավունքը հավաստիացնող որոշակի թվով բաժնետոմսերի, որոնց տերերը (այսուհետ՝ Բաժնետերեր) իրավունք ունեն օտարել իրենց պատկանող բաժնետոմսերն առանց Ընկերության մյուս բաժնետերերի համաձայնության: Ընկերությունն իրավաբանական անձ է և ունի իր բաժնետերերի գույքից առանձնացված, ինքնուրույն հաշվեկշռում հաշվառված գույք:

Ընկերությունը ստեղծվել է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2008 թ. մայիսի 13-ի «ԱՐՑԱԽ ՀԷԿ» փակ բաժնետիրական ընկերությունը վերակազմակերպելու մասին» թիվ 360 որոշման համաձայն «ԱՐՑԱԽ ՀԷԿ» փակ բաժնետիրական ընկերության (գրանցված Լեռնային Ղարաբաղի Հանրապետության արդարադատության նախարարության ռեգիստրի բաժնի կողմից 12.12.2007 թ., գրանցման թիվ՝ 443.120.11328, վկայական՝ 02 Ա 001980) վերակազմավորման արդյունքում և հանդիսանում է նրա իրավահաջորդը՝ փոխանցման ակտին համապատասխան:

«ԱՐՑԱԽ ՀԷԿ» փակ բաժնետիրական ընկերությունը ստեղծվել է «ԱՐՑԱԽԷՆԵՐԳ-Ո» փակ բաժնետիրական ընկերության (գրանցված Լեռնային Ղարաբաղի Հանրապետության արդարադատության նախարարության ռեգիստրի բաժնի կողմից 28.02.2005 թ., գրանցման թիվ՝ 443.120.20892, վկայական՝ 001350) առանձնացման միջոցով վերակազմակերպման արդյունքում և հանդիսանում է նրա իրավահաջորդը՝ բաժանիչ (առանձնացման) հաշվեկշռին համապատասխան:

Ընկերության հիմնադրի անունից հանդես եկող պետական կառավարման լիազորված մարմինն է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության աշխատակազմի ղեկավար-նախարարը (այսուհետ՝ Լիազորված մարմին):

1.2. Ընկերության իրավունակությունը ծագում է նրա ստեղծման (պետական գրանցման) և դադարում է լուծարման ավարտի (լուծարման մասին պետական գրանցամատյանում գրառման) պահից:

1.3. Ընկերությունն ունի իր ֆիրմային անվանումը (հայերեն, ռուսերեն և անգլերեն գրառումներով), ինչպես նաև Լեռնային Ղարաբաղի Հանրապետության զինանշանի պատկերը պարունակող կլոր կնիք, դրոշմներ և ձևաթղթեր, ինչպես նաև խորհրդանիշ, օրենքով սահմանված կարգով գրանցված ապրանքային, առևտրային և այլ նշաններ ու անհատականացնող այլ միջոցներ:

1.4. Ընկերության գործունեությունը կարգավորվում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Քաղաքացիական Օրենսգրքով (այսուհետ՝ Օրենսգիրք), «Բաժնետիրական ընկերությունների մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքով (այսուհետ՝ Օրենք), Լեռնային Ղարաբաղի Հանրապետության այլ օրենքներով և իրավական ակտերով, ինչպես նաև սույն կանոնադրությամբ:

Եթե Լեռնային Ղարաբաղի Հանրապետության միջազգային պայմանագրերով սահմանված են բաժնետիրական ընկերությունների գործունեությունը կարգավորող այլ նորմեր, քան բովանդակում է սույն կանոնադրությունը, ապա կիրառվում են միջազգային պայմանագրերի նորմերը:

1.5. Ընկերության բաժնետերերի և Ընկերության միջև հարաբերությունները կարգավորվում են Օրենքով և սույն կանոնադրությամբ:

1.6. Ընկերությունն իր պարտավորությունների համար պատասխանատու է իրեն պատկանող ամբողջ գույքով:

Ընկերությունը պատասխանատու չէ իր բաժնետերերի պարտավորությունների համար:

Ընկերության բաժնետերերը Ընկերության պարտավորությունների համար պատասխանատվություն չեն կրում և իրենց պատկանող բաժնետոմսերի արժեքի սահմաններում կրում են ընկերության գործունեության հետ կապված վնասների ռիսկեր:

1.7. Եթե Ընկերության անվճարունակության (սնանկության) պատճառ են հանդիսանում բաժնետերերի կամ այլ անձանց գործողությունները (անգործությունը), որոնք ունեն Ընկերությանը կատարման համար պարտադիր ցուցումներ տալու իրավունք կամ այլ կերպ Ընկերության գործունեությունը կանխորոշելու հնարավորություններ, նշված բաժնետերերի կամ այլ անձանց վրա կարող է դրվել լրացուցիչ (սուբսիդիար) պատասխանատվություն՝ Ընկերության պարտավորություններով: Վերոհիշյալ բաժնետերերի կամ այլ անձանց գործողությունները (անգործությունը) համարվում են Ընկերության անվճարունակության (սնանկության) պատճառ միայն այն դեպքում, եթե նրանք օգտագործել են վերը նշված իրենց իրավունքը կամ հնարավորությունները, նախօրոք իմանալով, որ այդ պատճառով Ընկերությունը կհայտնվի անվճարունակության (սնանկության) վիճակում:

1.8. Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը և համայնքները պատասխանատվություն չեն կրում Ընկերության պարտավորությունների համար: Ընկերությունը պատասխանատվություն չի կրում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության և համայնքների պարտավորությունների համար:

1.9. Ընկերության ֆիրմային անվանումն է՝

հայերեն լրիվ՝ «ԱՐՑԱԽ ՀԷԿ» Բաց Բաժնետիրական Ընկերություն

կրճատ՝ «ԱՐՑԱԽ ՀԷԿ» ԲԲԸ

ռուսերեն լրիվ՝ Открытое Акционерное Общество «АРЦАХ ГЭК»

կրճատ՝ ОАО «АРЦАХ ГЭК»

անգլերեն լրիվ՝ «ARTSAKH HEK» Open Joint Stock Company

կրճատ՝ «ARTSAKH HEK» OJSC

1.10. Ընկերության գտնվելու վայրը և իրավաբանական (փոստային) հասցեն է՝

ԼՂՀ, ք. Ստեփանակերտ, Ա. Առաքելյան փող., թիվ 10:

2. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ ՈՒ ՆՊԱՏԱԿԸ

2.1. Ընկերության ստեղծման նպատակն է տնտեսական գործունեություն իրականացնելու ճանապարհով շահույթի ստացումը:

2.2. Ընկերության գործունեության հիմնական տեսակներն են.

- Էլեկտրական էներգիայի արտադրություն,
- Ընկերության հիմնական միջոցների շահագործման, ընթացիկ նորոգման և կարգաբերման աշխատանքների կատարում,
- Ընկերության տեխնիկական վերազինման, վերակառուցման, հիմնանորոգման աշխատանքների կատարում, նոր կառուցվող օբյեկտների պատվիրատուի գործառնությունների իրականացում,
- Նոր էներգաօբյեկտների (հիդրոէլեկտրակայանների) շինարարության իրականացում:

2.3. Ընկերությունը կարող է իրականացնել օրենքով չարգելված ցանկացած տնտեսական գործունեություն:

Օրենքով սահմանված գործունեության առանձին տեսակներով Ընկերությունը կարող է զբաղվել միայն լիցենզիայի (հատուկ թույլտվության) առկայության դեպքում՝ լիցենզիա ստանալու պահից կամ նրանում նշված ժամկետում: Եթե լիցենզիայի հատկացման պայմաններում նախատեսված է, որ Ընկերությունը բացի լիցենզավորվող գործունեությունից այլ գործունեությամբ զբաղվել չի կարող, կամ սահմանափակումներ են դրվում գործունեության առանձին տեսակներով զբաղվելու վրա, ապա Ընկերությունը լիցենզիայի գործողության ժամկետում իրավունք չունի զբաղվել այլ գործունեությամբ, բացառությամբ լիցենզիայով նախատեսվածների կամ այն գործունեություններով, որոնց մասին նշված է լիցենզիայի մեջ:

2.4. Ընկերության իրավունքները կարող են սահմանափակվել միայն օրենքով նախատեսված դեպքերում և օրենքով սահմանված կարգով:

3. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ, ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Ընկերությունը առևտրային կազմակերպություն հանդիսացող իրավաբանական անձ է:

Ընկերությունը, որպես սեփականություն, ունի առանձնացված գույք և իր պարտավորությունների համար պատասխանատու է այդ գույքով, կարող է իր անունից կնքել պայմանագրեր, ձեռք բերել ու իրականացնել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտականություններ, դատարանում հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող:

Ընկերությունն ունի ինքնուրույն հաշվեկշիռ, կարող է օրենքով սահմանված կարգով բացել բանկային հաշիվներ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության և օտարերկրյա պետությունների բանկերում, ինչպես Հայաստանի Հանրապետության, այնպես էլ արտարժույթով:

3.2. Ընկերությունը իրավունք ունի իր կողմից թողարկվող բաժնետոմսերը տեղաբաշխել ինչպես բաց, այնպես էլ փակ բաժանորդագրության միջոցով և իրականացնել դրանց ազատ վաճառքը Օրենքի և այլ իրավական ակտերի համապատասխան:

3.3. Ընկերությունը կարող է լինել այլ ընկերության (այդ թվում՝ դուստր ու կախյալ) հիմնադիր (մասնակից), բացառությամբ Օրենսգրքով, Օրենքով և այլ օրենքներով նախատեսված դեպքերի:

3.4. Ընկերությունն իրավունք ունի.

- Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված բոլոր ձևերով ձեռք բերել գույք, այդ թվում՝ արժեթղթեր, տիրապետել, օգտագործել ու տնօրինել դրանք և դրանցից ստացված եկամուտը կամ այլ օգտակար արդյունքը,
- օտարել, վարձակալության տալ, փոխանակել, օրենսդրությամբ չարգելված այլ ձևերով փոխանցել գույքային իրավունքներ, լինել գրավառու և գրավատու,
- ինքնուրույն կազմավորել իր ֆինանսական ռեսուրսները, այդ թվում՝ փոխառու միջոցների ներգրավմամբ, Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում և այլ պետություններում ստանալ բանկային և առևտրային վարկեր, այդ թվում՝ արտարժույթով,
- Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով իր անունից թողարկել և տարածել արժեթղթեր,
- Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կնքել պայմանագրեր և կրել պարտավորություններ,
- ինքնուրույն ընտրել իր արտաքին տնտեսական գործունեության վարման կարգը, այն իրականացնել անմիջականորեն, առանց միջնորդի կամ այլ կազմակերպության միջոցով՝ նրա հետ մտնելով պայմանագրային հարաբերությունների մեջ,
- ունենալ միջոցներ արտարժույթով: Օրենսդրությամբ չարգելված բոլոր միջոցներով ձեռք բերել (այդ թվում՝ ստանալ որպես արտաքին տնտեսական գործունեության արդյունք) արտարժույթով միջոցներ և ինքնուրույն տնօրինել, այդ թվում՝ վաճառել պետությանը, իրավաբանական անձանց և (կամ) քաղաքացիներին,
- օրենսդրությամբ սահմանված կարգով արտահանել և ներմուծել գույքի օբյեկտներ, արտադրված, գնված և այլ օրինական ձևով ստացված արտադրանք, ծառայություններ մատուցել և աշխատանքներ կատարել օտարերկրյա իրավաբանական անձանց և (կամ) քաղաքացիների համար, օգտվել նրանց կատարած աշխատանքներից և մատուցած ծառայություններից, այլ պետություններում նրանց օրենսդրությանը համապատասխան իրականացնել ներդրումներ, ստեղծել իրավաբանական անձինք և (կամ) անդամակցել իրավաբանական անձանց,
- ինքնուրույն պլանավորել իր գործունեությունը, որոշել թողարկվող արտադրանքի, կատարվող աշխատանքների և մատուցվող ծառայությունների ծավալը, գները, իրենց մատակարարներին և արտադրանքը սպառողներին,
- ձեռք բերել իր կողմից տեղաբաշխված բաժնետոմսերի մի մասը,
- օգտվել օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ սահմանված այլ իրավունքներից:

3.5. Ընկերությունը պարտավոր է.

- Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրությամբ և այլ իրավական ակտերով սահմանված կարգով վարել հաշվապահական հաշվառում և ներկայացնել ֆինանսական ու վիճակագրական հաշվետվություն,

- ամեն տարի, ի գիտություն բոլորի, հրապարակել իր տարեկան հաշվետվությունը, հաշվապահական հաշվեկշիռը, շահույթների և վնասների հաշիվը,
- աշխատանքային պայմանագրեր կնքել Ընկերության աշխատակիցների հետ,
- պատասխանատվություն կրել և փոխհատուցել իր կողմից հասցրած վնասը՝ կնքած պայմանագրերը չկատարելու կամ հարկ եղածին պես չկատարելու, այլ անձանց սեփականության իրավունքը խախտելու համար,
- օրենսդրությամբ սահմանված կարգով հայտարարել Ընկերության սնանկացման մասին այն դեպքում, երբ հնարավոր չէ բավարարել պարտատերերի օրինական գույքային պահանջները,
- ապահովել Ընկերության փաստաթղթերի (Ընկերության պետական գրանցման վկայականի, կանոնադրության, գույքի նկատմամբ գույքային իրավունքները հաստատող փաստաթղթերի, Ընկերության ներքին փաստաթղթերի, առանձնացված ստորաբաժանումների ու հիմնարկների կանոնադրությունների, տարեկան հաշվետվությունների, հաշվապահական հաշվառման փաստաթղթերի, կառավարման մարմինների նիստերի արձանագրությունների, Ընկերության փոխկապակցված անձանց, նշանակալից ու խոշոր բաժնետերերի ցուցակների, կնքած պայմանագրերի, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքներով և այլ իրավական ակտերով նախատեսված այլ փաստաթղթերի) պահպանումը իր գտնվելու վայրում,
- իր բաժնետերերին հնարավորություններ ստեղծել ծանոթանալու Ընկերության վերը թվարկված փաստաթղթերի հետ (բացառությամբ այն փաստաթղթերի, որոնք պարունակում են գաղտնի տեղեկություններ),
- պետական գրանցումն իրականացնող մարմիններին ծանուցել մասնաճյուղերի և ներկայացուցչությունների ստեղծման մասին,
- կրել օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ սահմանված այլ պարտավորություններ:

4. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐ, ՀԻՄՆԱՐԿՆԵՐ, ԴՈՒՍՏՐ ՈՒ ԿԱԽՅԱԼ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

4.1. Ընկերությունն իրավունք ունի սույն կանոնադրության դրույթների, Օրենսգրքի, Օրենքի և այլ իրավական ակտերի համաձայն ստեղծել առանձնացված ստորաբաժանումներ (մասնաճյուղեր և ներկայացուցչություններ), ինչպես Լեռնային Ղարաբաղի Հանրապետության, այնպես էլ այլ պետությունների տարածքում:

Կառավարչական, սոցիալ-մշակութային, կրթական կամ ոչ առևտրային բնույթի այլ գործունեություն իրականացնելու համար Ընկերությունը կարող է ստեղծել հիմնարկ:

Ընկերության առանձնացված ստորաբաժանումները և հիմնարկները իրավաբանական անձինք չեն և գործում են Ընկերության հաստատած կանոնադրությունների հիման վրա, իսկ նրանց ղեկավարները գործում են Ընկերության լիազորագրի հիման վրա:

Ընկերության մասնաճյուղ է համարվում նրա առանձնացված ստորաբաժանումը, որը տեղակայված է Ընկերության գտնվելու վայրից դուրս և իրավունք ունի իրականացնել Ընկերության բոլոր գործառնությունները կամ դրանց մի մասը, ներառյալ ներկայացուցչական գործառնությունները:

Ընկերության ներկայացուցչություն է համարվում նրա առանձնացված ստորաբաժանումը, որը տեղակայված է Ընկերության գտնվելու վայրից դուրս, ներկայացնում է Ընկերության շահերը և իրականացնում դրանց պաշտպանությունը:

4.2. Մեկ այլ ընկերություն համարվում է Ընկերության դուստր ընկերություն, եթե Ընկերությունը այդ ընկերության կանոնադրական կապիտալում իր գերակշռող մասնակցության ուժով կամ օրենքով չարգելված այլ ձևով (այդ թվում՝ հիմնական և դուստր ընկերությունների միջև կնքված պայմանագրին համապատասխան) հնարավորություն ունի կանխորոշելու ընկերության որոշումները:

Մեկ այլ ընկերություն համարվում է Ընկերության կախյալ ընկերություն, եթե Ընկերությունն ունի այդ ընկերության բաժնեմասերի (քվեարկող բաժնետոմսերի) ավելի քան քսան տոկոսը:

Օտարերկրյա պետություններում դուստր կամ կախյալ ընկերությունների հիմնադրումը կամ մասնակցությունը կատարվում է դրանց գտնվելու վայրի երկրի օրենքներին և այլ իրավական ակտերին համապատասխան, եթե Լեռնային Ղարաբաղի Հանրապետության միջազգային պայմանագրերով այլ բան նախատեսված չէ:

Դուստր ընկերությունը պարտավորություն չի կրում Ընկերության պարտավորությունների համար:

Ընկերությունը համապարտ պատասխանատվություն է կրում դուստր ընկերության այն գործարքների համար, որոնք կատարվում են ի իրականացումն Ընկերության կողմից տրված և դուստր ընկերության համար պարտադիր կատարման ենթակա ցուցումների:

Ընկերության մեղքով դուստր ընկերության անվճարունակության դեպքում Ընկերությունը լրացուցիչ պատասխանատվություն է կրում դուստր ընկերության պարտավորությունների համար:

Դուստր ընկերության բաժնետերերն իրավունք ունեն Ընկերությունից պահանջել նրա մեղքով դուստր ընկերությանը պատճառած վնասների հատուցում: Վնասները Ընկերության մեղքով պատճառված են համարվում, եթե դրանք վրա են հասել դուստր ընկերության կողմից Ընկերության պարտադիր ցուցումներ կատարելու հետևանքով:

Ընկերությունը պարտավոր է օրենքով սահմանված կարգով տեղեկություններ հրապարակել սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կանոնադրական կապիտալի կամ բաժնետիրական ընկերության քվեարկող բաժնետոմսերի ավելի քան քսան տոկոսը ձեռք բերելու մասին:

5. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼԸ

5.1. Կանոնադրական կապիտալը սահմանում է պարտատերերի շահերը երաշխավորող ընկերության գույքի նվազագույն չափը: Ընկերության կանոնադրական կապիտալը չի կարող պակաս լինել Օրենքով սահմանված չափից:

Ընկերության կանոնադրական կապիտալը կազմվում է բաժնետերերի ձեռք բերած բաժնետոմսերի անվանական արժեքից:

5.2. Ընկերության կանոնադրական կապիտալը կազմում է 5,100,000,000 (հինգ միլիարդ հարյուր միլիոն) դրամ, որը բաժանվում է 5,100,000 հատ հասարակ (սովորական) անվանական ոչ փաստաթղթային բաժնետոմս, մեկ բաժնետոմսի անվանական արժեքը կազմում է 1,000 դրամ:

Ընկերության կողմից թողարկված բոլոր 5,100,000 բաժնետոմսերը տեղաբաշխված են, սեփականության իրավունքով պատկանում են Լեռնային Ղարաբաղի Հանրապետությանը և լրիվ վճարված են նրա կողմից:

Ընկերության բոլոր բաժնետոմսերը հասարակ (սովորական) են:

Ընկերության հայտարարված բաժնետոմսերի թիվը կազմում է 10,000,000 հատ հասարակ (սովորական) անվանական բաժնետոմս՝ յուրաքանչյուրը 1,000 դրամ անվանական արժեքով:

Հայտարարված սովորական բաժնետոմսերի տեղաբաշխումն իրականացվում է Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի՝ դրանց տեղաբաշխման մասին որոշմամբ սահմանված կարգով և ժամկետում:

5.3. Ընկերությունը կարող է կանոնադրական կապիտալի չափը փոխել բաժնետերերի ընդհանուր ժողովի որոշմամբ, որն ուժի մեջ է մտնում սույն կանոնադրության մեջ համապատասխան փոփոխություններ կատարելուց և իրավաբանական անձանց պետական ռեգիստրում օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով գրանցելու պահից:

5.3.1. Կանոնադրական կապիտալի ավելացում:

Ընկերության կանոնադրական կապիտալի չափը կարող է ավելացվել Ընկերության բաժնետոմսերի անվանական արժեքի մեծացմամբ կամ լրացուցիչ բաժնետոմսերի տեղաբաշխմամբ, եթե նախկինում տեղաբաշխված բաժնետոմսերը լրիվ իրացված և վճարված են:

Բաժնետոմսեր ձեռք բերելու իրավունք սովորական ընկերության արժեթղթերի սեփականատերերը բաժնետերերից առաջ ունեն իրենց բաժնին համապատասխան նոր բաժնետոմսերի ձեռքբերման նախապատվության իրավունք: Ընկերության նոր բաժնետոմսերի ձեռքբերման նախապատվության իրավունքը չիրականացնելու դեպքում Ընկերության բաժնետերերն ունեն Ընկերության կանոնադրական կապիտալում իրենց բաժնին համապատասխան նոր բաժնետոմսերի ձեռքբերման նախապատվության իրավունք: Բաժնետոմսեր ձեռք բերելու իրավունք սովորական ընկերության արժեթղթերի սեփականատերերի նախապատվության իրավունքի (նոր բաժնետոմսերի ձեռքբերման) իրականացման ժամկետը սահմանվում է 15 օր: Ընկերության բաժնետերերի կողմից նոր բաժնետոմսերի ձեռքբերման նախապատվության իրավունքի իրականացման ժամկետը սահմանվում է 30 օր:

Ընկերությունը կարող է որոշում ընդունել լրացուցիչ բաժնետոմսերի տեղաբաշխման մասին միայն Ընկերության կանոնադրության մեջ հայտարարված բաժնետոմսերի քանակի սահմաններում և միայն նախկինում տեղաբաշխված բաժնետոմսերի լրիվ վճարված լինելու դեպքում:

Լրացուցիչ բաժնետոմսերի տեղաբաշխման մասին որոշմամբ պետք է սահմանվի՝

– լրացուցիչ տեղաբաշխվող հասարակ (սովորական) և յուրաքանչյուր տեսակի արտոնյալ բաժնետոմսերի քանակն այդ բաժնետոմսերի հայտարարված քանակի սահմաններում:

– լրացուցիչ բաժնետոմսերի տեղաբաշխման ժամկետները և պայմանները, այդ թվում՝ Ընկերության բաժնետոմսերի ձեռքբերման նախապատվություն ունեցող բաժնետերերի և այլ արժեթղթերի սեփականատերերի միջև տեղաբաշխվող բաժնետոմսերի արժեքը:

Եթե նախկինում տեղաբաշխված բաժնետոմսերի արժեքի գումարը լրիվ վճարված չէ, ապա Ընկերությունն իր կանոնադրական կապիտալը չի կարող մեծացնել ֆինանսական միջոցների ներգրավման հաշվին:

Ընկերությունն իր ամենամյա գործունեության ֆինանսական արդյունքներն ամփոփելուց հետո կարող է տեղաբաշխված բաժնետոմսերի անվանական արժեքի մեծացման միջոցով ավելացնել կանոնադրական կապիտալը՝

- շահույթի մի մասը փոխանցելով կանոնադրական կապիտալ,
- կանոնադրական կապիտալի, պահուստային կապիտալի և արտոնյալ բաժնետոմսերի լուծարային և անվանական արժեքների տարբերության ընդհանուր գումարը գերազանցող գույքը (գուտ ակտիվները) կամ դրա մասը փոխանցելով կանոնադրական կապիտալ:

5.3.2. Կանոնադրական կապիտալի նվազեցումը:

Ընկերության կանոնադրական կապիտալի չափի նվազեցումը կարող է կատարվել բաժնետոմսերի անվանական արժեքի փոքրացմամբ և բաժնետոմսերի ընդհանուր քանակի կրճատմամբ, այդ թվում՝ Օրենքով նախատեսված դեպքերում դրանց մի մասի ձեռքբերմամբ և մարմամբ:

Ընկերությունն իրավունք չունի նվազեցնել կանոնադրական կապիտալը, եթե դրա հետևանքով նրա չափը կդառնա ավելի փոքր Օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված Ընկերության նվազագույն չափից: Ընկերության կողմից կանոնադրական կապիտալը Օրենքով սահմանված նվազագույն չափից նվազեցնելը հիմք է Ընկերության լուծարման:

Ընկերության կանոնադրական կապիտալը թույլատրվում է նվազեցնել Օրենքով սահմանված կարգով՝ նրա բոլոր պարտատերերին տեղեկացնելուց հետո: Այդ դեպքում Ընկերության պարտատերերն իրավունք ունեն Ընկերությունից պահանջել պարտավորությունների կատարման լրացուցիչ երաշխիքներ, պարտավորությունների դադարեցում կամ վաղաժամկետ կատարում, ինչպես նաև վնասների հատուցում:

Ընկերության կանոնադրական կապիտալի նվազեցման և Ընկերության կանոնադրության մեջ համապատասխան փոփոխություններ կատարելու մասին որոշումն ընդունվում է Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի կողմից՝ դրան մասնակցող բաժնետերերի ձայների 3/4-ով, սակայն ոչ պակաս քվեարկող բաժնետոմսերի սեփականատերերի ձայների 2/3-ից:

Ընկերության կանոնադրական կապիտալի նվազեցման կապակցությամբ բաժնետերերին վճարումները կատարվում են Ընկերության կանոնադրության փոփոխության պետական գրանցումից հետո:

6. ԲԱԺՆԵՏՈՄՍԵՐ ԵՎ ԱՅԼ ԱՐԺԵԹՂԹԵՐ

6.1. Ընկերությունը կարող է տեղաբաշխել բաժնետոմսեր, պարտատոմսեր, Օրենքով, «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված այլ արժեթղթեր:

6.2. Ընկերությունն իրավունք ունի տեղաբաշխել հասարակ (սովորական), ինչպես նաև մեկ կամ մի քանի տեսակի արտոնյալ բաժնետոմսեր: Ընկերության կողմից տեղաբաշխված արտոնյալ բաժնետոմսերի անվանական արժեքը չպետք է գերազանցի Ընկերության կանոնադրական կապիտալի ընդհանուր ծավալի 25 տոկոսը:

Ընկերության կողմից թողարկված հասարակ (սովորական) բաժնետոմսերի անվանական արժեքը պետք է լինի միևնույնը:

Ընկերության որոշակի տեսակի (միանման տարբերակիչ բնորոշ առանձնահատկություններ՝ անվանական արժեք, հավաստող իրավունքներ, արտոնություններ և սահմանափակումներ ունեցող) ամեն մի արտոնյալ բաժնետոմս ունի միևնույն անվանական արժեքը:

Ընկերությունը ընդհանուր ժողովի կողմից սահմանված կարգով և ժամկետներում թողարկում է հաստատագրված և (կամ) փոփոխական շահութաբաժնով (անկախ Ընկերության տնտեսական գործունեության արդյունքից), ինչպես նաև աշխատակցի արտոնյալ բաժնետոմսեր:

Արտոնյալ բաժնետոմսերի սեփականատերերը չունեն ձայնի իրավունք Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովում (բացի Ընկերության լուծարման կամ վերականգնակերպման հարցերի մասին քվեարկությունից):

Արտոնյալ բաժնետոմսերը կարող են փոխարինվել հասարակ (սովորական) բաժնետոմսերի: Ընդ որում փոխարինելու ժամանակ Ընկերությունը պետք է մարի արտոնյալ բաժնետոմսերի սեփականատերերի նկատմամբ բոլոր պարտքերը:

Ընկերության բոլոր բաժնետոմսերն անվանական են:

6.3. Ընկերության ընդհանուր ժողովի որոշմամբ Ընկերությունը կարող է թողարկել և տեղաբաշխել ոչ փաստաթղթային ձևի անվանական բաժնետոմսեր, ինչպես նաև փաստաթղթային (տպագրական եղանակով պատրաստված) կամ ոչ փաստաթղթային ձևի պարտատոմսեր:

6.4. Բաժնետիրոջ կողմից բաժնետոմսերի արժեքը վճարելուց հետո ընկերությունը պետք է ապահովի բաժնետերերի բաժնետոմսերի գրանցումը իր բաժնետերերի ռեեստրի (գրանցամատյանի) բաժնետերերի անձնական հաշիվներում՝ բաժնետերերի ռեեստրի վարման Օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կանոններին համապատասխան:

6.5. Բաժնետոմսն անբաժանելի է: Եթե երկու կամ ավելի անձինք սեփականատեր են մեկ բաժնետոմսի, ապա նրանք համարվում են մեկ բաժնետեր:

6.6. Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի կողմից որոշված կարգով կարող է աշխատակիցներին տրամադրվել ինչպես հասարակ (սովորական), այնպես էլ արտոնյալ (դրանց առկայության դեպքում) բաժնետոմսեր:

Աշխատակցի բաժնետոմսի սեփականատերերը, օգտվում են նույն իրավունքներից, ինչպիսիք սահմանված են Օրենքով և Ընկերության կանոնադրությամբ՝ դրանց համապատասխանող հասարակ (սովորական) կամ տարբեր ձևերի արտոնյալ բաժնետոմսերի սեփականատերերի համար:

Աշխատակցի բաժնետոմսերի անվանական արժեքը չպետք է տարբերվի Ընկերության հասարակ (սովորական) և համապատասխան ձևի արտոնյալ բաժնետոմսերի անվանական արժեքից:

6.7. Ընկերության լրացուցիչ տեղաբաշխված բաժնետոմսերը պետք է վճարվեն դրանց տեղաբաշխման մասին որոշմամբ սահմանված ժամկետում, բայց ոչ ուշ, քան դրանց տեղաբաշխման պահից մեկ տարվա ընթացքում:

Ընկերության բաժնետոմսերի և այլ արժեթղթերի դիմաց վճարումը կարող է իրականացվել դրամով, արժեթղթերով, այլ գույքով կամ գույքային իրավունքներով, ինչպես նաև դրամական գնահատում ունեցող այլ իրավունքներով:

Ընկերության բաժնետոմսերը և այլ արժեթղթերը, որոնց դիմաց վճարումը նախատեսված է ոչ դրամական միջոցներով, դրանց ձեռքբերման ժամանակ վճարում են լրիվ արժեքով:

Ընկերության հիմնադրման ժամանակ բաժնետոմսերի դիմաց հիմնադիրների կողմից վճարվող գույքի դրամական գնահատականը սահմանվում է հիմնադիրների միջև համաձայնեցմամբ, իսկ բաժնետոմսերի և այլ արժեթղթերի լրացուցիչ տեղաբաշխման դեպքում՝ Ընկերության տնօրենների խորհրդի որոշմամբ՝ Օրենքով սահմանված կարգով և ենթակա է գնահատման անկախ գնահատողի կողմից:

Մինչև բաժնետոմսի արժեքի լրիվ վճարումը, բաժնետոմսի սեփականացատերը, բացառությամբ Ընկերության հիմնադիր հանդիսացողից, զրկվում է ձայնի իրավունքից:

Ընկերության տրամադրության տակ փոխանցված բաժնետոմսերը (չվճարված կամ հետ վերադարձված) չեն տալիս ձայնի իրավունք, հաշվի չեն առնվում ձայների հաշվարկման ժամանակ, այդ բաժնետոմսերով շահութաբաժիններ չեն հաշվարկվում: Այդ բաժնետոմսերը պետք է իրացվեն Ընկերության կողմից՝ դրանք Ընկերությանը փոխանցելու պահից մեկ տարվա ժամկետում: Հակառակ դեպքում՝ Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժառովը պետք է որոշում ընդունի նշված բաժնետոմսերի մարման ճանապարհով Ընկերության կանոնադրական կապիտալի փոփոխման մասին:

6.8. Ընկերությունն ունի պահուստային հիմնադրամ՝ կանոնադրական կապիտալի 15 տոկոսի չափով:

Եթե պահուստային հիմնադրամը կազմում է Ընկերության կանոնադրությամբ սահմանվածից ավելի փոքր մեծություն, հատկացումներն այդ հիմնադրամին կատարվում են շահույթի 5 տոկոսից ոչ պակաս չափով, ինչպես նաև Ընկերության նոր արժեթղթերի թողարկման արժեքի և դրանց անվանական արժեքի միջև եղած տարբերությունից ստացվող միջոցներից:

Պահուստային հիմնադրամն օգտագործվում է Ընկերության կորուստները ծածկելու, ինչպես նաև Ընկերության պարտատոմսերը մարելու և Ընկերության բաժնետոմսերը հետ գնելու համար, եթե Ընկերության շահույթը և այլ միջոցները դրա համար չեն բավարարում:

Պահուստային հիմնադրամը չի կարող օգտագործվել այլ նպատակների համար:

6.9. Բաժնետերերի ընդհանուր ժողովի որոշմամբ Ընկերությունը կարող է ստեղծել նաև շահութաբաժինների վճարման, աշխատակիցների բաժնետիրացման, սպառման, կուտակման, սոցիալական զարգացման և այլ հիմնադրամներ:

6.10. Ընկերության գուտ ակտիվների արժեքը գնահատվում է հաշվապահական հաշվետվության տվյալներով՝ օրենքով և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության այլ իրավական ակտերով սահմանված կարգով:

Եթե Ընկերության գույքային երկրորդ և յուրաքանչյուր հաջորդ ֆինանսական տարվա ավարտից հետո պարզվի, որ Ընկերության գուտ ակտիվների արժեքը Ընկերության կանոնադրական կապիտալից պակաս է, ապա Ընկերությունը պարտավոր է հայտարարել և սահմանված կարգով գրանցել իր կանոնադրական կապիտալի չափի նվազեցումը:

Ընկերության կողմից կանոնադրական կապիտալն օրենքով սահմանված նվազագույն չափից նվազեցնելը հանգեցնում է ընկերության լուծարման:

Եթե սույն կանոնադրությամբ նախատեսված դեպքերում Ընկերության կանոնադրական կապիտալի չափի նվազեցման կամ Ընկերության լուծարման մասին որոշում չի ընդունվել, ապա Ընկերության բաժնետերերը, պարտատերերը, ինչպես նաև պետության կողմից

լիազորագրված մարմիններն իրավունք ունեն պահանջել Ընկերության լուծարում՝ դատական կարգով:

7. ԲԱԺՆԵՏԵՐԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

7.1. Ընկերության յուրաքանչյուր հասարակ (սովորական) բաժնետոմս տալիս է իր սեփականատեր հանդիսացող բաժնետիրոջը միևնույն իրավունքները:

Հասարակ (սովորական) բաժնետոմսի սեփականատեր հանդիսացող բաժնետերը Օրենքի և Ընկերության կանոնադրության համաձայն իրավունք ունի.

- մասնակցել Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովին՝ վերջինիս իրավասությանը պատկանող բոլոր հարցերի նկատմամբ ձայնի իրավունքով,
- ֆինանսական տարվա ավարտից հետո 60 օրվա ընթացքում ներկայացնել երկուսից ոչ ավելի առաջարկություններ բաժնետերերի ընդհանուր ժողովի օրակարգի վերաբերյալ, ինչպես նաև առաջարկել Ընկերության տնօրենների խորհրդի և վերստուգողի անդամության թեկնածուներ, եթե նա հանդիսանում է ձայնի իրավունք ունեցող բաժնետոմսերի առնվազն 2 տոկոսի սեփականատեր,
- մասնակցել Ընկերության կառավարմանը,
- ստանալ շահութաբաժիններ Ընկերության գործունեությունից առաջացած շահույթից,
- առաջնահերթ կարգով ձեռք բերել Ընկերության կողմից տեղաբաշխվող բաժնետոմսերը, եթե Օրենքով և Ընկերության կանոնադրությամբ այլ բան չի նախատեսված,
- ստանալ Ընկերության գործունեության վերաբերյալ ցանկացած տեղեկատվություն՝ գաղտնի փաստաթղթերից բացի, այդ թվում՝ կանոնադրությամբ սահմանված կարգով ծանոթանալ հաշվապահական հաշվեկշռին, հաշվետվություններին, հաշվապահական գրքերին, Ընկերության արտադրատնտեսական գործունեությանը:
- Ընկերության կանոնադրական կապիտալի առնվազն 5 % կազմող ձայնի իրավունք տվող բաժնետոմսերին տիրող բաժնետերերը կարող են պահանջել փորձագետ կամ փորձագետների խումբ՝ Ընկերության գործունեությանը վերաբերող հաշվետվությունները ստուգելու նպատակով: Ստուգման հետ կապված ծախսերը փոխհատուցում են ստուգումը պահանջող բաժնետերերը,
- Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովում իր իրավունքները ներկայացնելու համար լիազորել երրորդ անձի,
- հանդես գալ առաջարկություններով Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովում,
- Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովում քվեարկել իրեն պատկանող բաժնետոմսերի ձայների չափով,
- հայցով դիմել դատարան՝ Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի կողմից ընդունված և գործող օրենքներին և այլ իրավական ակտերին հակասող որոշումների բողոքարկման նպատակով,
- Ընկերության լուծարման դեպքում ստանալ պարտատերերի հետ կատարված հաշվարկներից հետո մնացած Ընկերության գույքի իր հասանելիք մասը կամ դրա արժեքը,

– օտարել կամ այլ ձևով այլ անձանց փոխանցել իր սեփականությունը հանդիսացող բաժնետոմսը,

– օգտվել Ընկերության կանոնադրությամբ նախատեսված այլ իրավունքներից:

Հասարակ (սովորական) բաժնետոմսերի սեփականատերերին չի կարող տրամադրվել նրանց պատկանող հասարակ (սովորական) բաժնետոմսերի անվանական արժեքից և քանակից չբխող լրացուցիչ ձայնի իրավունք:

Հասարակ (սովորական) բաժնետոմսերի դիմաց շահութաբաժինների վճարումները Ընկերության կողմից չեն երաշխավորվում:

Հասարակ (սովորական) բաժնետոմսերի տեսակարար կշիռը Ընկերության կանոնադրական կապիտալում չպետք է պակաս լինի 75 տոկոսից:

7.2. Արտոնյալ բաժնետոմսերի սեփականատերերը իրավունք ունեն.

– մասնակցել ընկերության կառավարմանը,

– Ընկերության ընդհանուր ժողովում իր իրավունքները ներկայացնելու համար լիազորել երրորդ անձի,

– Ընկերության լուծարման դեպքում ստանալ Ընկերության գույքի իրենց հասանելիք մասը,

– հանդես գալ առաջարկություններով Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովում,

– ձայնի իրավունքնով մասնակցել ընդհանուր ժողովի աշխատանքներին,

– ստանալ շահութաբաժիններ Ընկերության գործունեությունից առաջացած շահույթից,

– առաջնահերթ կարգով ձեռք բերել Ընկերության կողմից տեղաբաշխվող բաժնետոմսերը:

Վերջին 3 ենթակետերով սահմանված իրենց իրավունքներից արտոնյալ բաժնետոմսերի սեփականատերերը օգտվում են 6.2. և 8.2. կետերում սահմանված վերապահումներով:

7.3. Բաժնետերերը պարտավոր են չհրապարակել Ընկերության գործունեության վերաբերյալ գաղտնի տեղեկություններ:

8. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՇԱՀՈՒՔԱԲԱԺԻՆՆԵՐԻ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

8.1. Ընկերությունն իրավունք ունի որոշում ընդունել (հայտարարել) տեղաբաշխված բաժնետոմսերի դիմաց եռամսյակային, կիսամյակային կամ տարեկան շահութաբաժինների վճարման մասին: Հայտարարված շահութաբաժինները վճարվում են ինչպես դրամով, այնպես էլ այլ գույքով:

Շահութաբաժինները վճարվում են Ընկերության կուտակված շահույթից: Որոշակի դասի արտոնյալ բաժնետոմսերի դիմաց շահութաբաժինները կարող են վճարվել այդ նպատակի համար հատուկ ստեղծված Ընկերության հիմնադրամների հաշվից:

Ընկերության տվյալ տարվա գործունեության արդյունքների հիման վրա հասարակ (սովորական) բաժնետոմսերի տարեկան շահութաբաժինն արտոնյալ բաժնետոմսերի համար սահմանված շահութաբաժինը գերազանցելու դեպքում, արտոնյալ բաժնետոմսերի սեփականատերերը Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի որոշմամբ կարող են ստանալ հասարակ (սովորական) բաժնետոմսերին հասանելիք փաստացի շահութաբաժինը:

Ըստ բաժնետոմսերի տեսակների և դասերի միջանկյալ (եռամսյակային և կիսամյակային) շահութաբաժինների վճարման, շահութաբաժնի չափի և դրա վճարման ձևի մասին որոշումն ընդունում է Ընկերության տնօրենների խորհուրդը: Ըստ բաժնետոմսերի տեսակների և դասերի տարեկան շահութաբաժինների վճարման, շահութաբաժնի չափի և դրա վճարման ձևի մասին որոշումն ընդունում է Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովը՝ տնօրենների խորհրդի առաջարկությամբ: Տարեկան շահութաբաժինների չափը չի կարող ավելի լինել տնօրենների խորհրդի առաջարկածից և պակաս լինել արդեն վճարված միջանկյալ շահութաբաժինների չափից: Միջանկյալ շահութաբաժինների չափը չի կարող գերազանցել նախորդ ֆինանսական տարվա արդյունքներով բաշխված շահութաբաժնի 50 տոկոսը:

Եթե Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի որոշմամբ տարեկան շահութաբաժինների չափն ըստ բաժնետոմսերի առանձին տեսակների և ձևերի սահմանվում է արդեն վճարված միջանկյալ շահութաբաժինների չափին հավասար, այդ տեսակների և ձևերի բաժնետոմսերի դիմաց տարեկան շահութաբաժիններ չեն վճարվում:

Եթե Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի որոշմամբ տարեկան շահութաբաժինների չափը ըստ բաժնետոմսերի առանձին տեսակների և դասերի սահմանվում է արդեն վճարված միջանկյալ շահութաբաժինների չափից ավելի, ապա այդ տեսակների և ձևերի բաժնետոմսերի դիմաց տարեկան շահութաբաժինները վճարվում են սահմանված տարեկան շահութաբաժնի և տվյալ տարում արդեն վճարված միջանկյալ շահութաբաժինների գումարի տարբերությամբ:

Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովն իրավունք ունի որոշում ընդունել առանձին տեսակների և դասերի բաժնետոմսերի դիմաց շահութաբաժիններ չվճարելու կամ ոչ լրիվ չափով վճարելու մասին: Այդ որոշումների գործունեության ժամկետը սահմանվում է Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի կողմից, բայց չի կարող մեկ տարուց ավել լինել:

Տարեկան շահութաբաժինների վճարման ժամկետը սահմանվում է Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի տարեկան շահութաբաժիններ վճարելու մասին որոշմամբ: Միջանկյալ շահութաբաժինների վճարման ժամկետը սահմանվում է Ընկերության տնօրենների խորհրդի միջանկյալ շահութաբաժիններ վճարելու մասին որոշմամբ, բայց ոչ շուտ, քան տվյալ որոշման ընդունման պահից 30 օր անց:

Շահութաբաժինների յուրաքանչյուր վճարման համար Ընկերության տնօրենների խորհուրդը կազմում է շահութաբաժիններ ստանալու իրավունք ունեցող բաժնետերերի ցանկ, որում պետք է ընդգրկվեն՝

– միջանկյալ շահութաբաժիններ վճարելու դեպքում՝ Ընկերության բաժնետերերը, որոնք ընդգրկվել են Ընկերության բաժնետերերի ռեեստրում Ընկերության տնօրենների խորհրդի միջանկյալ շահութաբաժիններ վճարելու մասին որոշման կայացման օրվանից առնվազն 10 օր առաջ,

– տարեկան շահութաբաժիններ վճարելու դեպքում՝ Ընկերության բաժնետերերը, որոնք ընդգրկվել են Ընկերության բաժնետերերի ռեեստրում Ընկերության բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմելու օրվա դրությամբ:

8.2. Արտոնյալ բաժնետոմսերի սեփականատեր բաժնետերերին շահութաբաժինների վճարման առանձնահատկությունները.

8.2.1. Յուրաքանչյուր դասի արտոնյալ բաժնետոմսի դիմաց վճարվող շահութաբաժինը և լուծարային արժեքը (որը վճարվում է Ընկերության լուծարման ժամանակ) սահմանվում են ընդհանուր ժողովի կողմից դրամական գումարի տեսքով կամ որպես տոկոսադրույք արտոնյալ բաժնետոմսի անվանական արժեքի նկատմամբ:

8.2.2. Ընկերության տվյալ տարվա գործունեության արդյունքների հիման վրա հասարակ (սովորական) բաժնետոմսերի տարեկան շահութաբաժինն արտոնյալ բաժնետոմսերի համար շահութաբաժինը գերազանցելու դեպքում արտոնյալ բաժնետոմսերի սեփականատերերը, Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի որոշմամբ, կարող են ստանալ հասարակ (սովորական) բաժնետոմսերին հասանելիք փաստացի շահութաբաժինը:

8.2.3. Եթե բաժնետերերի ընդհանուր ժողովի որոշմամբ թողարկվում և տեղաբաշխվում են 2 կամ ավելի ձևի արտոնյալ բաժնետոմսեր, ապա պետք է սահմանվի նաև շահութաբաժինների և լուծարային արժեքի վճարման հերթականությունը:

8.2.4. Երեք հաջորդական տարիների ընթացքում արտոնյալ բաժնետոմսերին հասանելիք շահութաբաժնի չվճարելը կարող է հիմք հանդիսանալ Ընկերության դատական կարգով լուծարման համար:

8.3. Ընկերությունն իրավունք չունի հայտարարել (որոշում ընդունել) տեղաբաշխված բաժնետոմսերի շահութաբաժինների վճարման մասին, եթե՝

- լրիվ չի վճարվել Ընկերության կանոնադրական կապիտալը,
- Ընկերությունը հետ չի գնել բոլոր բաժնետոմսերը՝ Օրենքի 58-րդ հոդվածի դրույթներին համապատասխան,
- շահութաբաժիններ վճարելու որոշումն ընդունելու պահի դրությամբ Ընկերության տնտեսական վիճակը համապատասխանում է օրենքով սահմանված անվճարունակության (սննկացման) հայտանիշներին, կամ նշված հայտանիշները ի հայտ կգան շահութաբաժինների վճարման հետևանքով,
- Ընկերության գուտ ակտիվների արժեքը պակաս է Ընկերության կանոնադրական կապիտալից, կամ կպակասի շահութաբաժինների վճարման հետևանքով:

Ընկերությունն իրավունք չունի որոշում ընդունել շահութաբաժինների վճարման մասին տեղաբաշխված սովորական բաժնետոմսերի և այն արտոնյալ բաժնետոմսերի դիմաց, որոնց համար սահմանված չի շահութաբաժնի չափը, եթե որոշում չի ընդունված շահութաբաժիններ վճարել արտոնյալ բաժնետոմսերի բոլոր այն ձևերի դիմաց, որոնց համար վճարվող շահութաբաժնի չափը սահմանված է սույն կանոնադրությամբ:

Ընկերությունն իրավունք չունի որոշում ընդունել շահութաբաժինների վճարման մասին տեղաբաշխված այն արտոնյալ բաժնետոմսերի դիմաց, որոնց համար շահութաբաժնի չափը սահմանված է սույն կանոնադրությամբ, եթե շահութաբաժիններն ամբողջությամբ վճարելու որոշում չի ընդունված արտոնյալ բաժնետոմսերի բոլոր այն դասերի դիմաց, որոնք վերոհիշյալ արտոնյալ բաժնետոմսերի նկատմամբ շահութաբաժիններ ստանալու առաջնահերթության իրավունք են տալիս:

9. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

9.1. Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովն Ընկերության կառավարման բարձրագույն մարմինն է:

Ընկերությունը պարտավոր է ամեն տարի գումարել բաժնետերերի ընդհանուր ժողով՝ բաժնետերերի ընդհանուր տարեկան ժողով:

Ընկերության բաժնետերերի ընդհանուր տարեկան ժողովը գումարվում է հերթական ֆինանսական տարվա ավարտից 2 ամիս հետո 4 ամսվա ընթացքում:

Բաժնետերերի տարեկան ժողովից բացի գումարվող Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովները համարվում են արտահերթ: Ընկերության արտահերթ ժողովներ գումարվում են անհետաձգելի հարցերի քննարկման համար:

Ընկերության բաժնետերերի ինչպես տարեկան, այնպես էլ արտահերթ ընդհանուր ժողովները գումարվում են տնօրենների խորհրդի կողմից սեփական նախաձեռնությամբ զրավոր որոշմամբ: Արտահերթ ընդհանուր ժողովը կարող է գումարվել նաև գլխավոր տնօրենի, վերստուգող հանձնաժողովի (վերստուգողի), Ընկերության աուդիտն իրականացնող անձի կամ պահանջը ներկայացնելու դրությամբ Ընկերության՝ առնվազն 10 տոկոս քվեարկող բաժնետոմսերի սեփականատեր բաժնետիրոջ (բաժնետերերի) պահանջով: Եթե Օրենքով սահմանված ժամկետում տնօրենների խորհուրդը արտահերթ ժողովի գումարման մասին որոշում չի ընդունում կամ որոշում է ընդունում դրա գումարումը մերժելու մասին, ապա արտահերթ ժողովը կարող են գումարել ժողովի գումարման մասին պահանջը ներկայացրած անձինք:

Ժողովի գումարման մասին որոշմամբ պետք է սահմանվի.

- ա) Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի գումարման ամսաթիվը, տեղը և ժամանակը,
- բ) Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի օրակարգը,
- գ) Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմելու ամսաթիվը,
- դ) Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի գումարման մասին բաժնետերերին ծանուցելու կարգը,
- ե) Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի նախապատրաստման ընթացքում տրամադրվող տեղեկությունների և նյութերի ցուցակը,
- զ) Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի քարտուղարի անունը, ազգանունը,
- է) քվեաթերթիկների ձևը և բովանդակությունը, եթե քվեարկությունները կատարվելու են քվեաթերթիկներով:

Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի ծանուցման ձև է սահմանվում ծանուցումը բաժնետերերին, վերստուգող հանձնաժողովի անդամներին (վերստուգողին) և Ընկերության աուդիտն իրականացնող անձին (եթե նրա եզրակացությունն առկա է գումարվող ժողովի նյութերում) պատվիրված նամակներ ուղարկելու կամ անձամբ հանձնելու կամ էլեկտրոնային փոստով առաքելու ձևը:

Ընկերությունը պարտավոր է ժողովի գումարման մասին իր բաժնետերերին սույն կետով սահմանված կարգով ծանուցել ժողովի գումարման օրվանից առնվազն 3 օր առաջ:

Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովներում նախագահում է տնօրենների խորհրդի նախագահը, իսկ նրա բացակայության դեպքում՝ ժողովը նախագահում է ժողովին ներկա բաժնետերերից ամենատարեցը, եթե ժողովի գումարման մասին որոշմամբ այլ անձ նշանակված չէ:

9.2. Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի իրավասությանն են պատկանում՝

1. Ընկերության կանոնադրության մեջ փոփոխությունների և լրացումների կատարումը, Ընկերության նոր խմբագրությամբ կանոնադրության հաստատումը,
2. Ընկերության վերակազմակերպումը,
3. Ընկերության լուծարումը,
4. Ընկերության լուծարման հանձնաժողովի նշանակումը, ամփոփ, միջանկյալ և լուծարման հաշվեկշիռների հաստատումը,
5. Ընկերության տնօրենների խորհրդի քանակական կազմի հաստատումը, դրա անդամների ընտրությունը և նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը,
6. հայտարարված բաժնետոմսերի ծավալի առավելագույն չափի սահմանումը,
7. բաժնետոմսերի անվանական արժեքի մեծացման կամ լրացուցիչ բաժնետոմսերի տեղաբաշխման ճանապարհով Ընկերության կանոնադրական կապիտալի չափի ավելացումը,
8. տեղաբաշխված բաժնետոմսերի անվանական արժեքի փոքրացման, բաժնետոմսերի ընդհանուր քանակի կրճատման նպատակով տեղաբաշխված բաժնետոմսերի ձեռքբերման, ինչպես նաև Ընկերության կողմից ձեռք բերված կամ հետ գնված բաժնետոմսերի մարման ճանապարհով Ընկերության կանոնադրական կապիտալի չափի նվազեցումը,
9. Ընկերության կողմից տեղաբաշխված բաժնետոմսերի ձեռքբերումը և հետգնումը,
10. Ընկերության վերստուգող հանձնաժողովի (վերստուգողի) ընտրությունը և նրա լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը,
11. Ընկերության աուդիտն իրականացնող անձի հաստատումը,
12. Ընկերության տարեկան հաշվետվությունների, հաշվապահական հաշվեկշիռների, շահույթների և վնասների հաշվի, շահույթների և վնասների բաշխման հաստատումը, տարեկան շահութաբաժինների վճարման մասին որոշման ընդունումը և տարեկան շահութաբաժինների չափի հաստատումը,
13. բաժնետոմսերի անվանական արժեքի փոքրացումը (տարանջատումը) և մեծացումը (համախմբումը),
14. Ընկերության գույքի օտարման և ձեռքբերման հետ կապված խոշոր գործարքների կնքումը,
15. Ընկերության կողմից դուստր կամ կախյալ ընկերությունների ստեղծումը,
16. դուստր և կախյալ ընկերություններում մասնակցությունը,
17. հոլդինգային ընկերությունների, առևտրային կազմակերպությունների այլ միությունների հիմնադրումը,
18. հոլդինգային ընկերություններում, առևտրային կազմակերպությունների այլ միություններում մասնակցությունը:

Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովը իրավունք ունի քննարկել և որոշումներ ընդունել նաև Օրենքով ու սույն կանոնադրությամբ բաժնետերերի ընդհանուր ժողովի իրավասությանը պատկանող ցանկացած հարցի շուրջ:

9.3. Սույն կանոնադրությամբ Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի իրավասությանը վերապահված հարցերի լուծումը չի կարող փոխանցվել Ընկերության գլխավոր տնօրենին, բացառությամբ 9.2. կետի 16 և 18 ենթակետերով նախատեսված դեպքերի:

Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի իրավասություն հանդիսացող հարցերը չեն կարող փոխանցվել որոշում ընդունելու համար Ընկերության տնօրենների խորհրդին, բացառությամբ 9.2. կետի 9, 15, 16, 17 և 18 ենթակետերով նախատեսված դեպքերի:

9.4. Բաժնետերերի ընդհանուր ժողովում ձայնի իրավունքից օգտվում են հասարակ (սովորական) բաժնետոմսեր ունեցող բաժնետերերը:

9.5. Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի որոշումներն ընդունվում են ժողովին մասնակցող՝ քվեարկող բաժնետոմսերի սեփականատերերի ձայների պարզ մեծամասնությամբ, բացի 9.7. կետում սահմանված դեպքերից:

9.6. Սույն կանոնադրության 9.2. կետի 2, 9, 12 - 15 ենթակետերով նախատեսված դեպքերում որոշումներն ընդունվում են բաժնետերերի ընդհանուր ժողովի կողմից տնօրենների խորհրդի ներկայացմամբ:

9.7. Սույն կանոնադրության 9.2. կետի 1, 2, 3, 4, 6, 8, 14 ենթակետերով սահմանված հարցերի մասին որոշումներն ընդունվում են Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի կողմից ժողովին մասնակցող քվեարկող բաժնետոմսերի սեփականատերերի ձայների երեք քառորդով, ընդ որում 3 և 8 ենթակետերով սահմանված դեպքերում կողմ ձայների քանակը չպետք է պակաս լինի երկու երրորդից:

9.8. Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի կողմից ընդունված որոշումների մասին տեղեկությունները, ինչպես նաև քվեարկության արդյունքները պետք է հաղորդվեն ընկերության բաժնետերերին (ըստ պահանջի) 45 օրվա ընթացքում:

9.9. Բաժնետերն իրավունք ունի դատական կարգով գանգատարկել Օրենքի, այլ իրավական ակտերի և Ընկերության կանոնադրության պահանջների խախտմամբ Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի կողմից ընդունված որոշումը, եթե նա չի մասնակցել ժողովին կամ այդ որոշմանը դեմ է քվեարկել և որոշմամբ խախտվել են նրա օրինական շահերը և իրավունքները: Դատարանն իրավունք ունի ուժի մեջ թողնել Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի որոշումը, եթե որոշումը բողոքարկող բաժնետիրոջ (բաժնետերերի) քվեարկության մասնակցելը չէր կարող ազդել քվեարկության արդյունքների վրա, թույլ տված խախտումները էական չեն և որոշումը վնաս չի պատճառել որոշումը բողոքարկող բաժնետիրոջը (բաժնետերերին):

9.10. Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի որոշումները (բացի 9.2. կետի 12-րդ ենթակետով սահմանված հարցերի վերաբերյալ որոշումներից) կարող են ընդունվել առանց ժողովի գումարման՝ հեռակա կարգով քվեարկությամբ (հարցման միջոցով): 9.2. կետի 12-րդ ենթակետով սահմանված հարցերի քննարկումը և համապատասխան որոշումների ընդունումը տեղի է ունենում բացառապես տարեկան ժողովներում: Եթե տարեկան ժողով տեղի չի ունեցել կամ համապատասխան որոշումներ չեն ընդունվել, ապա իրավիքված արտահերթ ժողովում այլ հարցեր չեն կարող քննարկվել, բացի կայացված որոշումներով պայմանավորված կանոնադրական կապիտալի նվազեցման դեպքերի:

Հեռակա կարգով քվեարկությամբ ընդունված Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի որոշումը օրինական ուժ ունի, եթե քվեարկությանը մասնակցել են Ընկերության քվեարկող բաժնետոմսերի սեփականատերերի կեսից ավելին:

Հեռակա կարգով քվեարկությունը կատարվում է քվեաթերթիկների օգտագործմամբ, որոնք պետք է տրամադրվեն բաժնետերերին քվեաթերթիկները ընդունելու պահից առնվազն 30 օր շուտ:

9.11. Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեն Ընկերության տեղաբաշխված ինչպես հասարակ (սովորական), այնպես էլ արտոնյալ բաժնետոմսերի սեփականատեր հանդիսացող բաժնետերերը իրենց պատկանող լրիվ վճարված սովորական (արտոնյալ) բաժնետոմսերի քանակին և անվանական արժեքին համապատասխան ձայների քանակով, բացառությամբ Ընկերության հիմնադիրների, որոնք Ընկերության կանոնադրությամբ սահմանված ժամկետում, բայց ոչ ավելի, քան Ընկերության պետական գրանցման պահից 1 տարվա ընթացքում, կարող են ձայնի իրավունք ունենալ իրենց անունով տեղաբաշխված բոլոր սովորական (արտոնյալ) բաժնետոմսերի քանակին և անվանական արժեքին համապատասխան:

Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովին խորհրդակցական ձայնի իրավունքով կարող են մասնակցել նաև Ընկերության բաժնետեր չհանդիսացող Ընկերության տնօրենների խորհրդի անդամները, գլխավոր տնօրենը, ինչպես նաև վերստուգող հանձնաժողովի անդամները (վերստուգողը) և աուդիտն իրականացնող անձը:

Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմվում է Ընկերության տնօրենների խորհրդի կողմից սահմանված ամսաթվի դրությամբ՝ Ընկերության բաժնետերերի ռեեստրի տվյալների հիման վրա:

9.12. Ընկերության գործունեության ընդհանուր ղեկավարումը իրականացնում է Ընկերության տնօրենների խորհուրդը:

Ընկերության տնօրենների խորհրդի անդամները ընտրվում են Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովում՝ մեկ տարի ժամանակով: Ընկերության տնօրենների խորհրդի ընտրությունները կարող են իրականացվել ինչպես սովորական, այնպես էլ գումարային (կոմուլյատիվ) քվեարկությամբ:

Ընկերության տնօրենների խորհրդի բացառիկ իրավասությանն են պատկանում հետևյալ հարցերը՝

1. Ընկերության գործունեության հիմնական ուղղությունների որոշումը,
2. Ընկերության բաժնետերերի տարեկան և արտահերթ ընդհանուր ժողովների գումարումը, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի,
3. Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի օրակարգի հաստատումը,
4. գույքի շուկայական արժեքի որոշումը,
5. Ընկերության տեղաբաշխված բաժնետոմսերի, պարտատոմսերի և այլ արժեթղթերի ձեռք բերումը Օրենքով նախատեսված դեպքերում,
6. Ընկերության գլխավոր տնօրենի նշանակումը, նրա աշխատանքի վարձատրության պայմանների որոշումը, լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը,
7. պարտատոմսերի և այլ արժեթղթերի տեղաբաշխումը,

8. Ընկերության աուդիտն իրականացնող անձի վարձատրության չափի սահմանումը,
9. Ընկերության բաժնետոմսերի դիմաց վճարվող տարեկան շահութաբաժինների չափի և վճարման կարգի վերաբերյալ Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի առաջարկությունների նախապատրաստումը,
10. Ընկերության բաժնետոմսերի միջանկյալ (եռամսյակային կամ կիսամյակային) շահութաբաժինների չափի և վճարման կարգի սահմանումը,
11. Ընկերության պահուստային հիմնադրամի օգտագործումը,
12. Ընկերության կառավարման մարմինների գործունեությունը կանոնակարգող ներքին փաստաթղթերի հաստատումը,
13. խոշոր գործարքների կատարման մասին որոշման ընդունումը Օրենքով սահմանված դեպքերում,
14. այլ կազմակերպություններին մասնակցության մասին որոշման ընդունումը, եթե այդ մասնակցությունը իրենից խոշոր գործարք չի ներկայացնում,
15. Ընկերության առանձնացված ստորաբաժանումների և հիմնարկների ստեղծումը, գործունեության դադարեցումը, դրանց կանոնադրությունների հաստատումը,
16. Ընկերության վարչակազմակերպական կառուցվածքի հաստատումը,
17. հաստիքացուցակի հաստատումը,
18. ամենամյա ծախսերի նախահաշվի և դրա կատարողականի հաստատումը,
19. Օրենքով և սույն կանոնադրությամբ Ընկերության տնօրենների խորհրդի իրավասությանը վերապահված այլ հարցերի լուծումը:

Ընկերության տնօրենների խորհրդի որոշումներն ընդունվում են նիստին ներկա անդամների ձայների պարզ մեծամասնությամբ: Զվեարկության ժամանակ տնօրենների խորհրդի յուրաքանչյուր անդամ ունի մեկ ձայն, ընդ որում ձայների հավասարության դեպքում տնօրենների խորհրդի նախագահն ունի որոշիչ ձայնի իրավունք: 9.12. կետի 13-րդ ենթակետով սահմանված դեպքում որոշումն ընդունվում է տնօրենների խորհրդի միաձայն որոշմամբ:

9.13. Ընկերության տնօրենների խորհրդի իրավասությունները բաժնետերերի ընդհանուր ժողովի որոշմամբ կարող է իրականացնել Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովը: Այդ դեպքում Ընկերության տնօրենների խորհրդի իրավասություն հանդիսացող հարցերը ենթակա են բաժնետերերի ընդհանուր ժողովի իրավասությանը, բացի 9.12. կետի 2, 3, 5, 9, 16, 17 և 18 ենթակետերով սահմանված հարցերից, որոնք փոխանցվում են գլխավոր տնօրենի իրավասությանը:

Ընկերության տնօրենների խորհրդի նախագահի և գլխավոր տնօրենի պաշտոնները կարող են համատեղվել Ընկերության ընդհանուր ժողովի որոշմամբ (Օրենքով թույլատրված դեպքերում):

Ընկերության տնօրենների խորհրդի նախագահն ընտրվում է տնօրենների խորհրդի կողմից, տնօրենների խորհրդի անդամների կազմից՝ տնօրենների խորհրդի անդամների ընդհանուր քանակի ձայների մեծամասնությամբ:

Բացառությամբ սույն կետում նախատեսված դեպքից, Ընկերության տնօրենների խորհրդի նախագահը չի կարող ընկերությունում այլ վճարովի պաշտոն զբաղեցնել:

9.14. Ընկերության տնօրենների խորհրդի նախագահը՝

1. կազմակերպում է Ընկերության տնօրենների խորհրդի աշխատանքները,
2. գումարում է Ընկերության տնօրենների խորհրդի նիստերը և նախագահում է դրանք,
3. կազմակերպում է նիստերի արձանագրության վարումը,
4. նախագահում է Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովներում:

9.15. Ընկերության ընթացիկ գործունեության ղեկավարումն իրականացնում է Ընկերության գլխավոր տնօրենը:

Գլխավոր տնօրենը լուծում է բոլոր հարցերը, բացի Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի և Ընկերության տնօրենների խորհրդի բացառիկ իրավասությանը վերաբերվող հարցերից: Գլխավոր տնօրենը կազմակերպում է Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի և Ընկերության տնօրենների խորհրդի որոշումների կատարումը, հաշվետու է նրանց և իրավունք չունի ինչպես Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի, այնպես էլ Ընկերության տնօրենների խորհրդի համար պարտադիր որոշումներ կայացնելու:

Ընկերության գլխավոր տնօրենը պետք է գործի բարեխղճորեն և ողջամիտ՝ ի շահ իր կողմից ներկայացվող Ընկերության: Նա պարտավոր է Ընկերության հիմնադիրների (բաժնետերերի) պահանջով հատուցել իր կողմից Ընկերությանը պատճառած վնասները, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով:

Ընկերության գլխավոր տնօրենը՝

1. տնօրինում է Ընկերության գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները, գործարքներ է կատարում Ընկերության անունից,
2. ներկայացնում է Ընկերությունը Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում և արտասահմանում,
3. գործում է առանց լիազորագրի,
4. տալիս է լիազորագրեր,
5. սահմանված կարգով կնքում է պայմանագրեր, այդ թվում՝ աշխատանքային,
6. բանկերում բացում է Ընկերության հաշվարկային (այդ թվում՝ տարադրամային) և այլ հաշիվներ,
7. Ընկերության տնօրենների խորհրդի հաստատմանն է ներկայացնում Ընկերության աշխատանքային կանոնակարգը, առանձնացված ստորաբաժանումների և հիմնարկների կանոնադրությունները, Ընկերության վարչակազմակերպական կառուցվածքը,
8. իր իրավասության սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ, տալիս է կատարման համար պարտադիր ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը,
9. սահմանված կարգով աշխատանքի է ընդունում և աշխատանքից ազատում Ընկերության աշխատակիցներին,
10. աշխատակցի նկատմամբ կիրառում է խրախուսման և կարգապահական պատասխանատվության միջոցներ:

Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի որոշմամբ Ընկերության գործադիր մարմնի (ինչպես միանձնյա, այնպես էլ կոլեգիալ) լիազորությունները պայմանագրով կարող են տրվել այլ առևտրային կազմակերպության կամ անհատ ձեռնարկատիրոջ (կառավարչի):

10. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՀՄԿՈՒՄԸ

10.1. Ընկերության ֆինանսատնտեսական գործունեության վերահսկումն իրականացնելու համար Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովն ընտրում է Ընկերության վերստուգող հանձնաժողով (վերստուգող):

Օրենքների կամ այլ իրավական ակտերի պահանջով վերահսկող ծառայություն (վերահսկող) ունենալու դեպքում վերստուգող հանձնաժողովի (վերաստուգողի) իրավասությունները դրվում են վերահսկող ծառայության (վերահսկողի) վրա:

Վերստուգող հանձնաժողովը հետևում է Ընկերության կառավարման մարմինների որոշումների կատարմանը, ստուգում է Ընկերության փաստաթղթերի համապատասխանությունը օրենքներին, այլ իրավական ակտերին և Ընկերության կանոնադրությանը:

Վերստուգող հանձնաժողովի գործունեության կարգը սահմանվում է Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի կողմից հաստատվող ներքին փաստաթղթով՝ վերստուգող հանձնաժողովի կանոնակարգով:

Վերստուգող հանձնաժողովը իրականացնում է Ընկերության ֆինանսատնտեսական գործունեության տարեկան արդյունքների ստուգումը, ստուգում է Ընկերության ֆինանսատնտեսական գործունեությունը սեփական նախաձեռնությամբ, ինչպես նաև Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի կամ տնօրենների խորհրդի որոշմամբ, ինչպես նաև Ընկերության այն բաժնետիրոջ (բաժնետերերի) պահանջով, որոնց հանրագումար բաժինը Ընկերության կանոնադրական կապիտալում կազմում է 10 և ավելի տոկոս:

Վերստուգող հանձնաժողովը ստուգումների արդյունքներն ուղարկում է Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողով: Վերստուգող հանձնաժողովն ըստ տարեկան հաշվետվության և հաշվեկշռի կազմում է եզրակացություն: Առանց այդ եզրակացության Ընկերության հաշվեկշիռը ենթակա չէ հաստատման ընդհանուր ժողովի կողմից:

Վերստուգող հանձնաժողովը իրավունք ունի պահանջել Ընկերության բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովի գումարում:

Վերստուգող հանձնաժողովի պահանջով նրանց պետք է ներկայացվեն Ընկերության, դրա առանձնացված ստորաբաժանումների և հիմնարկների ֆինանսատնտեսական գործունեությանը վերաբերող բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը, նյութերը և բացատրությունները:

Վերստուգող հանձնաժողովի անդամները ընտրվում են Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի կողմից 3 տարի ժամկետով:

Վերստուգող հանձնաժողովի անդամների վարձատրության կամ վճարվող փոխհատուցման չափերը և պայմանները սահմանվում են Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի որոշմամբ:

Վերստուգող հանձնաժողովի անդամ կարող են լինել Ընկերության կառավարման մարմիններում չընդգրկված գործունակ ֆիզիկական անձինք:

10.2. Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի որոշմամբ վերստուգող հանձնաժողովի իրավասությունները կարող են դրվել վերստուգողի վրա:

10.3. Ընկերության ամենամյա ֆինանսական հաշվետվության հավաստիությունը վերստուգելու համար Ընկերությունը պարտավոր է ներգրավել Ընկերության կամ նրա բաժնետերերի հետ գույքային շահերով չկապված արհեստավարժ վերստուգիչի

(կազմակերպության կամ ֆիզիկական անձի)՝ աուդիտորի (արտաքին աուդիտ): Ընկերության աուդիտն իրականացնող անձն Ընկերության ֆինանսատնտեսական գործունեության ստուգման արդյունքում ներկայացնում է գրավոր եզրակացություն:

Ընկերության ամենամյա ֆինանսական հաշվետվության վերստուգումը կարող է կատարվել նաև նրա բաժնետերերից յուրաքանչյուրի պահանջով: Այս դեպքում վերստուգումը կատարվում է այն պահանջող բաժնետիրոջ հաշվին:

Ընկերության աուդիտն իրականացնող անձը հաստատվում է Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի կողմից: Ընկերության աուդիտն իրականացնող անձի հետ պայմանագիրը կնքվում է Ընկերության տնօրենների խորհրդի կողմից, որը և որոշում է աուդիտն իրականացնող անձի ծառայությունների համար վճարվող գումարի չափը:

Ընկերության գործունեության վերստուգումն այն բաժնետերերի պահանջով, որոնց հանրագումար բաժինը կանոնադրական կապիտալում կազմում է տասը և ավելի տոկոս, պետք է անցկացվի ցանկացած ժամանակ:

10.4. Ընկերության ֆինանսական և տնտեսական գործունեության ստուգումը կարող է իրականացվել նաև Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ֆինանսական և այլ լիազորված մարմինների, հսկողական ծառայությունների կողմից՝ իրենց իրավասության սահմաններում:

11. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼԸ

11.1. Ընկերության կանոնադրության մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելը, ինչպես նաև Ընկերության նոր խմբագրությամբ կանոնադրության հաստատելը տեղի է ունենում բաժնետերերի ընդհանուր ժողովի որոշմամբ, որն ընդունվում է ժողովին մասնակցած քվեարկող բաժնետերերի ձայների 3/4-ով, իսկ կանոնադրական կապիտալի չափի մեծացման հետ կապված դեպքերում՝ ձայների մեծամասնությամբ:

11.2. Ընկերության կանոնադրության մեջ կատարված փոփոխություններ և լրացումներ, ինչպես նաև Ընկերության նոր խմբագրությամբ կանոնադրությունը երրորդ անձանց համար ուժի մեջ են մտնում դրանց պետական գրանցման պահից:

12. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԼՈՒԾԱՐՈՒՄԸ

12.1. Ընկերությունը բաժնետերերի ընդհանուր ժողովի որոշմամբ կարող է կամովին վերակազմակերպվել կամ լուծարվել:

Եթե լուծարվող ընկերության գույքի արժեքն անբավարար է պարտատերերի պահանջները բավարարելու համար, ապա այն կարող է լուծարվել միայն սնանկության հետևանքով:

Ընկերության վերակազմակերպման և լուծարման այլ հիմքերը, ինչպես նաև նրա վերակազմակերպման ու լուծարման կարգը սահմանվում են Օրենսգրքով, Օրենքով և այլ օրենքներով:

12.2. Ընկերությունն իրավունք ունի վերակազմավորվել սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության և առևտրային կոոպերատիվի:

12.3. Ընկերության լուծարումը հանգեցնում է Ընկերության դադարմանը առանց Ընկերության իրավունքների և պարտականությունների իրավահաջորդության կարգով այլ անձանց փոխանցման:

Ընկերության լուծարման մասին որոշումը կայացվում է Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի կողմից՝ դրան մասնակցող բաժնետերերի ձայների 3/4-ով, սակայն ոչ պակաս քվեարկող բաժնետոմսերի սեփականատերերի ձայների 2/3-ից:

Լուծարման հանձնաժողով կազմելու պահից նրան են անցնում Ընկերության գործերի կառավարման բոլոր լիազորությունները: Լուծարվող Ընկերության անունից դատարանում հանդես է գալիս լուծարման հանձնաժողովը:

Ընկերության լուծարման գործընթացում գտնվելու մասին տեղեկությունները (այդ թվում՝ լուծարման հանձնաժողովի կազմը) ենթակա են գրանցման իրավաբանական անձանց պետական գրանցամատյանում:

12.4. Ընկերությունը, բացառությամբ այլ իրավաբանական անձի միացման ձևով վերակազմակերպման դեպքի, վերակազմակերպված է համարվում նոր ստեղծված իրավաբանական անձանց պետական գրանցման պահից:

Ընկերությունն այլ իրավաբանական անձի հետ միացման ձևով վերակազմակերպվելիս, վերակազմակերպված է համարվում միացող ընկերության գործունեությունը դադարելու վերաբերյալ իրավաբանական անձանց պետական գրանցամատյանում գրառման պահից:

12.5. Ընկերության լուծարումը համարվում է ավարտված, իսկ նրա գոյությունը՝ դադարած այդ մասին իրավաբանական անձանց պետական գրանցամատյանում համապատասխան գրանցում կատարելու պահից:



Համարակալված
ժամկալինված
ամրակցված է
« 23 » թ

5.5. Ընկերության Ֆինանսական հաշվետվությունների աուդիտի եզրակացության պատճեն



Վ.Ս. Աուդիտ
В.С. Аудит
V.S. Audit

ԱՆԿԱՆ ԱՌԻԴԻՏՈՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
«Արցախ ՀԷԿ» ՓԲԸ բաժնետերերին

Մենք ստուգել ենք «Արցախ ՀԷԿ» ՓԲ Ընկերության հաշվապահական հաշվառման հաշվեկշիռը՝ առ 31-ը դեկտեմբերի 2007թ., 2007թ. տարեկան ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունը, ինչպես նաև առ 01 մայիսի 2008թ. հաշվապահական հաշվառման հաշվեկշիռը: Նշված ֆինանսական հաշվետվությունների կազմման համար պատասխանատու է կազմակերպության ղեկավարությունը:

Մեր պարտականությունն է անցկացված աուդիտի արդյունքում արտահայտել կարծիք ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ:

Մենք աուդիտն անցկացրինք աուդիտի ստանդարտներին (աուդիտի ազգային ստանդարտներին և գործնական փորձին) համապատասխան: Այդ ստանդարտներով պահանջվում է, որ մենք աուդիտը պլանավորենք և իրականացնենք, ֆինանսական հաշվետվությունները էական խեղաթյուրումներից զերծ լինելու մասին ողջամիտ երաշխիք ձեռք բերելու նպատակով: Աուդիտորական աշխատանքները ներառում են ֆինանսական հաշվետվություններում արտացոլված տեղեկատվության և բացահայտումների հիմքերի հետազոտումը՝ թեսթային հիմունքներով: Աուդիտորական աշխատանքները ներառում են նաև ֆինանսական հաշվետվությունների կազմման ժամանակ կիրառված հաշվապահական հաշվառման սկզբունքների, կազմակերպության ղեկավարության կողմից կատարված էական գնահատումների և ֆինանսական հաշվետվությունների ներկայացման գնահատումը: Մենք գտնում ենք, որ իրականացված աուդիտորական աշխատանքների արդյունքները բավարար հիմք են հանդիսանում մեր կարծիքն արտահայտելու համար:

Մեր հաստատմանն էր ներկայացվել «Արցախ ՀԷԿ» ՓԲ Ընկերության առ 01.05.2008թ. հաշվապահական հաշվեկշիռ:

2008թ. մայիսի 1-ի դրությամբ Ընկերության հաշվապահական հաշվեկշիռ ըստ հոդվածների ներկայացվում է.

հազ. դրամ

| Ակտիվներ | |
|--|----------------|
| 1. Հիմնական միջոցներ | 5096241 |
| 2. Ոչ նյութական ակտիվներ | 2000 |
| 3. Նյութեր | 2497 |
| 4. Արագամաշ առարկաներ | 5 |
| 5. Տրված ընթացիկ կանխավճարներ | 30965 |
| 6. Դեբիտորական պաշտոքեր գնումների գծով | 11098 |
| 7. Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ | 8410 |
| Ընդամենը | 5151216 |

ՀՀ ք.Երևան Գ.Նժդեհի 48/1 հին.: (37410)448979, (37410)440046, Ֆաքս: (37410)440046, Լիցենզիա ԱԾ 042, էլ. փոստ vsaudit@mail.ru
 RA Yerevan G.Njdech 48/1 tel.: (37410)448979, (37410)440046, Fax: (37410)440046, License ԱԾ 042, e-mail: vsaudit@mail.ru



Վ.Ս. Աուդիտ
B.C. Аудит
V.S. Audit

| Պասիվներ | հազ. դրամ |
|--|-----------|
| 1. Կանոնադրական կապիտալ | 36083 |
| 2. Վերագնահատումից և վերաչափումից տարբերություններ | 5050903 |
| 3. Կուտակված շահույթ | 36162 |
| 5. Կրեդիտորական պարտքեր գնումների գծով | 5590 |
| 6. Կարճաժամկետ կրեդիտորական պարտքեր բյուջեին | 14893 |
| 7. Կարճաժամկետ կրեդիտորական պարտքեր պարտադիր սոցիալական ապահովագրության գծով | 3091 |
| 8. Կրեդիտորական պարտքեր աշխատավարձի և աշխատակիցներին այլ հատուցումների գծով | 4438 |
| 9. Այլ կրեդիտորական պարտքեր | 56 |
| Ընդամենը | 5151216 |

Մեր կարծիքով «Արցախ ՀԷԿ» ՓԲ Ընկերության հաշվապահական հաշվեկշիռը առ 31 դեկտեմբերի 2007թ. և 2007թ. տարեկան ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունը, ինչպես նաև առ 01 մայիսի 2008թ. հաշվապահական հաշվառման հաշվեկշիռը տալիս են Ընկերության ֆինանսական վիճակի վերաբերյալ ճշմարիտ և իրական պատկերը:

«Արցախ ՀԷԿ» ՓԲ Ընկերության ղեկավարության կողմից կայացրած որոշումները և հրամանները կապված ընկերության ֆինանսական գործունեության հետ բխում են ԼՂՀ Կառավարության որոշումներից, ինչպես նաև ԼՂՀ գործող օրենքներից և ենթաօրենսդրական ակտերից:

Տնօրեն Աուդիտոր

23.05.2008թ.



Վ. Գևորգյան

5.6. Ներդրումային ծառայություններ մատուցող անձանց հետ կնքած պայմանագրերը

Պ Ա Յ Մ Ա Ն Ա Գ Ի Ր**ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՉԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ՏԵՂԱԲԱՇԽՄԱՆ**

ք. Երևան

26 նոյեմբերի 2008թ.

«ԱՐՄԵՆԲՐՈԿ» ԲԲԸ (այսուհետև՝ Տեղաբաշխող), ի դեմս գլխավոր տնօրեն Արամ Կայֆաջյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, մի կողմից և «ԱՐՑԱԽ ՀԷԿ» ԲԲԸ (այսուհետև՝ Թողարկող), ի դեմս գլխավոր տնօրեն Վալերի Հարությունյանի, որը գործում է ընկերության կանոնադրության և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր արտադրական ենթակառուցվածքների վարչության պետի 25.11.2008 թ. թիվ 19Վ հրամանի 4-րդ կետի հիման վրա, մյուս կողմից, ղեկավարվելով «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետև՝ Օրենք) դրույթներով, կնքեցին սույն պայմանագիրը:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

- 1.1 Սույն պայմանագրով Տեղաբաշխողը պարտավորվում է Թողարկողին մատուցել արժեթղթերի չերաշխավորված տեղաբաշխման իրականացման ծառայություններ:
- 1.2 Սույն պայմանագրի իմաստով չերաշխավորված տեղաբաշխման իրականացման ծառայություններ են հանդիսանում՝
 - 1) Թողարկողի կողմից արժեթղթեր թողարկելու ժամանակացույցի և պայմանների վերաբերյալ գրավոր առաջարկության մշակումը և տրամադրումը, ինչպես նաև արժեթղթերի թողարկման և տեղաբաշխման ձևերի, ժամկետների, ծավալների և մեխանիզմների համակարգումը,
 - 2) աջակցություն թողարկվող արժեթղթերի ազդագրի (այսուհետև՝ Ազդագիր) պատրաստմանը և գրանցմանը,
 - 3) Թողարկված արժեթղթերի հրապարակային տեղաբաշխման կազմակերպումը,
 - 4) աջակցություն Օրենքով նախատեսված տեղաբաշխման ընթացքի և արդյունքների մասին հաշվետվությունների պատրաստմանը,

- 5) աջակցություն «Հայաստանի Կենտրոնական Դեպոզիտարիա» ԲԲԸ-ում (այսուհետ՝ Դեպոզիտարիա) արժեթղթերի տեղաբաշխմամբ պայմանավորված գրանցումների իրականացմանը,
 - 6) Տեղաբաշխման ընթացքում համապատասխան արժեթղթեր ձեռքբերողներին աջակցության ցուցաբերումը, արժեթղթերի նկատմամբ սեփականության իրավունքի գրանցման գործընթացում անհրաժեշտ տեղեկատվության տրամադրումը,
 - 7) Օրենքով և սույն պայմանագրով նախատեսված Տեղաբաշխողին վերաբերող այլ գործողությունները:
- 1.3 Տեղաբաշխողը Թողարկողի կողմից թողարկվող արժեթղթերի տեղաբաշխման աշխատանքները իրականացնում է վերջինիս կողմից ներկայացված առանձին հանձնարարականով, որտեղ արտացոլվում են տեղաբաշխվող (վաճառվող) արժեթղթերի քանակը, տեղաբաշխման գինը, ինչպես նաև տեղաբաշխման գործունեությունը լիակատար իրականացնելու համար անհրաժեշտ այլ դրույթներ:
- 1.4 Սույն պայմանագրին 1.3. կետով սահմանված հանձնարարականը հանդիսանում է սույն պայմանագրի անբաժանելի մասը և ստորագրվում է կողմերի լիազորված ներկայացուցիչների կողմից:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1. Թողարկողը պարտավոր է՝

- 2.1.1. Տեղաբաշխման գործընթացի շրջանակներում կատարել սույն պայմանագրով և կից հանձնարարականներով, ՀՀ և ԼՂՀ օրենսդրությամբ սահմանված իր պարտավորությունները:
- 2.1.2. Տրամադրել Տեղաբաշխողին սույն պայմանագրի առարկային վերաբերող, գաղտնիք չհամարվող անհրաժեշտ բոլոր տեղեկությունները:
- 2.1.3. Սույն պայմանագրով սահմանված ծառայությունների համար Տեղաբաշխողին վճարել սույն պայմանագրին կից ներկայացվող հանձնարարականում նշված միջնորդավճարը՝ սույն պայմանագրով սահմանված կարգով և պայմաններով:
- 2.1.4. Տեղաբաշխողի կողմից ներկայացվող հաշվետվությունների վերաբերյալ առարկություններ ունենալու դեպքում դրանց ստացման պահից երեք աշխատանքային

օրվա ընթացքում գրավոր հայտնել այդ մասին Տեղաբաշխողին: Հակառակ դեպքում հաշվետվությունը համարվում է ընդունված:

2.1.5. Արժեթղթերը ձեռքբերողների նկատմամբ կազմակերպել վերջիններիս՝ արժեթղթերով հավաստված իրավունքների պատշաճ իրականացումը:

2.1.6. Սույն պայմանագրով իր ստանձնած պարտավորությունների կատարմանը խոչընդոտող անհաղթահարելի ուժի ազդեցության ի հայտ գալու դեպքում անհապաղ տեղեկացնել այդ մասին Տեղաբաշխողին:

2.2. Տեղաբաշխողը պարտավոր է՝

2.2.1. Տեղաբաշխման գործընթացի շրջանակներում կատարել սույն պայմանագրով և կից հանձնարարականներով, ՀՀ օրենսդրությամբ սահմանված իր պարտավորությունները:

2.2.2. Պոտենցիալ գնորդների պահանջով նրանց անվճար տրամադրել արժեթղթերի Ազդագրի տպագիր կամ էլեկտրոնային տարբերակը:

2.2.3. Թողարկողին տրամադրել հաշվետվություն կատարված աշխատանքների վերաբերյալ հետևյալ կարգով՝

- ընթացիկ (տաս օրվա կտրվածքով) հաշվետվություն Թողարկողի արժեթղթերի վաճառքի/տեղաբաշխման վերաբերյալ (տրամադրվում է Թողարկողին տեղաբաշխման սկզբի պահից հետո յուրաքանչյուր 10-րդ օրվան հաջորդող աշխատանքային օրվա ընթացքում թղթային կամ էլեկտրոնային ֆորմատներով), որը ներառում է.

ա) հաշվետու ժամանակաշրջանի սկզբի և ավարտի ամսաթվերը,

բ) հաշվետու ժամանակաշրջանում կնքված տեղաբաշխման յուրաքանչյուր գործարքի (ստացված յուրաքանչյուր հայտի)

- ամսաթիվը,
- առարկա հանդիսացող արժեթղթերի քանակը,
- գինը,
- Տեղաբաշխողին վճարվող միջնորդավճարի չափը,
- արժեթղթերի տեղաբաշխման գործարքից Թողարկողին հասանելիք գումարը (առանց Տեղաբաշխողին վճարվող միջնորդավճարի),

գ) հաշվետվության կազմման ամսաթիվը,

դ) Տեղաբաշխողի ստորագրությունը և կնիքը:

- տեղաբաշխման արդյունքների մասին հաշվետվություն (տրամադրվում է Թողարկողին արժեթղթերի տեղաբաշխման ավարտից հետո չորս աշխատանքային օրվա ընթացքում թղթային կամ էլեկտրոնային ֆորմատներով), որը ներառում է.

- ա) տեղաբաշխման սկզբի և ավարտի ամսաթվերը,
- բ) արժեթղթերի հրապարակային տեղաբաշխման գինը և վաճառված արժեթղթերի միջին գինը,
- գ) վաճառված արժեթղթերի քանակը,
- դ) Տեղաբաշխողին վճարվող միջնորդավճարի չափը,
- ե) արժեթղթերի տեղաբաշխման գործարքից Թողարկողին հասանելիք գումարը (առանց Տեղաբաշխողին վճարվող միջնորդավճարի),
- զ) հաշվետվության կազմման ամսաթիվը,
- է) Տեղաբաշխողի ստորագրությունը և կնիքը:

2.2.4. Սույն պայմանագրի շրջանակներում գործել բարեխիղճ, ելնելով Թողարկողի և ներդրողների շահերից:

2.2.5. Սույն պայմանագրով իր ստանձնած պարտավորությունների կատարմանը խոչընդոտող անհաղթահարելի ուժի ազդեցության ի հայտ գալու դեպքում անհապաղ տեղեկացնել այդ մասին Թողարկողին:

2.3. Թողարկողն իրավունք ունի՝

2.3.1. Տեղաբաշխողից պահանջել սույն պայմանագրով վերջինիս ստանձնած պարտավորությունների ամբողջովին կատարումը:

2.3.2. Տեղաբաշխողից ստանալ կատարված աշխատանքների վերաբերյալ հաշվետվություններ:

2.4. Տեղաբաշխողը իրավունք ունի՝

2.4.1. Թողարկողից պահանջել սույն պայմանագրով վերջինիս ստանձնած պարտավորությունների ամբողջովին կատարումը:

2.4.2. Թողարկողից ստանալ սույն պայմանագրի առարկային վերաբերող, գաղտնիք չհամարվող անհրաժեշտ բոլոր տեղեկությունները:

2.4.3. Սույն պայմանագրով սահմանված կարգով և պայմաններով ստանալ իր կողմից կատարված աշխատանքների համար վարձատրություն:

3. ՀԱՇՎԱՐԿՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

- 3.1. Թողարկողը Տեղաբաշխողին սույն պայմանագրով նախատեսված ծառայությունների դիմաց վճարում է միջնորդավճար, որի չափը նշվում է Թողարկողի կողմից տրված հանձնարարականում:
- 3.2. Արժեթղթեր ձեռքբերողը տեղաբաշխվող արժեթղթերը գնելու համար դիմում է Տեղաբաշխողին՝ ներկայացնելով բաժանորդագրության հայտ (այսուհետև՝ հայտ), որի ձևը սահմանում է տեղաբաշխողը:
- 3.3. Արժեթղթերի գնման հայտերը գրանցվում են հայտերի էլեկտրոնային գրանցամատյանում, որում պետք է տեղեկություններ ներառվեն հայտը ներկայացնող անձի և հայտի բոլոր էական պայմանների (արժեթղթերի քանակ, գին և այլն) վերաբերյալ:
- 3.4. Հայտի ներկայացման հետ մեկտեղ արժեթղթերը ձեռքբերողը պետք է կատարի նաև ձեռքբերման ենթակա արժեթղթերի դիմաց վճարումը:
- 3.5. Բաժանորդագրման հայտը կհամարվի վավեր միայն ձեռք բերվող բաժնետոմսերի դիմաց լրիվ վճարման պահից:
- 3.6. Արժեթղթերը ձեռքբերողը վճարումը կատարում է վճարվող գումարը անմիջապես փոխանցելով Տեղաբաշխողի կողմից նշված բանկային հաշվին:
- 3.7. Սույն պայմանագրի 2.2.3. կետի առաջին մասով սահմանված հաշվետվությունը Թողարկողի կողմից ընդունված համարվելու պահից երեք աշխատանքային օրվա ընթացքում Տեղաբաշխողը Թողարկողին է փոխանցում արժեթղթերը ձեռքբերողների կողմից ձեռքբերվող արժեթղթերի դիմաց վճարված գումարի և Տեղաբաշխողի միջնորդավճարի գումարի տարբերությունը:
- 3.8. Վաճառված արժեթղթերի գրանցման և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարումները կատարվում են Թողարկողի կողմից:

4. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

- 4.1. Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության արդյունք, որը ծագել է սույն պայմանագիրը

կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 /երեք/ ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

5. ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳԸ

- 5.1. Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնության չգալու դեպքում վեճերի լուծումը իրականացվում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6. ԵԶՐԱՓՈՒԿ ԴՐՈՒՅԹՆԵՐ

- 6.1. Սույն պայմանագրում ցանկացած փոփոխություն և լրացում վավեր է այն պայմանով, եթե դա կատարված է գրավոր և ստորագրված կողմերի լիազոր ներկայացուցիչների կողմից:
- 6.2. Սույն պայմանագրի կողմերի միջև փոխանցվող և այլ կերպ հայտնի դարձած հրապարակային չհամարվող տեղեկությունները հանդիսանում են գաղտնի և ենթակա չեն հրապարակման:
- 6.3. Սույնով Տեղաբաշխողը հաստատում է իր ստորագրած կամ փոխկապակցված չլինելը Թողարկողի հետ:
- 6.4. Սույնով Թողարկողը հաստատում է, որ Տեղաբաշխողը իրեն հնարավորություն է ընձեռել ծանոթանալու ՀՀ-ում ներդրումային ծառայությունների մատուցումը կարգավորող իրավական ակտերին:
- 6.5. Սույնով Թողարկողը հաստատում է, որ Տեղաբաշխողը նրան տրամադրել է Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի կողմից ընդունված կանոնակարգ 4-07-ով սահմանված բոլոր տեղեկությունները:

- 6.6. Սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում պարտավորությունը չկատարած կողմը մյուս կողմին վճարում է տուգանք 2 000 000 (երկու միլիոն) դրամի չափով, եթե սույն պայմանագրով այլ բան նշված չէ:
- 6.7. Սույն պայմանագրի 3.7. կետում նշված պարտավորությունը սահմանված ժամկետում չկատարելու դեպքում Տեղաբաշխողը Թողարկողին վճարում է տույժ ուշացված յուրաքանչյուր օրվա համար վճարման ենթակա գումարի 0.05 տոկոսի չափով՝ սկսած ուշացման երրորդ օրվանից:
- 6.8. Սույն պայմանագրի 6.6. կետում նշված տուգանքը կողմերի համաձայնությամբ կարող է չկիրառվել:
- 6.9. Սույն պայմանագրով կողմերի միջև կապը իրականացվում է պայմանագրի 7-րդ բաժնում նշված կապի միջոցներով, որոնք հանդիսանում են տեղեկատվության փոխանակման հուսալի միջոցներ:
- 6.10. Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում երկկողմանի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պարտավորությունների կատարումը՝ կատարողական ակտի կազմմամբ:
- 6.11. Սույն պայմանագիրը կարող է լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ, կամ միակողմանիորեն՝ առնվազն 10 օր առաջ ուղարկված գրավոր պահանջով: Պայմանագիրը լուծելուց հետո՝ 3 աշնատանքային օրվա ընթացքում Տեղաբաշխողը պարտավոր է Թողարկողին փոխանցել տվյալ պահի դրությամբ չփոխացված դրամական միջոցները:
- 6.12. Սույն պայմանագիրը կազմված է հավասարազոր իրավաբանական ուժ ունեցող երկու օրինակից: Յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկական օրինակ:

7. ԿՈՂՄԵՐԻ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ

| ՏԵՂԱԲԱՇԽՈՂ | ԹՈՂԱՐԿՈՂ |
|---|--|
| «ԱՐՄԵՆԲՐՈԿ» ԲԱՅ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ | «ԱՐՑԱՒ ԴԷԿ» ԲԱՅ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ |
| Անվանում | Անվանում |
| ՀՀ, ք. Երևան, Տիգրան Մեծի 32/1 շ., թիվ 8 տարածք | ԼՂՀ, ք. Ստեփանակերտ, Ա. Առաքելյանի փող., թիվ 10 |
| Հասցե | Հասցե |
| +37410 538700 +37410 528986 armenbrok@armenbrok.com | 0479 4-28-58 0479 7-42-14 artsakhhek@mail.ru |
| Հեռ., հեռ./ֆաքս, էլ. փոստ | Հեռ., հեռ./ֆաքս |
| 2472300356740010 Արդշինինվեստ Բանկ | 223004081160 Արցախբանկ |
| Բանկային վավերապայմաններ | Բանկային վավերապայմաններ |
| 00450096 | 90025315 |
| ՀՎՀՀ | ՀՎՀՀ |
| ՆԸ 0010 | N0001 |
| Լիցենզիա համար | Լիցենզիա համար |
| Արամ Կայֆաջյան | Վահրամ Զարհուրդյան |
| Գլխավոր տնօրեն | Գլխավոր տնօրեն |



ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՏԵՂԱԲԱՇԽՄԱՆ ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆ N 1

ք. Երևան

«26» Նոյեմբերի 2008թ.


Սույն հանձնարարականը հանդիսանում է «ԱՐՄԵՆԲՐՈԿ» ԲԲԸ-ի (Տեղաբաշխող) և «ԱՐՑԱԽ ՀԷԿ» ԲԲԸ-ի (Թողարկող) միջև 26.11.2008թ. կնքված Արժեթղթերի չերաշխավորված տեղաբաշխման պայմանագրի անբաժանելի մասը և գործում է այդ պայմանագրով սահմանված կարգով:

Սույն հանձնարարականով Թողարկողը հանձնարարում է, իսկ Տեղաբաշխողը հանձն է առնում կազմակերպել Թողարկողի արժեթղթերի տեղաբաշխման գործընթացը, հետևյալ պայմաններով և կարգով՝

1. ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՏԵՂԱԲԱՇԽՎՈՂ ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՄԱՍԻՆ

| | | |
|------|---|---|
| (1) | Արժեթղթի դասը, տեսակը | Հասարակ անվանական բաժնետոմս |
| (2) | Արժեթղթի ձևը | Ոչ փաստաթղթային |
| (3) | Թողարկվող արժեթղթերի ծավալը | 3,450,000,750 ՀՀ դրամ |
| (4) | Թողարկվող արժեթղթերի քանակը | 3,285,715 հատ |
| (5) | Մեկ արժեթղթի անվանական արժեքը | 1,000 ՀՀ դրամ |
| (6) | Մեկ արժեթղթի տեղաբաշխման գինը | 1,050 ՀՀ դրամ |
| (7) | Տեղաբաշխման ձևը | Հրապարակային |
| (8) | Տեղաբաշխման եղանակը | Լավագույն ջանքերի գործադրմամբ / Չերաշխավորված |
| (9) | Տվյալ թողարկման հերթական համարը | 01 (առաջին) |
| (10) | Տեղաբաշխողի միջնորդավճարը (% տեղաբաշխման ծավալից) | 2% |

2. ԿՈՂՄԵՐԻ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ

| ՏԵՂԱԲԱՇԽՈՂ | ԹՈՂԱՐԿՈՂ |
|---|---|
| «ԱՐՄԵՆԲՐՈԿ» ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ | «ԱՐՑԱԽ ՀԷԿ» ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ |
| Անվանում | Անվանում |
| 2472300356740010 | 223004081160 |
| Արդշինհնվեստ Բանկ | Արցախյան |
| Բանկային վավերապայմաններ | Բանկային վավերապայմաններ |
| Արամ Կալֆաջյան | Վալերի Դառուբյուրյան |
| Գլխավոր տնօրեն | Գլխավոր տնօրեն |
|  |  |

Պ Ա Յ Մ Ա Ն Ա Գ Ի Ր

ՏԵՂԱԲԱՇԽՄԱՆ ԽՄԲԻ ԱՏԵՂԾՄԱՆ

ք. Երևան

09 ապրիլի 2009թ.

«ԱՐՄԵՆԲՐՈԿ» ԲԲԸ (այսուհետ՝ Գլխավոր տեղաբաշխող), ի դեմս գլխավոր տնօրեն Արամ Կայֆաջյանի, որը գործում է ընկերության կանոնադրության և «ԱՐՄԵՆԲՐՈԿ» ԲԲԸ և «ԱՐՑԱԽ ՀԷԿ» ԲԲԸ միջև 26.11.2008թ. կնքված արժեթղթերի չերաշխավորված տեղաբաշխման պայմանագրի հիման վրա, մի կողմից և

«ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ (այսուհետ՝ Տեղաբաշխման խմբի անդամ), ի դեմս գործադիր տնօրեն Գևորգ Մաչանյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից,

կնքեցին սույն պայմանագիրը:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.5 Սույն պայմանագրով Գլխավոր տեղաբաշխողը և Տեղաբաշխման խմբի անդամը ստեղծում են «ԱՐՑԱԽ ՀԷԿ» ԲԲԸ (այսուհետ՝ Թողարկող) կողմից թողարկված բաժնետոմսերի հրապարակային տեղաբաշխման խումբ, որի գործունեության նպատակն է ապահովել Թողարկողի բաժնետոմսերի տեղաբաշխումը:

1.6 Տեղաբաշխման խումբը իրականացնում է Թողարկողի թողարկված բաժնետոմսերի հրապարակային տեղաբաշխման գործընթացը (տեղաբաշխվող արժեթղթերի մասին տեղեկությունները բերված են հավելվածում) բաժնետոմսերի թողարկման ազդագրով սահմանված կարգով:

1.7 Տեղաբաշխման խմբի անդամը կրում է իր տեղաբաշխած բաժնետոմսերի մասով սույն պայմանագրով սահմանված իրավունքներն ու պարտականությունները: Եթե Թողարկողը որևէ պահանջ է ներկայացնում Գլխավոր տեղաբաշխողին Տեղաբաշխման խմբի անդամի կողմից տեղաբաշխված բաժնետոմսերի վերաբերյալ, ապա Գլխավոր տեղա-

բաշխողը պահանջը ստանալուց մեկօրյա ժամկետում տրամադրում է Տեղաբաշխման խմբի անդամին:

- 1.8 Սույն պայմանագրի իմաստով տեղաբաշխման իրականացման ծառայություններ են հանդիսանում՝
- 8) Թողարկված բաժնետոմսերի հրապարակային տեղաբաշխման իրականացումը,
 - 9) Տեղաբաշխման ընթացքում համապատասխան արժեթղթեր ձեռքբերողներին աջակցության ցուցաբերումը, արժեթղթերի նկատմամբ սեփականության իրավունքի գրանցման գործընթացում անհրաժեշտ տեղեկատվության տրամադրումը,
 - 10) Օրենքով և սույն պայմանագրով նախատեսված Տեղաբաշխողին վերաբերող այլ գործողությունները:
- 1.9 Տեղաբաշխման խմբի անդամը բաժնետոմսերի հրապարակային տեղաբաշխումն իրականացնում է ներդրողներ ներգրավելու միջոցով, որի համար ստանում է միջնորդավճար՝ սույն պայմանագրի 3.1. կետով սահմանված չափով:

4. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

6.13. Գլխավոր տեղաբաշխողը պարտավոր է՝

- 6.13.1. Տեղաբաշխման գործընթացի շրջանակներում կատարել սույն պայմանագրով և ՀՀ օրենսդրությամբ սահմանված իր պարտավորությունները:
- 6.13.2. Տրամադրել Տեղաբաշխման խմբի անդամին սույն պայմանագրի առարկային վերաբերող, գաղտնիք չհամարվող անհրաժեշտ բոլոր տեղեկությունները:
- 6.13.3. Տեղաբաշխած բաժնետոմսերի դիմաց Տեղաբաշխման խմբի անդամին վճարել սույն պայմանագրին 3.1. կետում նշված միջնորդավճարը՝ սույն պայմանագրով սահմանված կարգով և պայմաններով:
- 6.13.4. Տեղաբաշխման խմբի անդամի պահանջով նույն օրվա ընթացքում նրան տրամադրել չտեղաբաշխված բաժնետոմսերի քանակի վերաբերյալ տեղեկություններ:
- 6.13.5. Տեղաբաշխման խմբի անդամից ընդունել բաժնետոմսերի բաժանողագրման հայտերը, ամփոփել և իրականացնել վերջնահաշվարկ:

6.13.6. Սույն պայմանագրով իր ստանձնած պարտավորությունների կատարմանը խոչընդոտող անհաղթահարելի ուժի ազդեցության ի հայտ գալու դեպքում անհապաղ տեղեկացնել այդ մասին Տեղաբաշխման խմբի անդամին:

6.14. Տեղաբաշխման խմբի անդամը պարտավոր է՝

- 6.14.1. Տեղաբաշխման գործընթացի շրջանակներում կատարել սույն պայմանագրով և ՀՀ օրենսդրությամբ սահմանված իր պարտավորությունները:
- 6.14.2. Պոտենցիալ գնորդների պահանջով նրանց անվճար տրամադրել բաժնետոմսերի թողարկման ազդագրի տպագիր կամ էլեկտրոնային տարբերակը:
- 6.14.3. Գլխավոր տեղաբաշխողին ներկայացնել ներդրողների կողմից ներկայացված բաժանորդագրության հայտերը և այլ անհրաժեշտ փաստաթղթեր՝ սույն պայմանագրով սահմանված կարգով և ժամկետներում:
- 6.14.4. Սույն պայմանագրի շրջանակներում գործել բարեխիղճ, ելնելով Թողարկողի և ներդրողների շահերից:
- 6.14.5. Սույն պայմանագրով իր ստանձնած պարտավորությունների կատարմանը խոչընդոտող անհաղթահարելի ուժի ազդեցության ի հայտ գալու դեպքում անհապաղ տեղեկացնել այդ մասին Գլխավոր տեղաբաշխողին:

6.15. Գլխավոր տեղաբաշխողն իրավունք ունի՝

- 6.15.1. Տեղաբաշխման խմբի անդամից պահանջել սույն պայմանագրով վերջինիս ստանձնած պարտավորությունների կատարումը:
- 6.15.2. Ստուգել բաժնետոմսերի բաժանորդագրման հայտերից և բաժնետոմսերի վաճառքի և (կամ) ձեռք բերման հաստատումից բխող պարտավորությունների կատարման ընթացքը և Տեղաբաշխման խմբի անդամից պահանջել անհրաժեշտ մանրամասնություններ:

6.16. Տեղաբաշխման խմբի անդամն իրավունք ունի՝

- 6.16.1. Գլխավոր տեղաբաշխողից պահանջել սույն պայմանագրով վերջինիս ստանձնած պարտավորությունների կատարումը:

- 6.16.2. Մասնակցել բաժնետոմսերի տեղաբաշխմանը՝ սույն պայմանագրով սահմանված կարգով և պայմաններով:
- 6.16.3. Բաժնետոմսերի տեղաբաշխման ընթացքում Գլխավոր տեղաբաշխողից ստանալ չտեղաբաշխված բաժնետոմսերի վերաբերյալ տեղեկություններ:
- 6.16.4. Գլխավոր տեղաբաշխողից ստանալ սույն պայմանագրի առարկային վերաբերող, գաղտնիք չհամարվող անհրաժեշտ բոլոր տեղեկությունները:
- 6.16.5. Սույն պայմանագրով սահմանված կարգով և պայմաններով ստանալ իր կողմից կատարված աշխատանքների համար վարձատրություն:
- 6.16.6. Հրաժարվել սույն պայմանագրից բխող պարտականությունների կատարումից, եթե Թողարկողի կողմից փոխվի սույն պայմանագրի հավելվածում նշված տեղեկություններից թեկուզ մեկը:

7. ՀԱՇՎԱՐԿՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

- 7.1. Գլխավոր տեղաբաշխողը Տեղաբաշխման խմբի անդամին իր տեղաբաշխած բաժնետոմսերի դիմաց վճարում է միջնորդավճար տեղաբաշխման ծավալի 1.8 տոկոսի չափով:
- 7.2. Տեղաբաշխման խմբի անդամի կողմից բաժնետոմսերի տեղաբաշխման դեպքում բաժանորդագրության հայտը լրացվելուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում այն ներկայացվում է Գլխավոր տեղաբաշխողին: Հայտը ստանալուց հետո Գլխավոր տեղաբաշխողի նշած բանկային հաշվին հայտում նշված գումարը փոխանցվելուց հետո տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում Գլխավոր տեղաբաշխողը Տեղաբաշխման խմբի անդամին է փոխանցում սույն պայմանագրի 3.1. կետում նշված միջնորդավճարը:
- 7.3. Բաժնետոմսեր ձեռքբերողը վճարումը կատարում է Գլխավոր տեղաբաշխողի հետևյալ բանկային հաշվներից որևէ մեկին փոխանցելու միջոցով.
- | | |
|------------------------|----------------------|
| «Արդշինինվեստբանկ» ՓԲԸ | h/h 2472300356740040 |
| «Արցախբանկ» ՓԲԸ | h/h 223005000169 |
- 7.4. Վաճառված արժեթղթերի գրանցման և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարումները կատարվում են Թողարկողի կողմից:

8. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

- 8.1. Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության արդյունք, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 /երեք/ ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

9. ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳԸ

- 9.1. Սույն պայմանագրի 3.2. կետում նշված պարտավորությունը սահմանված ժամկետում չկատարելու դեպքում Գլխավոր տեղաբաշխողը Տեղաբաշխման խմբի անդամին վճարում է տույժ ուշացված յուրաքանչյուր օրվա համար վճարման ենթակա գումարի 0.05 տոկոսի չափով՝ սկսած ուշացման երրորդ օրվանից:
- 9.2. Սույն պայմանագրի 5.1. կետում նշված տուգանքը կողմերի համաձայնությամբ կարող է չկիրառվել:
- 9.3. Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնության չգալու դեպքում վեճերի լուծումը իրականացվում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

10. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

- 10.1. Սույն պայմանագրում ցանկացած փոփոխություն և լրացում վավեր է այն պայմանով, եթե դա կատարված է գրավոր և ստորագրված կողմերի լիազոր ներկայացուցիչների կողմից:
- 10.2. Սույն պայմանագրի կողմերի միջև փոխանցվող և այլ կերպ հայտնի դարձած հրապարակային չհամարվող տեղեկությունները հանդիսանում են գաղտնի և ենթակա չեն հրապարակման:
- 10.3. Սույնով կողմերը հաստատում են, որ իրար հետ փոխկապակցված չեն:
- 10.4. Սույն պայմանագրով կողմերի միջև կապը իրականացվում է պայմանագրի 7-րդ բաժնում նշված կապի միջոցներով, որոնք հանդիսանում են տեղեկատվության փոխանակման հուսալի միջոցներ:
- 10.5. Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում երկկողմանի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պարտավորությունների կատարումը՝ կատարողական ակտի կազմմամբ:
- 10.6. Սույն պայմանագիրը հանդիսանում է կողմերի միջև կայացած ամբողջական պայմանավորվածությունը և գերակայում է սույն պայմանագրի առարկայի շուրջ կողմերի նախորդ բոլոր պայմանավորվածությունների նկատմամբ:
- 10.7. Սույն պայմանագիրը կարող է լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ, կամ միակողմանիորեն՝ առնվազն 10 օր առաջ ուղարկված գրավոր պահանջով: Պայմանագիրը լուծելուց հետո՝ մեկ աշխատանքային օրվա ընթացքում Տեղաբաշխման խմբի անդամը պարտավոր է Գլխավոր տեղաբաշխողին փոխանցել տվյալ պահի դրությամբ չփոխացված բաժանորդագրության հայտերը:
- 10.8. Սույն պայմանագիրը կազմված է հավասարազոր իրավաբանական ուժ ունեցող երկու օրինակից: Յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկական օրինակ:

11. ԿՈՂՄԵՐԻ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ

| ԳԼԽԱՎՈՐ ՏԵՂԱԲԱՇԽՈՂ | ՏԵՂԱԲԱՇԽՄԱՆ ԽՄԲԻ ԱՆԴԱՄ |
|--|--|
| <p>«ԱՐՄԵՆԲՐՈԿ» ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ <i>Անվանում</i></p> | <p>«ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ <i>Անվանում</i></p> |

| | |
|--|--|
| ՀՀ, ք. Երևան, Տիգրան Մեծի 32/1 շ., թիվ 8 տարածք | ՀՀ, ք. Երևան, Խանջյան 13/2 |
| Հասցե | Հասցե |
| +37410 538700 +37410 528986 armenbrok@armenbrok.com | +37410 584419 +37410 529593 info@armswissbank.am |
| Հեռ., հեռ./ֆաքս, էլ. փոստ | Հեռ., հեռ./ֆաքս |
| 2472300356740010 Արդշինհնվեստբանկ | 103002102509 ՀՀ ԿԲ |
| Բանկային վավերապայմաններ | Բանկային վավերապայմաններ |
| 00450096 | 02574955 |
| ՀՎՀՀ | ՀՎՀՀ |
| ՆԸ 0010 | N 84 |
| Լիցենզիա համար | Լիցենզիա համար |
| Արամ Կայֆաջյան | Գևորգ Մաշանյան |
| Գլխավոր տնօրեն | Գործադիր տնօրեն |
| Կ.Տ.  | Կ.Տ.  |



Հավելված

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՏԵՂԱԲԱՇԽՎՈՂ ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՄԱՍԻՆ

| | | |
|------|---|---|
| (11) | Արժեթղթի դասը, տեսակը | Հասարակ անվանական բաժնետոմս |
| (12) | Արժեթղթի ձևը | Ոչ փաստաթղթային |
| (13) | Թողարկվող արժեթղթերի ծավալը | 3,450,000,750 ՀՀ դրամ |
| (14) | Թողարկվող արժեթղթերի քանակը | 3,285,715 հատ |
| (15) | Մեկ արժեթղթի անվանական արժեքը | 1,000 ՀՀ դրամ |
| (16) | Մեկ արժեթղթի տեղաբաշխման գինը | 1,050 ՀՀ դրամ |
| (17) | Տեղաբաշխման ձևը | Հրապարակային |
| (18) | Տեղաբաշխման եղանակը | Լավագույն ջանքերի գործադրմամբ / Չերաշխավորված |
| (19) | Տվյալ թողարկման հերթական համարը | 01 (առաջին) |
| (20) | Տեղաբաշխողի միջնորդավճարը (% տեղաբաշխման ծավալից) | 2% |



**ԱՐԺԵԹՂԹԵՐԻ (ՀԱՍԱՐԱԿ ԱՆՎԱՆԱԿԱՆ ԲԱԺՆԵՏՈՄՍԵՐԻ) ՍԵՓԱԿԱՆԱՏԵՐԵՐԻ
(ԱՆՎԱՆԱՏԵՐԵՐԻ) ՈՒՇԵՍՏՐԻ ՎԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ**

Ք. Երևան

«14» Նոյեմբերի 2008թ.

«ԱՐՑԱՄԻ ՀԷԿ» ԲԲԸ -ն /այսուհետ՝ Պատվիրատու/, ի դեմս գլխավոր տնօրեն **Վալերի Հարությունյանի**, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, մի կողմից, և **«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԴԵՊՈԶԻՏԱՐԻԱ» ԲԲԸ**-ն, /այսուհետ՝ Կատարող/, ի դեմս տնօրեն **Վահան Ստեփանյանի**, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Սույն պայմանագրով Կատարողը պարտավորվում է Պատվիրատուի հանձնարարությամբ մատուցել ՀՀ օրենսդրությամբ և «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԴԵՊՈԶԻՏԱՐԻԱ» ԲԲԸ կանոններով նախատեսված ծառայությունները /այսուհետ՝ Ծառայություններ/, իսկ Պատվիրատուն պարտավորվում է վճարել մատուցվող Ծառայությունների գինը:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1. Կատարողը պարտավոր է.

2.1.1. Ծառայությունները մատուցել պատշաճ որակով.

2.1.2. Ծառայությունները մատուցել ամբողջ ծավալով, ՀՀ կենտրոնական բանկում գրանցված «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԴԵՊՈԶԻՏԱՐԻԱ» ԲԲԸ-ի կանոններով սահմանված ժամկետում և կարգով.

2.1.3. օրենքով սահմանված կարգով ուժի մեջ մտնելուց հետո եռօրյա ժամկետում Պատվիրատուին տեղեկացնել «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԴԵՊՈԶԻՏԱՐԻԱ» ԲԲԸ-ի այն կանոնների մեջ կատարվող փոփոխությունների մասին, որոնք վերաբերվում են սույն պայմանագրով մատուցվող Ծառայությունների մատուցման ժամկետներին, կարգին և գնին: Սույն կետի իմաստով պատշաճ տեղեկացում է համարվում համապատասխան տեղեկությունները Կատարողի պաշտոնական www.cda.am ինտերնետային կայքում գետեղելը:

2.2. Պատվիրատուն պարտավոր է.

2.2.1. Կատարողին տեղեկացնել արժեթղթերի սեփականատերերի վերաբերյալ ՀՀ օրենսդրությամբ սահմանված տվյալների, անճշտությունների, լրացումների մասին և տրամադրել դրանց վերաբերյալ համապատասխան փաստաթղթեր.

2.2.2. մատուցված Ծառայությունների դիմաց վճարել սույն պայմանագրի 3.1-րդ կետում նշված գինը:

2.3. Կատարողն իրավունք ունի.

2.3.1. հրաժարվել սույն պայմանագրով նախատեսված իր պարտավորությունների կատարումից, եթե Թողարկողի կողմից խախտվել են սույն պայմանագրի 3-րդ կետի պահանջները:

2.4. Պատվիրատուն իրավունք ունի.

2.4.1. Կատարողից պահանջել սույն պայմանագրով նախատեսված Ծառայությունների ժամանակին և լրիվ ծավալով մատուցում:

3. ՄԱՏՈՒՑՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1. Պատվիրատուն Կատարողի կողմից մատուցված /մատուցվող/ Ծառայությունների համար վճարումները կատարում է ՀՀ կենտրոնական բանկում գրանցված «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԴԵՊՈԶԻՏԱՐԻԱ» ԲԲԸ-ի «Սակագների մասին» կանոններով սահմանված սակագներին համապատասխան, դրանով սահմանված կարգով ու ժամկետներում: «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԴԵՊՈԶԻՏԱՐԻԱ» ԲԲԸ-ի «Սակագների մասին» կանոնները գետեղված են Կատարողի պաշտոնական ինտերնետային կայքում՝ www.cda.am հասցեում :

3.2. Սույն պայմանագրի 3.1 կետով սահմանված վճարումները ուշացնելու դեպքում Պատվիրատուն վճարում է «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԴԵՊՈԶԻՏԱՐԻԱ» ԲԲԸ-ի «Սակագների մասին» կանոններով սահմանված տույժ՝ ուշացման յուրաքանչյուր օրվա համար վճարման ենթակա գումարի 0,15 տոկոսի չափով:

4. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

4.1. Պատվիրատուն ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով պատասխանատվություն է կրում Կատարողին տրամադրված տվյալների հավաստիության համար:

4.2. Կատարողը պատասխանատվություն չի կրում ռեեստրի հետ կապված գործողությունների իրականացման հետևանքով Պատվիրատուի կամ արժեթղթ(եր)ի սեփականատիրոջ կրած վնասների համար, եթե նշված գործողությունները կատարվել են վերջիններիս հանձնարարականների հիման վրա:

4.3. Կատարողը պատասխանատվություն չի կրում մինչև սույն պայմանագրի կնքումը

Պատվիրատուի ռեեստրը վարող անձանց գործողությունների և իրեն ներկայացված

փաստաթղթերի հավաստիության համար, որի պատասխանատվությունը կրում է Պատվիրատուն :

4.4. Եթե Կատարողը չի կատարել կամ ոչ պատշաճ կերպով է կատարել սույն պայմանագրով ստանձնած իր պարտականությունները, ապա նա Պատվիրատուի և նրա սեփականատերերի առջև պատասխանատվություն է կրում նրանց պատճառված վնասների համար, եթե դրանք առաջացել են Կատարողի մեղքով:

4.5. Սույն պայմանագրով սահմանված պարտականությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում կողմերը ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել:

5. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ

5.1. Կատարողն իր պարտականությունների կատարմանը ձեռնամուխ է լինում սույն պայմանագիրը կնքելու հաջորդ օրվանից:

5.2. Պայմանագիրը գործում է անորոշ ժամկետով և կարող է լուծվել միայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքով, այլ օրենքներով ու իրավական ակտերով սահմանված կարգով :

6. ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԳԱՂՏՆԻՈՒԹՅՈՒՆԸ

6.1. Կատարողի մոտ սույն պայմանագրի համաձայն պահպանվող տեղեկատվությունը հանդիսանում է Պատվիրատուի սեփականությունը:

6.2. Կատարողը պարտավոր է պահպանել նշված տեղեկատվության գաղտնիությունը և իրավունք ունի այն տրամադրել երրորդ անձանց միայն ՀՀ օրենսդրությամբ նախատեսված դեպքերում և կարգով:

6.3. Կատարողն իրավունք չունի նշված տեղեկատվությունը ծառայեցնել սեփական նպատակներին:

6.4. Կատարողը պատասխանատվություն է կրում նշված տեղեկատվության տարածման կամ օգտագործման համար՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

7. ԾԱՆՈՒՑԱԳԻՐԵՐ

7.1. Պայմանագրի կողմերի միջև ծանուցումները և հաղորդագրությունները պետք է ձևակերպված լինեն գրավոր, ստորագրված իրավասու անձանց կողմից և կնքված ընկերության կնիքով (առկայության դեպքում), հանձնված անձնապես (ուղարկողի օրինակի վրա ստացողի կողմից ստանալու վերաբերյալ նշում կատարելով), ուղարկված ֆաքսի կամ էլեկտրոնային փոստի միջոցով (ստանալու վերաբերյալ ֆաքսի կամ էլեկտրոնային փոստի միջոցով ուղարկողին տեղյակ պահելով) կամ ուղարկված «Փաստաթղթերի հատուկ առաքման մասին» ՀՀ օրենքին համապատասխան:

8. ԱՅԼ ԴՐՈՒՅԹՆԵՐ

8.1. Սույն պայմանագրում փոփոխություններ կամ լրացումներ կարող են կատարվել միայն կողմերի համաձայնությամբ՝ գրավոր ձևով:

8.2. Սույն պայմանագրի կողմը իրավունք ունի այլ անձի փոխանցել սույն պայմանագրով սահմանված իր իրավունքներն ու պարտավորությունները միայն մյուս կողմի գրավոր համաձայնությամբ, եթե ՀՀ օրենքներով և այլ իրավական ակտերով այլ բան սահմանված չէ:

8.3. Սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների վերաբերյալ կողմերի միջև ծագած վեճերը լուծվում են ՀՀ օրենսդրությամբ նախատեսված կարգով:

8.4. Սույն պայմանագիրը կնքվում է հայերեն լեզվով՝ երկու հավասարազոր օրինակից՝ յուրաքանչյուր կողմի համար մեկ օրինակ:

8.5. Պայմանագրի կողմերի լիազորված անձանց տվյալները կցված են սույն պայմանագրին և հանդիսանում են դրա անբաժանելի մասը :

8.6. Պատվիրատուն սույն պայմանագիրը կնքելուց առաջ ծանոթացել է ՀՀ կենտրոնական բանկում գրանցված «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԴԵՊՈԶԻՏԱՐԻԱ» ԲԲԸ -ի կանոններին և անհրաժեշտ այլ նորմատիվ իրավական ակտերին:

Պատվիրատու

Կատարող

հասցե՝ ԼՂՀ,ք.Ստեփանակերտ,
փ.Ա.Առաքելյան թիվ 10
«ԱՐՑԱԽԲԱՆԿ» ՓԲԸ
Հ/Հ 223004081160
հեռ.՝ (0479) 4-28-58

ք.Երևան, Մ. Սկրտչյան 5բ
«Հայրիզնեսբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1150000517850100
հեռ. 54-33-21 (125)



5.7. Ընկերության Ֆինանսական Հաշվետվությունները

5.7.1. Ընկերության 2007թ. տարեկան ֆինանսական հաշվետվությունները

5.7.2. Ընկերության 2008թ. երրորդ եռամսյակի ֆինանսական հաշվետվությունները

Ձև N 1

ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԵԿՇԻՌ

առ 31/12/2007
(ամսաթիվ, ամիս, տարի)

Ծածկագիրը

| | | | |
|--|-----------------------------------|----------|-------------------|
| Կազմակերպության անվանումը | «Արցախ ՀԷԿ» ԲԲԸ | | |
| Փաստացի գործունեության հիմնական երկու տեսակները | Էլեկտրաէներգիայի արտադրություն | | |
| Պետական ռեզիստորում գրանցման համարը | | | 443.130.11407 |
| Հարկ վճարողի հաշվառման համարը | | | 90025315 |
| Չափի միավորը | | | Մեկ հազար ՀՀ դրամ |
| Գտնվելու վայրը | Լ.Ղ.Հ ք. Ստեփանակերտ Առաքելյան 10 | հեռախոսը | 7942858 |
| Փաստացի գործունեության իրականացման վայրը | Լ.Ղ.Հ ք. Ստեփանակերտ Առաքելյան 10 | հեռախոսը | 7942858 |

| ԱԿՏԻՎ | տող | Նախորդ տարվա վերջին | Հաշվետու տարվա (ժամանակաշրջանի) վերջին |
|--|------------|---------------------|--|
| 1 | 2 | 3 | 4 |
| I. Ոչ ընթացիկ ակտիվներ | | | |
| Հիմնական միջոցներ | 010 | 47,347 | 34,774 |
| Անավարտ ոչ ընթացիկ նյութական ակտիվներ | 020 | | |
| Ոչ նյութական ակտիվներ | 030 | 1,280 | |
| Բաժնեմասնակցության մեթոդով հաշվառվող ներդրումներ | 040 | | |
| Այլ ոչ ընթացիկ ֆինանսական ակտիվներ | 050 | | |
| Հետաձգված հարկային ակտիվներ | 060 | | |
| Այլ ոչ ընթացիկ ակտիվներ, այդ թվում՝ | 070 | | |
| | 071 | | |
| | 072 | | |
| | 073 | | |
| | 074 | | |
| Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ | 080 | 48,627 | 34,774 |
| II. Ընթացիկ ակտիվներ | | | |
| Նյութեր | 090 | 5,842 | 1,961 |
| Աճեցվող և բտվող կենդանիներ | 100 | | |
| Արագամաշ առարկաներ | 110 | 5 | 5 |
| Անավարտ արտադրություն | 120 | | |
| Արտադրանք | 130 | | |
| Ապրանքներ | 140 | | |
| Տրված ընթացիկ կանխավճարներ | 150 | | 6,455 |
| Դեբիտորական պարտքեր վաճառքների գծով | 160 | | 927 |
| Կարճաժամկետ դեբիտորական պարտքեր բյուջեի գծով | 170 | | |
| Այլ դեբիտորական պարտքեր | 180 | | |
| Ընթացիկ ֆինանսական ներդրումներ | 190 | | |
| Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ | 200 | 3 | 5,822 |
| Այլ ընթացիկ ակտիվներ, այդ թվում՝ | 210 | | 416 |
| Հետաձգված ԱԱՀ | 211 | | 416 |
| | 212 | | |
| Ընդամենը ընթացիկ ակտիվներ | 220 | 5,850 | 15,586 |
| Հ Ա Շ Վ Ե Կ Ց Ի Ռ | | | |
| | 230 | 54,477 | 50,360 |

| ՊԱՍԻՎ | տող | Նախորդ տարվա վերջին | Հաշվետու տարվա (ժամանակաշրջանի) վերջին |
|--|------------|---------------------|--|
| 1 | 2 | 3 | 4 |
| III. Սեփական կապիտալ | | | |
| Կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալի գուտ գումար | 240 | 36,083 | 36,083 |
| Էմիսիոն եկամուտ | 250 | | |
| Վերագնահատումից և վերաչափումից տարբերություններ | 260 | | |
| Կուտակված շահույթ | 270 | | 3'230 |
| Պահուստային կապիտալ | 280 | | |
| Սեփական կապիտալի այլ տարրեր, այդ թվում՝ | 290 | | |
| | 291 | | |
| Ընդամենը սեփական կապիտալ | 300 | 36,083 | 39,313 |
| IV. Ոչ ընթացիկ պարտավորություններ | | | |
| Երկարաժամկետ բանկային վարկեր և փոխառություններ | 310 | | |
| Հետաձգված հարկային պարտավորություններ | 320 | | |
| Ակտիվներին վերաբերող շնորհներ | 330 | 18,394 | |
| Ոչ ընթացիկ պահուստներ | 340 | | |
| Այլ ոչ ընթացիկ պարտավորություններ, այդ թվում՝ | 350 | | |
| | 351 | | |
| Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ | 360 | 18,394 | |
| V. Ընթացիկ պարտավորություններ | | | |
| Կարճաժամկետ բանկային վարկեր | 370 | | |
| Կարճաժամկետ փոխառություններ | 380 | | |
| Կրեդիտորական պարտքեր գնումների գծով | 390 | | 2,623 |
| Ստացված ընթացիկ կանխավճարներ | 400 | | |
| Կարճաժամկետ կրեդիտորական պարտքեր բյուջեին | 410 | | 6,363 |
| Կարճաժամկետ կրեդիտորական պարտքեր պարտադիր սոցիալական | 420 | | 944 |
| Կրեդիտորական պարտքեր աշխատավարձի և աշխատակիցների այլ | 430 | | 1,117 |
